



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

U616F

✓ 49.50



$$\frac{\pi}{53} \cdot 2$$

$$N^{\frac{3}{XV}}$$

2 0 02

ՍԵՐԵՔ

50

ՅԻՍՈՒՍԻ

ՎԵՐԶԻՆ ՇԱՐԱԹ

ԽԱՉԻ ՃԱՌ

ԵՒ

ԿՈՐՈՒՍԵԼՈՅ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ



ՀՈԳԵԳՐԵՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՆՈՒԷՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՈՒԽՏԻՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

1887



1191

ՅԻՇԱՏԱԿ  
ԵՂԲՕՐՈՐԴԻՈՅՆ

ԱՌ ՀՕՐԵՂԲԱՅՐ ԻԻՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԽՐԻՄԵԱՆ

ՈՐ Ի ՏԵՐ ՆԵՋԵՐ Է



ԽԱՉԻ ՃԱՌԻ քո յիշատակին կը նուիրեմ,  
ո՛վ հանգուցեալ Հոգի, զի պարտական եմ ես  
քեզ. յիսուն տարի կը լինի որ մեր աշխար-  
հէն՝ յաւիտեանական աշխարհ գնացեր ես. այլ  
քո անուն և յիշատակ մանուկ Մկրտչի հոգ-  
ւոյն ու սրտին մէջ անեղծ պահեր եմ:

Չեմ մոռնար<sup>4</sup>, այլ կը յիշեմ մանկութեանս  
զարնան քաղցր օրերը, երբ միմիայն մանուկ  
Մկրտիչ քո սիրոյ ծաղիկն էր: Սորա համար  
ես մուցած էի ծնողք և բոլոր Խրիմեան  
զերդաստանի մերձաւորներ. զի դու էիր ինձ  
համար, հայր, մայր, դաստիարակ, վարժա-  
պետ, խնամածու և այլն: Ամուրի կեանք

(10061-57)

50-2001

1850.



ընտրեցիր ու սիրեցիր . որպէս զի քո սիրեցեալ Նղբօրորդին որդեգրես քեզ :

Դու մեռար , դեռ ողջ էին ծնողքս և երիցադոյն եղբայրս . բայց ես յայնժամ զգացի թէ՛ սիրոյ և դատարարակութեան գրկէն որբացած եմ : Ոչինչ մեծ ժառանգութիւն աշխարհին հարստութենէն չթողիր քո հոգեհատոր մանուկ Մկրտչին . ոչ ոսկի , ոչ արծաթ . այլ մի Աստուածաշունչ և մեր Սուրբ նախնեաց մի քանի մատեաններ . զորս յաճախ կարդալ տալով՝ ընտանի լեզուով կը բացատրէիր ինձ :

Այլ քան զամէն աւելի գործնական օրինակովք Աւետարանի գլխաւորութեան հոգին թողիր ինձ ժառանգութիւն : Երանի՛ թէ տիրապէս ժառանգէի զայն . բարեգործով մի սիրտ ունէիր և անխորապէս կը գթայիր ամէն տառապեալ թշուառին վերայ : Երբ աղքատ դուռը դիէիր , կը կանչէիր , Մկրտի՛չ , հաց տուր , և երբ մերկ լինէր աղաչաւոր թշուառ , հրաման կ'անէիր որ մի քանի կանգուն կտաւ տամ :

Արթուն աչքով կը հսկէիր , և ոչ փոքրիկ սպաւառութեանս կը ներէիր դու : Կը յիշեմ ,

որ մի օր ժամու սպառկերի առջեւէն մի փոքրիկ մոմ՝ առնելով բերի տունը . հարցուցիր և ես առանց ժխտելու խոստովանեցայ . հետեւեալ օր զիս տարիր եկեղեցին և նոյն մոմ խաչի սպառկերի առաջ վառել տուիր , և քաղցրութեամբ խրատեցիր որ այլ եւս սեղանակապուտ չըլլինիմ :

Յանր հիւանդացայ մի նուագ , քառասուն օր ամբողջ գլխուս վերայ կեցար , ամէն ճար և դարման կը հայթայթէիր , և մերթ եւս կ'երթայիր եկեղեցին , լալով կը պաղատէիր Աստուծոյ որ ապրի մանուկ Մկրտիչ :


Ապրեցայ քո հաւատով , և դեռ կ'ապրիմ Աստուծոյ նախախնամութեամբ , վաթսուն և վեցերորդ տարին լրացուցի : Եւ դու եւս , եթէ ճիշդ կը յիշեմ , այնչափ տարի ապրեցար ու մեռար :

Ես քո խօսուն գառնուկն էի . բայց դու մի անխօսուն գառնուկ եւս ունէիր , զոր ամբողջ Եօթն տարի սահեցիր . ուր երթայիր քո ետեւէն կուգար , երբէք չէր բաժանուեր : Ո՛հ , մահուանդ օր սյգ գառնուկ մորթեցին և հոգւոյդ համար ճաշ տուին աղքատներուն :

Այժմ՝ մանուկ Մկրտիչ ծերացած ՀԱՅՐԻԿ



եղեր է, ես էլ պիտի դամ հասնիմ քեզ. սա-  
կայն դու հոգւովդ մօտ ես կենաց աղբիւրին  
ազօթէ որդեգրիդ համար, դեռ անվճար  
պարտք ունիմ առ Աւետարան, առ Ազգն և  
Նկեղեցին, պարտքերս վճարեմ և ապա  
մեռնիմ:



## Յ Ո Ր Դ Ո Ր

ԱՌ

ԻՄ ՊԱՇՏՈՆԱԿԻՅ ԵՂԲԱՐՍ

ԵԻ

ԽԱԶԱԿԻՐ ՌԻՍՏՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՅԻՍՈՒՍԻ ԽԱԶԻՆ ՃԱՌԸ Զեզ համար գը-  
րեցի և Զեզ կը նուիրեմ, ո՛վ խաչին զինուոր-  
ներ, Աւետարանի պաշտօնեայներ, կենաց  
բան քարոզողներ և Քրիստոսի հօտին հովիւ-  
ներ. դուք եթէ սիրով կը գրկէք Յիսուսի  
խաչը և ախորժանօք կ'ընթեռնուք իմ խա-  
չին ճառը. ո՛ն ուրեմն, հոգւով հետ ինձ ե-  
կէք, երթանք ելնենք Սիօնի վերնատուն-  
ուր Աւետարանին ուսուցիչ երկնից Վարդա-  
պետն կը խոնարհի մինչեւ աշակերտաց ոտքը,  
կենդանի և գործնական օրինակ կ'աւանդէ  
մեզ և կ'ապէ. «Օրինակ մի ետու ձեզ. զի  
և դուք զնոյն առնիջիք»:

Ո՛հ, քանի՞ մեղապարտ եմք այս օրինա-



կին առաջ երբ կը բարձրամտիմք, երբ վառասիրութեան ախտով կ'ախտանամք. թողումք Յիսուսին չափ խոնարհիլ և ընկերին ոտքը լուանալ՝ մեք զմեր ընկեր կ'ոտնհաբեմք և կը ջանամք տիրելով ստրկացուցանել Աւետարանի ազատ պաշտօնեայները:

Մտիկ արէք, ո՛վ դուք, սէր քարոզող վարդապետներ, Սէրն, զսէր՝ կ'աւանդէ, երկնախօս վարժապետ սիրոյ դասեր կ'ուսուցանէ. և քանի՞ խնամով կը կրկնէ. «Այս է պատուէրն իմ զի սիրեսձիք զմիմեանս»:

Աւա՛ղ մեզ, ուշամուսաց եղանք. հազար ութ հարիւր տարի է այս դասերն Աւետարանը մեզ կ'աւանդէ. և մեք կը կարդամք ժողովուրդին. տակաւին ոչ մեք սորվեցանք՝ ոչ ժողովուրդ հասկցաւ. սիրոյ դասը թողինք՝ յատելութիւն կրթեցինք զմեզ, սիրոյ կտակը տուինք՝ բանասարկուին նախանձն առինք, սէրը կորուսինք՝ և գրգռիչ թշնամութիւնը գտանք: Այլ եւս ի մէնջ ո՛վ կը համարձակի սէր քարոզել ժողովուրդին. երբ սիրոյ ճառախօս վարդապետներս՝ սիրել չը գիտեմք, հետ միմեանց ատելութեամբ կը վարիմք. և ի՞նչ մնաց, որ խաչն ու Աւետա-

րանը մեր գրիէն թողումք, և սուր առնելով՝ միմեանց կողը մխեմք:

Միտ դրէք, Յիսուս խաղաղութիւն կուտայ, որ արդէն երանի տուած էր խաղաղարար ոգիներուն. մեք եւս եկեղեցւոյ բեմէն, պատարագի սեղանէն այդ խաղաղութիւնն յաճախ կուտամք ժողովուրդին՝ աջով և խաչով տեառնադրելով հանդերձ: Այլ ի՞նչ է ապա, որ մեր խաղաղութեան ուղոյն՝ խռովութիւն կը դառնայ: Դորա պատճառն ո՛վ չգիտեր. զի խաղաղութեան պաշտօնեայներն իրարու դէմ խռոված են. միթէ կարելի՞ է, որ խռովեալ ոգիները՝ խռովեցող խաղաղարար լինին: Այլ մեք ինչո՞ւ համար կը խռովիմք, այդ եւս ինքնին յայտնի է. կը խռովիմք վառասիրութեան համար, պաշտօնասիրութեան համար. կը խռովիմք Մովսիսի աթոռ նստելու և նախաթոռ լինելու համար: Աւետարանի և եկեղեցւոյ խոնարհ ոգին չճանչնալով՝ այնպէս կը կարծեմք, որ մեք եւս այս աշխարհիս թագն ու գաւազան ունիմք. պաշտօն և պաշտիլ կը պահանջեմք, չը յիշելով մեր հեղ վարդապետին խօսքը. «Որդի մարդոյ եկն ոչ պաշտօն առնուլ. այլ պաշտել և տալ զանձն փոխանակ բաղմաց»:



Երանի՛ թէ մեք միայն զմեզ խռովէինք  
և ժողովուրդն անխռով մնար. ո՛չ՝ մեք կը  
խռովիմք և շատ անգամ եւս անարդ միջոց-  
ներն ի գործ դնելով կը խռովեցուցանեմք.  
և մերթ եւս քանի՞ ամօթ մեզ, երբ ժողո-  
վուրդը՝ խաղաղարար կը լինի մեր մէջ, Աւե-  
տարանը մեր ձեռքէն առնելով՝ մեր պաշ-  
տօնն ի դերեւ կը հանէ:

Հապա, պաշտօնակից եղբարք իմ, սի-  
րենք, որ խաղաղ մնամք. առնումք մեք նախ  
Քրիստոսի սէրն ու խաղաղութիւնն, և ապա  
ժողովուրդին տամք:

Սիօնի վերնատունէն իջնամք Գեթսեմանի  
ձորը. տեսէք Աստուածորդւոյն տաքնապին  
ժամ. տեսէք թէ ի՞նչպէս քիրան իյարիւն  
կ'աղօթէ. ամենայօժար ոգւով կ'ընդու-  
մահուան դառնալի բաժակն, և կը խմէ զայն  
մեղապարտ մարդոյն փրկութեան համար:  
Եւ մեք, որ Յիսուսի հետեւող խաչակիրներ  
եմք՝ արդեօք այս բաժակէն մեզ բաժին չի  
կա՞յ. Այո՛, ամէն խաչակիր պաշտօնեայն՝ իւր  
բաժին ունի. մեք եւս գէթ մի մի կաթիլ  
խմեմք մեր ժողովուրդին փրկութեան համար:

Ելէք աստի, երթանք հետ Քրիստոսին  
դատաւորաց ատեանը, տեսէք քանի՞ հեզ է

մեր վարդապետ. դատաւորներ կ'որոտան,  
կայծակներ կը թափեն. նա անխռով կեցած  
է. վասն զի անմեղն միշտ անխռով է. Ժպիւրհ  
ծառայն ապտակ մի կը հանէ ահաւոր և լոյս  
երեսին. ընդ որ Մովսէս ծառայն միայն քարի  
ծերպէն կը դիտէր: Հեղութիւն չի ցասեցոր,  
այլ մեղմով կը պատասխանէ. « Եթէ չար ինչ  
խօսեցայ՝ վկայէ վասն չարին. իսկ թէ բարի՛  
ընդէ՞ր հարկանես զիս: » Իսկ մեք ոչ եթէ  
ապտակ, այլ միայն մի սոսկ բան լսելով ան-  
հնարին կը ցառնումք և կը վայրանամք. և  
մերթ եւս պատուախնդիր լինելով՝ մեր ո-  
տիսը կը վարեմք յատենէ յատեան, որոյ օ-  
րինագիրքն Աւետարան չէ:

Ո՛վ խաչակիր զինուորք, առէք իւրա-  
քանչիւր Ձեր խաչերը հետ Քրիստոսին եր-  
թանք ի Գողգոթա: Ո՛հ, մեր խաչերը շատ  
թեթեւ է և մեք յետս կը կասիմք. Յիսուս  
զնաց հասաւ Բեթելայ սարին գլուխ և մեք  
կէս ճամբուն վերայ մնացինք: Սիմոն Նիւ-  
րենացւոյն պէս միայն պահ մի կրեցինք խաչը  
մեր ուխտին օրը, և դարձեալ զամէն խա-  
չերը գրինք Յիսուսին յուս, և մեք յետս  
դարձանք զնացինք աշխարհին մաճ բռնել.



Թողլինք միանգամայն հետ խաչին՝ նաեւ կենաց բան և Աւետարանը :

Առէք ձեր խաչեր , մի՛ վախճիք , առէք , ո՛վ խաչաբարձ ուխտ , եթէ կը պարծիմք որ մեք Քրիստոսի զինուորեալ եկեղեցւոյն յառաջամարտ ու նահատակ զինուորներն ենք . առէք բարձրացուցէք խաչին դրօշ՝ երթամք ժողովուրդին յառաջ : Ես զիտեմ՝ տրտունջ ունիմք և յառաջ կը բերէք Պօղոսին բան . « Ո՞րք զինուորիցի իւրով թռչակաւ : » Այլ մեր զօրադուլս Յիսուսը զինուորեցաւ . իւր թռչակը՝ միայն Աւետարանն էր և Տիրերական ծովուն ձրիատուր ձկներն : Պօղոսն եւս նոյն օրինակ զինուորեցաւ . նա արուեստիւ վրանակար էր , և պարծենալով կ'ասէր , ես ձեռարուեստովս պաշտեցի իմ առաքելակից ընկերներս : Թէ ամօթ է վրան կարել . ուրեմն թուղթ գրենք , գիրք չինենք , ուսման պարագիւնք և մեր թռչակով զինուորիմք :

Յիսուս խաչով ելաւ Գողգոթային գլուխ . մեք առանց խաչի ու վշտի երթամք ինչպէս դասալիք աշակերտներն , երթանք դռնէ միայն աչքով հանդիսատես լինիմք . զի մեր փրկութեան զոհարան է հոն : Տեսէք որչափ անմուռն է , ինչպէս որոջն իւր

կտրչին առաջ . իւր փրկող բազուկները՝ փայտին վերայ ինքնայօժար կը տարածէ , եւ կ'ասէ , Բարձրացուցէք զիս , որ զաշխարհ բովանդակ առ իս ձգեմ :

Այսպէս ահա ի մարդ կերպարանեալ Սէրն Աստուծոյ՝ իւր անհուն և մեծ սիրով զանձն իւր հաւատացեալ բարեկամներուն վերայ կը դնէ , և կը մեռնի խաչին վերայ և ի մեղս մեռելոց՝ կեանք կուտայ :

Յիսուս իւր խաչով և սիրով հեռացեալ մարդիկներն առ ինքն կը ժողովէ և մեք առանց սիրոյ և խաչի կը ցրուեմք զայն . և մեզ համար խօսեցաւ նա կանխաւ . թէ « Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ : » Ո՛վ կարող է առանց խաչի և սիրոյ Յիսուսի հետ ժողովել . զի նորա ժողովելու հեծանոցն խաչն էր միայն . ինչպէս ասաց և վկայեց իւր Մկրտիչն :

Արդ եթէ այնպէս կը հաւատամք ինչպէս կը բարձրախօսէ Պօղոսն , թէ խաչին ճառը՝ կորուսեալ անհաւատից համար յիմարութիւն է . այլ մեզ համար որ հաւատով փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է :

Զօրանամք ուրեմն խաչի ճառի զօրութեամբ և զօրացուցանեմք տկարամիտներն . որոց դէմ այժմ ի կռիւ ելած են աշխարհ ,



մամօնայն և նիւթապաշտ փրկիստօրայութիւնն : Մեք Պօղոսին պէս մեր խաչով պարծինք , որով աշխարհ մեզ համար ի խաչ ելած է և մեք աշխարհին , և երանի՛ թէ տիրապէս այսպէս լինէր և կարենայիք պարծել :

Խաչակրաց խմբէն բանիս դէմ առ ձեզ կը դարձնեմ և կ'աւարտեմ յորդորս , ո՛վ հաւատացեալ ժողովուրդ , դուք որ խաչին կը հաւատայք և աշխարհի խաչակրութեան մէջ կը տառապիք , այնպէս մի կարծէք թէ խաչին սլարտիքը՝ միայն կղերական դասուն բեռն է , և ժողովուրդն ազատ է : Ա՛չ , ո՛չ , խաչն՝ Քրիստոնեայ անուն կրողաց ու զինուորաց առ հասարակ անխուսափելի և նուիրական սլարտիքն է : Դուք եւս ձեր խաչերն ունիք , զոր աշխարհիս բռնութիւնն միշտ կը պատրաստէ ձեզ համար . և դուք կարող չէք ձեր թիկանց վերայէն խաչին բեռն խալառ թօթափել , զի Քրիստոս ասաց . « Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք : » Թէպէտ աշխարհիս քաղաքակրթութիւն զօրհանապազ կը տքնի և կը ճգնի խաչն բառնալ ձեր թիկունքէն , որուն տակ կը հեծէք աղիողորմ :

Սակայն ո՛վ կը հաւատայ , որ վերցունին բռնութիւններ և խաչն աշխարհէս բարձուի ,


ժողովուրդն ազատ ու երջանիկ ապրի . հաւասարութիւն տիրէ , աղքատին խրճիթն՝ հարուստին ապարանից բարձրութեան հետ հաւասարի , փողոցի աղքատ Ղաղարոս՝ բեհեզ ու ծիրանի հազնի և մեծատան հետ սեղանակից նստի :

Ձեմք ժխտեր սակայն եթէ ճշմարիտ քաղաքակրթութիւնն Աւետարանի ընկերսիրութեան և սկզբանց վերայ յառաջ կը վարէ իւր մեծամեծ ձեռնարկութիւնները . ժողովուրդին խաչն միայն կը թեթեւայ , բայց ոչ խալառ կը բարձուի :

Առէք ուրեմն , ո՛վ ժողովուրդ Հայոց , առէք ձեր խաչեր , կարդացէք Խաչին ճառը , սիրով ու հաւատով տարէք ձեր ծանրակիր խաչեր , խաչով ելէք Գողգոթային գլուխ , խաչով մոէք ի գերեզման , խաչով ելէք յերկինս առ Յիսուս որ կը կոչէ առ ինքն իւր ամէն կտրիճ խաչակիրներն . « Եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք , և ես հանգուցից զձեզ : »







# ՄԻՕՆԻ ՎԵՐՆԱՏՈՒՆ

Ե Ի

ՁԱՏԿԱԿԱՆ ԳԱՌՆ

ԱՆՅԱՆ ԵՐ Ծաղկազարդ եւ քո փառաց  
վերջին օր, ո՛վ Յիսուս, գալով դայր եւ հա-  
սանէր քո աշխարհի կենաց վերջի փրկու-  
թեան շաբաթ, վերջի երեկուն, վերջի ընթ-  
րիք, եւ վերջի զատիկան Գառն. զոր ի  
վաղուց եւ յաւիտենից կը ցանկացիր ուտել  
քո բարեկամ աշակերտաց հետ, սեղանակից  
նստելով դրախտի Մարդոյն առ ընթեր, որ  
ցանկութեամբ ուտել կ'ուզէր կենաց ծառիդ  
պտուղ եւ անմահանալ:

Եւ չգիտեմ, ո՛վ Տէր, ո՞ր օրէն էր քո այս  
անհուն տենչանք. արդեօք յայն օրէ՞ն երբ  
Մովսէս Իսրայէլի փրկիչ ազատութեան վեր-  
ջի զատիկ տօնեց յԵգիպտոս. չէ՞ այն օրէն  
երբ դու անյայտ Աստուած իբրեւ որդի մար-  
դոյ յայտնեցար աշխարհի. Յովհաննէս քո  
Մկրտիչ զքեզ Գառն Աստուծոյ կոչեց եւ դու  
Յորդանանու մկրտութենէն սկսեցիր զԱւե-



տարանդ քարոզել։ «Ես լոյս, յաշխարհ եկի» :  
Եւ թէ Իսրայէլի տան կորսուած ոչխարները  
գտնեցու եկայ :

Ապիրատ Երուսաղէմ գլխի չծանեալ , դու  
Յակոբայ տունը եւ առ իւրսն քո միայն հիւր  
եկար . նա փութացաւ մի երեկուն եւ եթ-  
քեզ զարդարուած վերնատուն մի պատրաս-  
տել , որ շուտով ուտես զգատիկն երթաս ի  
խաչ : Աբրահամու ապաշնորհ որդիք , արդա-  
րոյդ յիշատակ ըստնան աշխարհէս , զի դու  
գլխի եղեր նոցա :

Բաղմեցար , ո՛վ Յիսուս , եւ քո շուրջ ա-  
կումբ բոլորեցին այն քո վաստակաւոր քաղ-  
ցած մշակները , որոց հետ երեք տարի ամ-  
բողջ հրէաստանի քարացեալ , խտացեալ եր-  
կիրը քայլերովդ ահօս ահօս վարեցիր . դու  
մաճակալ ու սերմանահան էիր , եւ նոքա քո  
ժրագործ մշակներ , կենաց բանիդ սերմն լիա-  
բունն ցանեցիր . դու ճշմարիտ որթ Գողգո-  
թայի գլուխ այգի տնկեցիր , եւ ահա բա-  
ժակ մի ի բերոյ որթոյ . և հաց մի Աւետեաց  
երկրէն ի ձեռս առեալ , օրհնես զոհանաս ,  
բեկես եւ ասես , «Առէ՛ք կերէ՛ք , հաւատա-

ցէ՛ք , այդ հաց երեւոյթով հաց է միայն . այլ  
խսկապէս եւ ճշմարիտ մարմին իմ է , կեանք  
է դա , անապատի մանանայն չէ . զոր ձեր  
թերահաւատ հարք կերան ու մեռան : Իսկ  
դուք նոցա հաւատացեալ որդիքներ աներկ-  
միտ հաւատով կերէք այս կենաց հաց եւ յա-  
ւիտեան կ'ապրիք : Արբէք նաեւ այս բաժակ  
լի հոգեւորաբժ բերկրութեամբ . այդ իսկ իմ  
արիւն է , զոր հանդերձեալ եմ թափել խա-  
չին վերայ՝ բեկեցով մարմնոյս բաժակը :

Երեք տարի մշտախօս քարոզեցիր . « Ես  
եմ կենդանի հաց իջեալ յերկնից » , Յակով-  
բայ յամառ որդիքները չուզեցին հասկնալ  
քո այս խորհրդական խօսքը եւ մերթ եւս  
վարանամիտ եղած սրտմտեցով կը քրթմնէին  
« Թէ զիարդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր  
յուսեալ » : Եւ այսօր ահա բացերեւ կը յայտ-  
նես Հաղորդութեան ծածկեալ խորհուրդը  
սոսկ հաց եւ զինին օրհնելով կը սրբագործես  
եւ ձեռքովդ բաշխելով կ'ասես . « Ահա տո՛րկ ,  
այս է մարմին իմ եւ արիւն » :

Եւ հաւատամք , Տէր , կեանքդ մեր կեան-  
քին հետը , հացին օրինակով կը հաղորդես .



անմահդ մահկանացուն հետը՝ խորհրդարար  
կը խառնիս, որպէս զի մարդոյն կեանքը քո  
կեանքով անմահանայ: Վասն այն իսկ միշտ  
խօսելով կը կրկնէիր դու « Ամէն ամէն ասեմ  
ձեզ եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մար-  
դոյ եւ արքիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս  
յանձինս »: Այո՛, Տէր, քո մարմինդ ճշմա-  
րիտ կերակուր է. եւ արիւնդ ճշմարիտ ըմ-  
պելի է: Երանի՛, որ հաւատով ձաշակեն:

Ընթրեաց սեղանոյդ նուագերգուք եւ հո-  
գեխօս երգահանք Դաւիթ եւ Սողոմօն են,  
որոց գերեզմանին մօտ կազմեցիր քո Զատ-  
կական պատեքն: Դաւիթ գիտես թէ հոտ  
առնելով իւր հաղարամեայ հողի քնարանէն  
ձայն կուտար Սիօնի քաղցեալ որդիքներուն.  
« ձաշակեցէք և տեսէք, զի քաղցր է տէր.  
երանեալ է այր, որ յուսա ի նա »: Իսկ Սո-  
ղոմօն իբրեւ քո հրաւիրակ բարձր քարոզու-  
թեամբ առ հասարակ կը հրաւիրէ բոլոր աշ-  
խարհիս անզգամները. որ հաւատան Աւետա-  
րանիդ եւ դան նստին քո սեղան. ուստի ասէ.  
« Եկայք կերայք ի հացէ իմմէ. եւ արբէք  
զգինի իմ զոր խառնեցի ձեզ. թողէք զան-

ըզգամութիւն եւ կեցջիք, խնդրեցէք զիմաս-  
տութիւն, զի ապրեսջիք »:

Աւարտէ՛, Յիսուս, աւարտէ՛, քո սուրբ  
ընթրիս՝ աշխարհիս խնճոյից եւ գինարբուաց  
սեղան չէ. շուտ կապէ սխաճանելին, ջուր  
արկ ի կոնք, նստիր ի ծունկ. չորս հաղար  
տարուան պարտք ունիս վճարէ այժմիկ, խո-  
նարհիր քո շինական աշակերտաց փոշոտեալ  
բրտացեալ ոտքերը լուս. դոքա Աբրահամու  
հարազատ զաւակներն են. որոց հայրը՝ քո  
այցելու ոտքերը վաղ լուաց. մինչ դու երկու  
հրեշտակներով Մամբրէի կաղնւոյն եւ նահա-  
պետի վրանին մօտ հիւրաբար նստար:

Տէր, ի՞նչ է քո այս անօրինակ եւ ան-  
չափ խոնարհութեանդ ցոյց: Ես չեմ արժա-  
նի քո Ընթրեաց սեղանոյն հուպ մատչիլ.  
այլ իբրեւ ամօթապարտ ծառայ վերնատան  
դրան յետուստ կացեալ կը հոյիմ սարսափե-  
լով եւ կ'ապշիմ քո անհաս հեզութեան վե-  
րայ. ոչ կը զգուիս, ոչ կը վիսաս, խոսքան  
մարդոյն տաժանացեալ գարշապարը ձեռքդ  
առնելով կը շօշափես, կը լուանաս, եւ զեն-  
ջակաւ սրբելով կը բուժես Ագամորդւոյն այն



վիրալից ոտքը, որ քո անիծած այս երկրի  
փուշերը կոխելով ծաղկոտուած էր. եւ աշ-  
խարհիս խաւարին իշխանութիւնն զայն շըղ-  
թայակալ առնելով կը վարէր եւ կը տանէր  
ու կը բերէր առ կուռս անմուռնչս :

Ո՛վ հզօր աղատարար ձեռք, դու զայն  
հին շղթայն փշրելով յաւիտենից կապեալ որ-  
դիքներս արձակեցիր թողլի, որ այնուհետեւ  
կոխեն համարձակ զօձ և կարիճ. ամբարհա-  
ւած իշխանութեան հսկարտացեալ գլուխ :

Այսպէս կ'աւարտես անկշիռ խոնարհու-  
թեանդ խորհուրդ. կը յառնես եւ դարձեալ  
կը բազմիս տիրաբար. եւ կը հարցնես ան-  
գիտակ եւ ապշեալ աշակերտներուդ. « Դի-  
տէ՛ք զի՞նչ արարիդ ձեզ » :

Մենք գիտենք, ո՛վ Տէր, այս աշխարհիս  
բռնակալութեան կարգ և օրէնքն է, որ  
ստրկացեալ ծառաները իրենց ախրով ոտքը  
լուանան, ոչ երբէք տեսնք ու լսեցինք ի  
յաւիտենից թէ՛ տէր և գլուխ յանձն կ'առնու  
այսչափ խոնարհիլ, թող որ Աստուածոր-  
դի ես :

Ուսարո՛ւք, ո՛վ իմ աշակերտք, ուսարո՛ւք,  
յիշեցէ՛ք, ինչ որ կանխաւ խօսեցայ. զի ես  
հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. Նս օրինակ մի  
ետու ձեզ. եթէ ես ձեր վարդապետ, ու-  
սուցիչ եւ տէրն եմ, այսպէս խոնարհելով  
պաշտեցի զձեզ, քանի՞ առաւել ձեզ պէտք  
է նոյն օրինակ վարուիլ : Ամէն ամէն ասեմ  
ձեզ, ոչ ծառայն՝ իւր տեսառնէն՝ ոչ առաք-  
եալը՝ իւր անաքողէն մեծ է : Նրանեկի՛ էք  
եթէ դիտնաք, եթէ պահէք, եթէ իսկապէս  
գործով և զանձն օրինակ տալով կատարէք  
զայս իմ խոնարհութեան խորհուրդը. որ  
թերեւս աշխարհիս ամբարտաւանութեան ա-  
ռաջ ծաղր և կատակ համարուի :

Այո՛, Տէր, աշխարհ, աշխարհակալք, որք  
իրենց զօրութեան և սերծութեան վերայ  
հպարտացած են. նոքա կը զարմանան եւ կը  
թերահաւատին քո անչափ և անպայման խո-  
նարհութեան վերայ. երբ դու նուաստ խոյժ  
մի նոցա փառասիրութեան, տիրապետու-  
թեան գահեր և կառքեր կը խորտակես և  
երկնից բարձրութենէն մինչեւ մարդոյն ոտքը  
իջնելով՝ քեզ հաւատացող հեզ ու խոնարհ  
աղքատները մինչեւ երկինք կը հանես, և



այն գոռոզացեալ հպարտ հողիները մինչեւ յանդուներս կը գլորես. զի քո վճիռն է. «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի» :

Տէր, խոնարհութեանդ դաս՝ այս աշխարհիս մարդիկ դժուարաւ կը հասկանան. ապուշ մարդիկ՝ որ կը ծնին եւ կը մեռնին, դեռ չգիտեն թէ գերեզմանի հող են, դեռ կ'ամբարտաւանին և ընկեր զընկերը կը կոխտոյն. մարդիկ որ քո մեծագործ ձեռքին մէջ հողակերտ անօթ մի են, մարդիկ՝ քո ոտքին տակ սողացող որդ մի են, մարդիկ՝ քո տիրական շունչին առաջ փոշի մի են, զոր թէ ձեռքէդ ձգես՝ կը փչրի. թէ կոխես ընդ հող կը ձմի, եւ թէ փչես՝ հողմատար կը կորնչի. Ուստի քո ծառայն Դաւիթ, մարդոյն ոչնչութեան վերայ ձայնարկելով կը խօսէր. « Տէր ով է մարդ, զի յեչես դու զնա » և թէ՛ « Ես ասացի ի վարմանալ իմում թէ ամենայն մարդ սուտ է » :

Ընթրիք լրացաւ, քաղցեալ աշակերտներդ կենաց հացով, Ձատկական խորոված գառով կ'ստապինդ կերակրեցիր, անասակ զինովդ արբուցիր. սկսիր արդ՝ սէր իմ Յիսուս, վեր-

ջին սիրոյ ճառդ և կտակդ : Զի՞նչ է այն, զոր ստէս ստէս կը կրկնես. « Այս է պատուէրն իմ, զի սիրեալք զմիմեանս. և թէ՛ Այսու ծանիցեն զձեզ մարդիկ թէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս » :

Անսահման և անծիր, դու սիրոյ Ովկիանոսն ես, Տէր, ո՛վ կարող է լայնութիւնդ, բարձրութիւնդ և խորութիւնդ չափել. Սիօնի վերնատան յարկէն գետօրէն բացիր սիրոյ ակդ, զաշխարհ բովանդակ սիրոյ հեղեղովդ ողողեցիր. որ իբրեւ ջուր յորդահոս կը վազէր Աստուծոյ քաղաքին հրապարակը և կը ռամոլութեամբ չորցած անջրդի անապատները կ'ոռոգէր, որոց կանխաւ աւետիս կուտար Նսալիսս. « Ուրախ լեր, անապատ ծառաւի » :

Զիմանամք, Տէր, զի՞նչ է այս, որ հին և յաւիտենական սէրդ իբրեւ նոր պատուիրան և օրէնք կաւանդես. միթէ Մովսէս քո հաւատարիմ ծառայն՝ Սինայի անապատին մէջ յետ Աստուծոյ բարձր սիրոյն՝ ընկերին սէր չաւանդեց. արդեօք հին սիրոյդ աստուածատուր աւանդը ինքնին հնացաւ, թէ մար-



դիկ զայն հնացուցին և դու եկար հնացեալ սէր վերանորոգել և իբրեւ նոր պատուիրան աւանդել քո հաւատացեալ որդւոց :

Տեսաք, Տէր, նոր սիրոյդ հրաշալի հուր . զոր բերիւ ձգեցիր երկիրը . զաշխարհ համայն բոցավառեց և զքեզ խակ ողջակիզեց խաչի սեղանոյն վերայ : Ով է Մովսէս, որ քո սիրոյն հաւասարի . Մովսէս միայն սիրոյ պատգամ կուտար իսրայէլի ժողովուրդին . այլ ինքն սիրոյ զոհ չեղաւ . նա կենդանիներ միայն զոհեց զՍտուռած ողորբելու համար . խակ դու ինքնանուէր մատեար ի զոհ և յայնժամ երկինք և երկիր զիրեար համբուրեցին :

Ո՞ր կարէ չափել քո անհուն անհամեմատ սէր, ո՞վ Տէր, զոր դու քառակուսի փայտով մի չափելով՝ բարձրութիւնն մինչեւ երկինք հասաւ, խորութիւնն մինչեւ յանդունդս . խակ լայնութիւն և երկայնութիւն ընդ ծագս չորս կայս աշխարհի : Եւ յայս բան բովանդակեցեր սիրոյդ մեծութիւն և չափ . « Մեծ քան զայս սէր ոչ գոյ, եթէ ոք զանձն գիցէ ի վերայ բարեկամին » :

Այլ ո՞վ էին քո բարեկամք այս աշխարհիս վերայ . մարդիկ՝ որ զքեզ տարապարտուց կ'ատէին . Յակովբայ որդիք, որ կերանքո հաց ու յափրացան և զսիրելիդ անկուչեցին . Աբրահամու խորթ զաւակներ, որ թերահաւատեցան ի քէն . այն ապիրատ և դառնացող ա՞զգ, որ վերջապէս զքեզ հալածելով՝ տարաւ հասոյց մինչեւ Գողգոթային գլուխ, կեանքդ զփայտէն կախեց և նշաւակ կացոյց աշխարհին առաջ :

Հապա ո՞վ էին քո ճշմարիտ բարեկամք, ասա՛ ո՞վ Տէր . մտերիմ աշակերտներդ, որոց հետ ընթրիս նստած ախորժանօք կ'ուտես Ձատկական գառն . ի դոցանէ մին սատանայ է, զոր կը տեսնաս ու չես սրտմտիր որ քո հաց կ'ուտէ, քո դանձապետն է . որ ահաւասիկ այդ կորստեան որդին ելաւ գնաց զքեզ մատնել ու դրժել սիրոյ վարդապետիդ դէմը, և դու գիտես կը տեսնաս ու չես սրտմտիր :

Բարէ՛ անոխակալ և անյիշաչար սիրոյդ, սէրդ այս աշխարհիս կեղծաւոր մարդկանց սէր չէ, որ միայն սնդիկներ կը սիրեն, միայն բարեկամաց ողջոյն կուտան և միայն ազ-



գաղիցները կը պաշտպանեն : Եւ ի՞նչ է մահ-  
կանացուին խաբուսիկ սէր , որ վասն իւր շա-  
հուն կը սիրէ ու շատ անգամ եւս յատելու-  
թիւն կը փոխի և վերջապէս կ'ապառնի ու կը  
ծածկուի մարդոյն սէր իւր հետը գերեզմանի  
հողին տակ :

Միոյ ճառիդ հետը կցելով՝ խաղաղու-  
թեան կտակ կ'աւանդես , Յիսուս , « Զխաղա-  
ղութիւն զիմ տամ ձեզ զխաղաղութիւն իմ  
թողում ձեզ . ոչ որպէս աշխարհ տայ՝ տամ  
ես » : Զի՞նչ է այս վերջին խաղաղութեան  
նշանակը . և միթէ քո նախասացեալ բանին  
հակառակ կը վարդապետես . « Ոչ եկի խաղա-  
ղութիւն տալ երկրի , այլ բաժին » : Աստի  
թերեւս կարծեն թիւրատես մարդիկ թէ դու  
սուր և կռիւ բերիր այս աշխարհ , որպէս զի  
մարդկային ընկերութեան յօդակապը կտրե-  
լով՝ զիրենք իրարմէ բաժնես :

Քա՛ւ քեզ , ո՛վ Տէր , որ չկամեցար իսկ մի  
ընտանեաց համար բաժանարար լինել , այն  
որ ստիպաւ կ'աղաչէր զքեզ երթալ բաժնել  
հայրենի ժառանգութիւնը : Աւետարանիդ  
ողջմտութիւնը ես կը հասկնամ . զի դու եկար

միայն հաւատացեալ որդիքները բաժնել այս  
աշխարհին . սորա համար աշխարհ թշնամա-  
ցաւ քեզ և կռիւ բացաւ քո որդւոց դէմ ,  
և քո քաջագօտի զինաւորներդ Զօրագլխիդ  
քաջալերութեամբ յաղթահարեցին . աշխարհ  
նկուն դարձաւ և ցասեաւ քո դէմ . կարծեց  
թէ դու ես այս աշխարհամարտ կռուին  
գրգռիչ :

Գիտեմ , ով դու երկնից Հօր և նոր ուխ-  
տին խաղաղարար Հրեշտակ . այս վերջին խա-  
ղաղութիւնը՝ դու միայն քո հաւատացելոց  
կ'աւանդես . որ եկեղեցւոյդ արի որդիքները  
թողուն հին ոխութիւնը ջախջախեն թշնամի  
օձին գլուխը , խաղաղութեամբ միանան , ըն-  
կերսիրութեամբ թագաւորեն և հեզ քաղա-  
քավարութեամբ ժառանգեն երկիրը :

Ո՛վ երկնատուր չնաշխարհիկ անդէն խա-  
ղաղութիւնը , զոր միայն Յիսուս բերաւ այս  
աշխարհ և մարդիկներէն ոչ ոք կարողացաւ  
տալ : Ոչ Մովսէս , որ պատժով և պատուհա-  
սով կ'ածէր միայն խաղաղութիւն խստասիրտ  
ժողովուրդին . ոչ Սողոմոն , որ թէպէտ Յի-  
սուսի խաղաղութեան նախատիպար և նշա-



նակ էր, այլ իւր սակաւօրեայ խաղաղութիւնն, մինչեւ ի գերեզման տեւեց և վերջացաւ իւր կեանքին հետ:

Եւ դուք, ո՛վ աշխարհիւ աշխարհակալ տիրապետներ, դուք զԱւետարանին խաղաղութիւն իբաց դնելով՝ դեռ սոսկալի թընթոնթները կը ձուլէք. նոր նոր հրագէշները կը ճարտարապետէք, պատերազմով, արիւնով և մահուամբ միայն խաղաղութիւն պահել կ'ուզէք, և դուք մինչեւ ցարդ անխորհուրդ մնացիք, տակաւին չիմացայք փորձով թէ պատերազմ՝ զպատերազմ կը յարուցանէ և սուր՝ զսուր. վասն զի խօսեցաւ Յիսուս. թէ « Որ սուր առնուցու՝ որով անկանի: »

Իսկ դու, ո՛վ երկնից և երկրի Աստուծոյ և մարդկան մէջ ճշմարիտ խաղաղութեան միջնորդ Հրեշտակ. դու միայն կը քարոզես որ մարդիկ սուրն ի պատեան դնեն. քո սէր և խաղաղութիւն ընդունին. մարդիկ ողջունելով զիրեար համբուրեն. քանզի եղբայր են, համարիւն ազգակից են, պարտք և իրաւունք հաւասարապէս ունին. թող այս՝ քո հաւատացեալ որդիքներն են և դու այն-

պէս կը կամիս, որ քո հարազատ որդիքները և եկեղեցւոյդ ընտանիք սիրով և խաղաղութեամբ ապրին:

Սիրոյ և խաղաղութեան պատուէրդ աւարտելով՝ նորանշան առակ և օրինակ մի յառաջ կը բերես « Ես եմ որթն ճշմարիտ, և հայր իմ մշակ է » . զի՞նչ է այս, ո՛վ Տէր, քանի՞ պէս պէս և սքանչելի անուն ունիս երկրիս վերայ, մերթ սերմանահան կը կոչիս, մերթ սպեպան, մերթ լոյս աշխարհի, մերթ գառն Աստուծոյ, մերթ հովիւ, մերթ ճանապարհ և ճշմարտութիւն. և շատ նոյնպէս որդի մարդոյ. իսկ այժմիկ ճշմարիտ որթ կ'անուանես զքեզ, և քո հայր՝ մշակ. որ ըզքեզ Գողգոթայի բլրին վերայ տնկեց, խաչն՝ քեզ խեչակ արաց, և անդ շինեց պատրաստեց քո մահուն հնձան, և ինքն որթդ հընձանահար եղար, սրունքներդ բացիր՝ զխաղողդ ճմլեցիր, բոսորային դեղով կարմրացար: Մարդ չգիտեր թէ դու և քո հայր ի՞նչ կը գործէք. ձեր գործը՝ անքննին խորախորհուրդ է:

Որթի ուռ կը խոչն աշակերտներդ և կարի-



բնական օրինակով դաս կ'աւանդես Գալիլեացի մանուկներուն, զորս քո ընտրող ձեռք Խորայէլի անբեր այգիէն հանելով՝ պատուաստեր էր ամենաբեր որթատունկիդ վերայ :

Ո՛վ, քանի՞ խանդաղատելի է քո սիրախօս այս բան, « Կացէ՛ք յիս և ես ի ձեզ » ասես թէ ուռն ինքնին կարող չէ պտուղ բերել եթէ հաստատուած չլինի որթի արմատին վերայ :

Հաւատամ, Տէր, զի դու ես զօրութիւն և արմատ անմահութեան, առանց քո մշակութեան Լիբանանու մայրեր չեն բարձրանար, և ոչ եւս Մամբրէի կաղնին հազարաւոր տարի կ'ապրի, առանց քեզ ոչ դարուն կայ ոչ ծաղիկ, ոչ պողաբերութիւն։ Այսպէս եւս Տիբերական ծովու, անճարակ ձկնորսները զի՞նչ կարէին առնել առանց քեզ, որ տրտունջ բառնալով կ'ըսէին. « Տէր, զամենայն գիշեր աշխատեցաք և ոչ ինչ կալաք » . և դու հրամայեցեր զուռկանն յաջակողմն եւս արկանել : Քո հրաման միայն Պետրոս չլսեց, ծովու ձկներն եւս արագ լսեցին . կայտուելով լեցուեցան Պետրոսին ուռկան և այնչափ մինչեւ սարպատէր :

Տէր, դու երբ աշխարհի մէջ իրրեւ մարդ կը շրջէիր, մարդիկ զքեզ Տէր և Վարդապետ կը կոչէին, և դուցէ կը կարծէին թէ աշակերտներդ քո ստրուկ մշակ և ծառաներ են, և ոչ ազատ որդիքները : Աւստի վերջին երեկուն, կը յայտնես քո տիրական ազատ իրաւունք և մտերիմ սէր, « Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայ . . . . այլ բարեկամ » : Յաւել, Տէր, Աւաքեալ, հազարապետ, խորհրդական, տընտես, հովիւ տեսուչ և դատաւոր եւս : Դու որ եկար մարդկային ստրկութիւն բառնալ, հաւատար եղբայրութիւն հաստատել, և միթէ հնա՞ր էր, որ քեզ հաւատացող երկնից արքայութեան որդիքները՝ ծառայ կոչէիր, որոց տուիր քո Աւետարանն, որ քարոզեն նոքա, « Դուք ամենեքին եղբայր էք » :

Փրկիչ իմ Յիսուս, Գեզ բարեկամ չիկար այս աշխարհիս վերայ Արարհամու գաւակներէն, որ ծովու աւազի նման բազմութիւ էին, միայն եօթսուն երկու պարզամիտ հոգիները հազիւ հազ դուար, և ընտրեցիր, որոշեցիր աշխարհէն, և աշխարհն ինչպէս զքեզ, գտնոնք եւս ատեց, և սորա պատճառն ի՞նչ էր :

10061-57  
19001



Ասես թէ նոքա այս աշխարհէն չէին ինչ-պէս դու չէիր, վասն այն իսկ աշխարհ զիս և զնոսա ի միասին ատեց: Գիտեմք, ո՛վ Տէր, դու այս աշխարհէն չէիր, միայն Հօր կամք և մարդոյն սէր վարեց զքեզ յայս աշխարհ և մեք յանկարծ լսեցինք թէ Բեթլէհէմի մէջ մանուկ ծներ ես, թողել ես երկինքը՝ յերկիր իջեր ես. սակայն ո՛վ են այդ շինական անտոհմիկ մարդոց երկրածին որդիքները, որոց համար կ'ասես թէ այս աշխարհէն չեն:

Այո՛, Տէր, քո այս խօսք բարձրախորհուրդ է, նոքա՝ որ քեզ հաւատացին, նոքա՝ որ քո յայտնութիւնը սիրեցին, նոքա՝ որ Աւետարանիդ բանը պահեցին, նոքա՝ որ ծանրալուծ խաչդ յօժարաբար կրեցին, վերջապէս զքեզ պաշտելով և խոստովանելով քո անուանդ համար մեռան, և քեզ նման զոհուեցան ղենելով իրենց անձը եկեղեցւոյ որդւոց ազատութեան վերայ: Սոքա՞ են արդեօք նոր Մեթիդ օրհնեալ զաւակները, որ աշխարհիս Կայենաղարմ մարդկանց որդիքներէն չեն:

Քանի՞ սրտառուչ և տրտմագին է քո յետին ողջոյն, որով հրաժեշտ կուտաս այս աշ-

խարհէն և ընտրեալ ձեռնասուն խմբէդ. « Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. . . և թէ երթամ առ Առաքիչն իմ և ոչ ոք ի ձէնջ հարցանէ թէ յո՞վ երթաս: » Երթամ առ Հայր, ինչպէս ի Հօրէն ելի և եկի յաշխարհ. երթամ, այլ զձեզ չթողում որք. երթամ ձեզ տեղ պատրաստել և դարձեալ պիտի գամ առնում զձեզ. զի ուր ձեր վարդապետ և Տէրն է, արժանի է որ իմ հաւատարիմ պաշտօնեայներդ ինձ հետ լինիք: Քաջալերուեցէք, որդեակք իմ, մի վճատիք, ես զձեզ ուր չեմ թողուր:

Ընթրեաց սեղանէն, սիրական աշակերտներէդ զաչերդ և բանիցդ դէմը յանկարծ դէպ ի երկինք կը դարձնես և կը դռէս ուժգին ձայնով. « Հայր, հասեալ է ժամ՝ փառաւորեա զորդի քո. զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ: » Ասացէք ո՛վ Տէր, չգիտեմք ու չեմք հասկնար ի՞նչ է քո փառաւորութիւն և ի՞նչ է Հօրդ փառաւորութիւն. արդեօք երկուքն եւս մի եւ նոյն չեն, չարչարանաց բաժակ, զինուորաց կապանք, անարժանից ատեան, թուք, ապտակ, ծաղր ու ծանակ, անպարտ խաչակրութիւն. Գողգո-



Թայի սըխարհակոծ տեսարան , ուր կեանքդ խաչէն պիտի կախուի , ասիլրատ որդիքները քեզ յանգիման կենալով վա՛չ վա՛չ պիտի կարգան : Քո անօրինակ փառքն ա՛յս էր . և քո Հայր սոսակէ՞ս փառաւորեց զքեզ :

Տէր , ի՞նչ է այս քո օտար և նորանշան գործ . մարդիկ խաչէն խոյս կուտան , դու դէպ ի յայն կ'երթաս , մարդիկ խաչին մահն անարգութիւն կը համարին և դու , փառաց Տէր , խաչը քեզ փառք կը համարիս . մարդիկ մահուան հոտէն և փուչէն կը սարսափին և կը քստմնին , իսկ դու զայն կը քաղես և կը հոտոտաս իրրեւ անուշահոտ վարդ :

Օ՛ն ուրեմն , Յիսուս , դու խաչին խանդակաթ ես , գիտեմ , անհուն սիրովդ արբեալ մարդոյն փրկութեան համար դէպ ի մահ կ'երթաս . կ'երթաս Սարգիսյ ծառէն կախուիլ , որպէս զի քո Հայր իւր վրէժխնդրութեան սուրն ի բաց դնէ . զոր վերացուցեր էր զաշխարհ հարկանել . այդ սուրը ահաւասիկ Գեթսեմանի ձորին վերայ կը շողայ : Փութա , ով Տէր , թո՛ղ Աիօնի վերնատունը՝ երթանք ձիթասանայց պարտէզ . հասիլք

չոյտ տուր քո անձն այդ սրոյն դէմը , ուր ոչ միայն Դաւթի ժողովուրդ , այլ և զաշխարհ բովանդակ պիտի կոտորէ երկնից սլաւութեամբս հրեշտակ :



# ՅԻՍՈՒՍ Ի ԳԵԹՍԵՄԱՆԻ ՁՈՐ

Ծո՛ւնր դիր , ո՛վ Տէր , ծո՛ւնր դիր , երեսդ ի հող մած . թող աչքէդ կայլակող կենդանատու կաթիլները հոսին ու թափին այս մեռեալ և անիծեալ երկրին վերայ : Հին մարդն ի հողէն էր՝ իբրեւ անօթ փշրեցու . դու զայն վերաստեղծէ՛ Տէր : Քո Հայր դրախտի դետէն և ջրէն կաւ շինեց ու բստեղծեց մեր նախահայր . իսկ դու աչքիդ ցօղով գետին կը թրջես և նոր կաւ կաղմելով անդրէն նորահրաշ կը շինես հին բեկեալ ու մանրեալ անօթն :

Շինէ՛ , ո՛վ նորոգիչ ձեռք , շինէ՛ և խնամով նոր ճարտարապետութեամբ շինէ , ոյնպէս որ կրկին չփչրէ և չաղարտէ զայն սեւ օձին պատրանք : Գլուխ խոնարհ շինէ , ոչ



այլ եւս չամբարտաւանի՝ Աստուած լինել։ Պարանոցը կոր չինէ, որ Աւետարանիդ նոր պատուիրանին քաղցր լուծը սիրով տանի։ Սչքերը երկիւղածութեանդ վարագուրով պատէ և փակէ մարդոյն ցանկութեան դուռը։ Ամիրսիէ ժպիրհ մարդոյն լայն ու բաց բերանը, որ այլ եւս չհամարձակի երկնից դէմ բան խօսել։ Սիրտն և հոգին թիւրեալ է, ուղղէ դէպ առ քեզ, որպէս զի ճանչնայ, հաւատայ, և սիրէ բարերար Փրկիչդ։ Իսկ ձեռքերը որչափ հնար է կարճ չինէ, Տէր իմ, որ չհասնի արգելեալ ծառին ճիւղը և չքաղէ մահացու պտուղը։ Ոտքերը զօրաւոր պողպատէն չինէ, որ ջախջախէ իւր թշնամւոյն գլուխ և կոխէ անցնի երկրիս տատասկ փուլերուն վերայ։

Ո՛վ դու մարդոյն հնացեալ բնութեան կենտրար և կարկատիչ ձեռք. քո արտասուք և ճակատէդ հոսեալ քրտունք բաւական չեն մեռեալ մարդոյն նոր կեանք տալ. այլ պէտք է անպարտ զոհի մի արիւն. Քո Հօր անդարձ վճիռն է, այդ զոհին արիւնալի դառնագոյն բաժակ ըմպել, զոր ահա խաչիդ գլուխէր հրեշտակը քեզ կը մատուցանէ։ Առ

որ հոգիդ յօժար է. միայն մարմինդ զգածեալ խոյս կուտայ մահէն. բայց ի՞նչ է մարմին, որ կարենայ անհուն սէրդ և հոգիդ նուաճել։

Դու Աստուած և Աստուածորդի, որպէս ապիկար մարդ կը վշտակրիս, յանձուկ տաղնապիդ մէջ զօրավիգ կը խնդրես, մտադիւր կ'աղօթես և կը պաղատիս առ հայրդ, որ թէ հնար է անցնի քեզմէ այդ մահուան բաժակ։ Բայց և դարձեալ իրրեւ կամակատար հնազանդ որդի կ'ընկրկես քո կամքը և Հօրդ կամաց կը թողուս, որ վայրիկ մի գիտես թէ կը մոռանայ և կը թողու իւր սիրելի միակ Որդեակն իւր թշնամեաց ձեռք։ Վասն այսորիկ դու բարձրագոյն կ'աղաղակես Դաւիթին ձայնով «Նայեա՛ առ իս եւ ողորմեա ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։ Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ, ի վշտաց իմոց հանգիս, (Հայր)։»

Ահա քեզ զօրավիգ հրեշտակ մի կ'առաքեմ, հզօր Որդեակ իմ, զօրացի՛ր յոտին կաց, կազդուրէ զքեզ, ա՛ռ ըմպէ մահուդ բաժակ, քնա՛ յօժար ի խաչ, լիովին կատարէ մար-



դեղութեանդ խորհուրդը. Բեթլէհէմի մըս-  
րէն մինչեւ ի գերեզմանն է քո խաչին վախ-  
ճանը, և հոն ամէն վիշտերդ կ'աւարտին :  
Մարդիկ թող այնպէս կարծեն թէ դու եւս  
ի կարգս մեռելոց կը համարիս : Քաւ թէ ըզ-  
քեզ ի դժոխս թողում. քաւ թէ սուրբդ իմ  
ապականութիւն տեսնայ. և դու ինքն չգի-  
տե՞ս և չառացի՞ր թէ՛ քակեցէք մարմնոյս  
տաճարը և ես երեք օրէն յետոյ կը շինեմ :

« Ես ուխտ ունիմ ընդ քեզ, Որդեակ իմ.  
ի յաւիտենից մահուանդ վճռադիրը ձեռա-  
դրած եմ. բոլոր մարդարէք իրենց դուշա-  
կութեամբ վկայ կը կոչեմ այս դաշնադրին .  
քո մահն՝ անեղծ վճիռ է : Ե՛լ մարտադիր  
մանուկդ իմ, ել գնա բարձրացիր ի խաչ-  
թող ընկճի խաչիդ ոտքին տակ աշխարհի իշ-  
խան : Խաչէն ի գերեզման իջիր, յաղթահարէ  
մահ և խորտակէ դժոխքին խայթոցը : Վա՛շ,  
այն օր ես կը ցնծամ և երկնից մէջ կը տօ-  
նեմ յաղթանակիդ հանդէս. զքեզ ի մեռելոց  
կը հանեմ, ազատ Որդեակ իմ, և դու նորա-  
հրաշ յարութեամբ կը փառաւորիս յոյժ » :

Մօտեցաւ քո մատնութեան ժամն Յի-

սուս, խաւարին իշխանութեան զինուորները  
զքեզ ըմբռնել կուզան. և ո՛վ է նոցա առաջ-  
նորդ, քո գանձապետ Յուդան. որ ահա կը  
մերձի համրուրել զքեզ մասնաւոր կեղծա-  
ւորն. և դու անհաս հեղութեամբ, ոչ կը  
ցաւնուս, ոչ կը սրտմտիս. միայն հոգւոյ հե-  
ծութեամբ կը պատասխանես. « Յուդա՛, համ-  
բուրելո՞վ մատնես զորդի մարդոյ : »

Թո՛ղ տուր, ո՛վ դու անըմբռնելի լոյս,  
թո՛ղ տուր որ կապեն զքեզ. դու կամաւ ե-  
կիր յայս ժամ. միթէ և այժմ ընդ մէջ անց-  
եալ գնա՞ս ինչպէս Գալիլեայի յարտեան լե-  
րին : Ահաւոր անուանէդ զգետնի հարան  
զինուորները, ձեռն տուր ի վեր հան, կազ-  
դուրէ թող կապեն զքեզ : Այլիախայ և Պի-  
ղատոս ատեան կազմեր են և կ'սպասեն Ար-  
դարոյդ դատաստանը համառօտել ի մահ :

Ո՛ր ես, անձնադիր Պետրէ, քնաթաթախ  
ծանրացեալ աչքով կ'աճապարես Վարդապե-  
տին պաշտպան հանդիսանալ և դու հին ար-  
ուեստիդ ձկնորսական դուլ դանակովդ Մաղ-  
քոսին ականջը կը հատանես : Ի բա՛ց կաց ի  
բաց, սուրդ ի պատեան դիր. երբ դու այն-



չափ Վարդապետիդ սիրով վառեալ ես, գնա՛ հետ մինչեւ ի խաչ և գերեզման : Փրկչին ազատաքայլ ոտից խոչնդոտն մի՛ լինիր . ինչպէս Թաթօրական լեւան տակ, ուր սատանային թեւադիր ոգւով խաչին խորհուրդ խափանել կ'ուզէիր :

Սիրական հովիւն իւր սիրելի Հօրէն զարնուեցաւ, ոչխարները ցրուեցան . որք պահ մի յառաջ Սիօնի վերնատան մէջ Հովութն շուրջ բոլորած խնճոյք կը կազմէին . բա՛բէ, խաչակիր զինուորները դառալիք եղան Գեթսեմանի ճակատամարտին մէջ, զօրագլուխ միայնակ թողին : Ո՛ւր ես արդեօք, Յիսուս վարդապետին սիրահար հոգի Յովհաննէս, որ զլանջօք նորա փարերով կը հարցանէիր մտերմօրէն . « Տէ՛ր, ո՞վ է, որ մատնեւոյց է գլքեզ . » տեսա՞ր աւասիկ թէ ով մատնեց զինքն, և դու այժմ՝ յուշիկ յուշիկ վարդապետիդ ետեւէն վարանելով կ'երթաս մինչեւ ի գաւիթ Քահանայապետին և մինչեւ Գողգոթային գլուխ . բայց առանց խաչի :

Իսկ դու եւս անգիտաբար կը հարցանէիր, « Տէ՛ր, ոչ գիտեմք յո՞վ երթաս, եւ

զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել : » Մի՛ աղչիր Թովմաս, տես աւասիկ Յիսուս կապուած կ'երթայ խաչին ճանապարհ, կ'երթայ ձեռքեր ոտքեր և մի կող ծակել տալ . որպէս զի դու յետ յարութեան չօշափես նորա վէրքեր և չթերահաւատիս : Յի՛շէ՛ Թովմաս, զի՞նչ խրախոյս կուտայիր յայնժամ ընկերներուդ, մինչ Յիսուս անդրէն դառնալ կ'ուզէր յերուսաղէմ իւր Ղազարոս բարեկամն գերեզմանէն կանչել . և առ այս մինչ կը դժկամակէին աշակերտները, դու իրրեւ անձնանուէր նահատակ հրաւէր կը կարդայիր . « Ս'ն եկա՛յք և մեք, զի ընդ նմա մեռցուք : »



#### ՅԻՍՈՒՍ ԱՌԱՋԻ ԴԱՏԱԻՈՐԱՅ

Միայնակ մնացիր Յիսուս, անձնանուէրներդ ամէն քեզմէ չողան ի բաց, միայնակ ելար յատեան Քահանայապետին, որ իրրեւ անգէտ և չքմեղս կը հարցնէր, և միթէ գիտնա՞լ կ'ուզէր նկնդամիտն թէ՛ ի՞նչ է քո վարդապետութիւն եւ ի՞նչ է աշակերտներուդ ուսումն : Գալիլէացի բարձրութենէն սկըս-



Եալ մինչեւ յՆերուսագէմ, բովանդակ չըէաստանի գաւառները, Սիօնի Աւետարանչիդ ձայն տանեաց վերայ բարձրարարառ քարոզեցաւ : Միայն պարզամիտ ժողովուրդ լըսեց քո ձայն . քահանայապետք, դպիրք, փարիսեցիք, եւ օրինաց վարդապետք խուլ դարձան :

Դու հեղաբար կը պատասխանես, այլ կատարի ծառայն քահանայապետին զքեզ կ'ապտակէ : Համբերէ դառնուիդ հեզ, համբերէ, դարձուր եւ զմիւս երեսդ . դու այսպէս վարդապետեցիր եւ արդ օրինակով ցոյց տուր մեզ քո անսաւման հեղութեան դասը . մի՛ ջանար այդ անիրաւ ատենէն իրաւունք պահանջել : Թող Ահարօնեան դասը զքեզ դատաւետէ, Մովսիսի հաւատարիմ ժողովուրդը քեզ համար վկայ է . դու ոչ երբէք չար խօսեցար, եւ ոչ նենգութիւն գտաւ ի բերանդ :

Պատառէ՛ պատմութեանդ ո՛վ Կայիափայ, պատառէ այլ եւս պէտք չեն Ահարօնեան այդ հնոտի հանգերձք . չեն պէտք ոչ ձեր զոհ, ոչ պատարագ, ոչ քառութիւնք . մի՛ աշխատիր սուտ վկայներ գտնել, համառօտէ

անմեղ մեղապարտին դատաստանը . տարէք հանէք այդ կարմիր անմուռնչ երինջ խաչի սեղանին վերայ . այսուհետեւ Յիսուս ինքն է միայն փրկութեան զոհ եւ պատարագ հանուր աշխարհի համար :

Անցաւ երրորդ պահ գիշերոյն . դու ո՛ւր կ'աս եւ զի՞նչ առնես, պարծողդ Պետրէ, ջերմ ոգիդ ի սիրոյ վարդապետին սառուցեր ես, եւ այժմ վառուած խարոյկին մօտ նստած մարմնով կը ջեռնուս : Աւարտէ երրակի ուրացութիւնդ, աւարտէ, ահա հաւիկն թեւ ի թափ կը խօսի . սթափի՛ր դու, հաւուն ձայն զքեզ իւրաց կը կոչէ . դարձի՛ր դէպ ՚ի Տէր, Պետրո՛ս, դարձի՛ր . Յիսուսն եւս, ո՛հ, ձեռակապ կացեալ յատենին, զօջերն առ քեզ ածելով զքեզ ի դարձ կը հրաւիրէ, ե՛լ մի՛ կենար . ե՛լ այս գաւթէն, գնա մտիր Գեթսամանի ձոր, ուր թողիր քո սուր . եւ անդ լաց դառնապէս, ուր Տէրն ագօթեց . հոսէ արտասուք մինչեւ գետ լինի, հեղեղ դառնայ, անցնի Էդգրոնի ձորէն :

Յատենէ յատեան սարին զքեզ, Տէ՛ր, այլ եւս քո դատաւորն Կայիափայն չէ եւ ոչ



Մովսիսին օրինադիրք. այլ Պոնտացի Պիղատոս, որ Հռովմայ կայսրութենէն դատաւոր կարգուած էր, ոչ Մովսէս կը ճանչնար ոչ նորա օրէնք: Նա հեթանոս էր. բայց խղճի գիտակցութեամբ ծանեալ զքեզ թէ անմեղ ես, անպարտ ես. ոչ կայսեր, ոչ աշխարհին մնաս մի չունիս. դիտցաւ քաջ թէ հրէայները առ նախանձու մատներ են զքեզ: Սակայն ի վերջոյ կեղծաւորեցաւ, արիական արդարութեամբ չպաշտպանեց քո դատը. ձեռք լուաց ժողովուրդին առաջ, խաբեց ու կարծեց թէ քաւեցաւ արդարոյդ արեւնէն:

Ո՛վ խորախօս իմաստութիւն, հանդերձելոյն դատաւոր, և Աւետարանիդ ճշմարտութեան փաստաբան դպիր, մարդ կը զարմանայ քու վրադ թէ՛ ինչպէս վարուեցար դու այդ աջաւորդ դատաւորաց առաջ. մերթ կը խօսէիր, մերթ հարցմանց պատասխան կուտայիր, և մերթ եւս անխօսուն էակ մի դարձած այնչափ լուութիւն կը պահէիր, իբրեւ մարդ մի որ չի լսեր, չի խօսիր, և բերան ու լեզու չունի: Գիտեմ դու առ վշտին եւս բերանդ չբացիր. մարդիկ քեզ պէս չեն. վշտին մէջ առուել կ'աղաղակեն: Այո՛, Տէր իմ հեղ,

ոչ ձայն կը հանես, ոչ կը վիճես, ոչ կ'աղաղակես, զի մի՛ ձայնիդ և շնչոյդ ուժգնութենէն, ջախջախեալ եղէգն փշրի, եւ առկայծեալ պատրոյդն շիջանի: Արդեօք այսչափ խոնարհութեա՞նդ համար դատաստանդ չուտ բարձաւ ու վերջացաւ ինչպէս գուշակեց Նսայիաս:

Անհանդուրժ վիշտերուդ գիշերուան երկրորդ պահն էր. մինչ մարդահաճոյն այն՝ որ ինքն էր դատաւոր և իշխան. ո՛հ, զքեզ նոյն իսկ քո մատնչաց ձեռք մատնեց, իւր ատենէն ի բաց մերժելով ասաց. « Ահա այրդ ցձեղ: » Զ՞ինչ այնուհետեւ վայրագ զինուորներ ու Հրէից վրիժահան խուժանն զքեզ մեկուսի առնելով՝ դառնադոյն նախատանաց թատերդութիւն մի կատարեցին քու վրադ. զքեզ յաթոռ նստուցին իբրեւ քո հօր Գաւթի աթոռը. գերագոյն գլխոյդ փուշ պսակ բուրեցին, զոր դպրաց ու փարիսեցոց տատակաբեր անդատանէն քաղեր էին. մի եղեգնէ դաւազան եւս քո աջ ձեռք տուին, և դէմդ անցած ծունր դնելով կը կատակէին զքեզ: Մի՛ դժարիր, Տէր, զի դու երկաթէ դաւաղանով Մովսիսին ձեռքով ինչպէս բրտի



անօթ ջախջախեցիր զիրենք , չիմացան պան-  
դոյր ոգիները թէ դու եկեր էիր Աւետարա-  
նիդ անվուշ ու դալար քաղցր գաւազանովդ  
հովուել : Քո թագաւորութիւն այս աշխար-  
հէն չէր , այլ իրրեւ արքայական ծիրանի կար-  
միր քղամիթ հագուցին քեզ . գլուխդ՝ զոր  
տիեզերք չկարէ ծածկել , ձորձով կը ծածկէին  
և կռուիս հանելով կը հարցնէին . « Մարդար-  
եաց , ով էր որ եհարն զքեզ : » Դաւիթ քո  
այս անըմբերելի նախատանաց նախատեսողն  
էր . Սիօնի բարձր սլալատէն քո ձաղանքները  
կը դիտէր և կը կշտամբէր իւր անմիտ ժողո-  
վուրդը . « Խմացարո՛ւք , իմացարո՛ւք , անըզ-  
գամք ժողովրդոց և անմիտք , մինչեւ յե՛րբ  
ոչ առնուք ի միտ : Որպէս զի թէ որ տնկեաց  
զունկն՝ ինքն ո՛չ լուիցէ , կամ որ ստեղծ զակն՝  
ինքն ո՛չ տեսանիցէ : »

Տէր , գիշերուան վերջին պահուն մինչ  
արշալոյս կը մօտէր , քո սյալանաց թատրեր-  
դութիւնը կը լրանար . ամէն ձաղանք , հար-  
ուած ու կատակ անխնայ կտտարեցին քո  
վրադ . կ'անցնէր վշտիդ երկար գիշեր եւ ա-  
ռաւօտ քեզ նոր վիշտ կը բերէր : Գարուն էր ,  
ծառեր և ծաղկները երկնից ցօղով զուար-

թացած կը ծիծաղէին . իսկ դու ծառոց ու  
ծաղկանց զարդարիչ , թուամա՞ծ ու խամրած  
էիր , երեսդ այլագունած էր : Եսային քո տըժ-  
գոյն կերպարանաց ճիշդ պատկերահանն է .  
« Մեք , ասէ , տեսաք զնա , զի ոչ գոյր նորա  
տեսիլ և ոչ գեղեցկութիւն . այլ տեսիլ նորա  
անարգ նուաղեալ քան զամենայն որդւոց  
մարդկան » :

Բոլոր անձամբ ուժաթափ եղած կը թալկա-  
նայիր , ո՛վ Տէր , դու Նրիքովի ձամբուն գը-  
թած Սամարացին էիր , այլ ոչ ոք գթացաւ  
ու խնայեց քեզ : Ահաւասիկ խաչին ծանր հե-  
ծան եւս պատրաստեցաւ : Առաւօտ է , արեւն  
առագաստէն ելաւ , և դու լոյսդ և արեւդ  
փառաց , դու եւս իրրեւ փեսայ չարչարանաց  
առագաստէն ելիր : Ո՛հ , Թափօրի լուսափայլ  
երեսդ քանի՞ տգեղունացեալ է և ծով ծով  
աչերդ նուաղեալ : Արեւն զքեզ տեսաւ , Տէր ,  
իւր ձառագայթները շառագունեց Սիօնի լե-  
ռան վերայ և ցոյց կուտայ այժմէն թէ՛ ես  
պիտի խաւարիմ երբ հասնիմ կէսաւուր միջա-  
կէտին և երկնից կամարէն շեշտակի հայիմ  
Գողգոթայի գլուխ իմ խաչեալ Արարչին գա-  
գաթման վերայ . և ի՞նչպէս կարեմ լոյս տալ



ապիրատ մարդոյն, երբ անստուեր Լոյսն՝  
մահուան ստուերին տակ կը մթանայ :



# ՅԻՍՈՒՍ Ի ՃԱՆԱՊԱՐՀՍ ԽԱԶԱԿՐՈՒԹԵԱՆ

Խաչդ ի յուսդ ա՛ռ, ո՛վ Յիսուս, երթանք  
ի Բեթելայ սար, դու նոր Իսահակն ես, չալ-  
կածդ քո ողջակիզին փայտն է. մի՛ հարցը-  
նեք թէ՛ ո՛ր է ոչխար ողջակէզ. դու ես մի-  
այն ճամբրիտ ողջակէզ, զոր Արրահամ դու-  
շակեց և Հայրդ պատրաստեց. միայն թէ քո  
զոհադործն Արրահամ չէ, այլ նորա ժպիրհ  
և անզգամ որդիքնեք :

Մինչ դու վաստակաբեկ եղած, հատկըլ-  
եալ շնչով կը տանէիր քո մահուդ փայտը,  
և ծուռկերդ կթուցեալ այլ եւս չկարէիր ոտն  
յոտին փոխել ու յառաջ երթալ. դու որ զօ-  
րավիզ էիր անկեալ մարդկութեան, և Մար-  
դարէին ձայնով խրախոյս կը կարդայիր. «Զօ-  
րայարո՛ւք, ձեռք լքեալք, և ծուռկը կթուց-  
եալք» : Քո չարամիտ խաչահանուք կարծե-  
ցին թէ՛ մի գուցէ առանց խաչի անարգու-  
թեան և աշխարհատես խայտառակութեան

մեռնիս դու կիսաճամբուն վերայ. ուստի քեզ  
համար պահակ կալան Կլերենացի Սիմոն, որ  
պահ մի քո խաչ կրեց մինչեւ շունչ առիր և  
դարձեալ ինքնին բարձիր քո խաչափայտն :  
Զի քեզ սիրելի էր քո զօրութեան զէն յու-  
սիդ վերայ տանել պարծանօք, ինչպէս մի  
քաջադօտի զինուոր ի պատերազմին : Եւ քո  
զէն պողովատիկ սուր չէր, այլ անտաշ անար-  
ուեստ փայտ մի, որով զինավառեալ էիր աշ-  
խարհի իշխանին զօրութիւնը խորտակել :

Ելէ՛ք և տեսէ՛ք, դստերք Նրուսաղէմի,  
ելէ՛ք և տեսէ՛ք մեր նոր Սողոմոն արքային  
նորօրինակ հարսանեաց պսակը. որով յառուր  
փեսայութեան իւրոյ կը պսակէ զինքն մայրն  
իւր Սիօն : Կուլաք, կաշխարէք և սրտակոծ  
կը լինիք, տեսնալով որ փեսայն մահապարտ  
մի խաչակիր է : Ասեն թէ անմահ Աստուած-  
որդի է, և այսօր ի մահ կերթայ. ասեն թէ  
թագաւոր է, այլ գլխոյն թագ փուշ պսակ  
է. ասեն թէ Սողոմոնի երգած անձկալի եղ-  
բօրորդին եւ փեսայն է, իւր հարսնեւորք՝  
սուսերակիր զինուորներն են. պսակադիրք՝  
օրինաց վարդապետներ և զալիրներն են.  
պարահանդէս ուրախութիւնն՝ Նրուսաղէմի



դատերաց ողբ , կոծ ու լացն է : Եւ այսպէս  
կը կատարի նախագուշակին խօսք թէ . « Յա-  
ւուր յայնմիկ սաստկացի կոծ յերուսաղէմ ,  
իրբեւ կոծ նռնենեաց կոտորելոց ի դաշտի : »



### ՅԻՍՈՒՍ Ի ԲԵԹԵԼԱՅ ՍԱՐ

Չոհիդ ժամ հասաւ . և դու հասար Բե-  
թելայ սարին գլուխ , Յիսուս , խաչդ ի գե-  
տին դիր , ո՛վ դու խաչի մշակ , արեւակէզ  
ճակատիդ քիրտն սրբէ , զաչերդ ի վեր ա՛ռ  
տե՛ս ահա կուգայ անառակ որդին , մարդ-  
կութեան թշուառ զաւակ . վեց հազար տարի  
է երկրիս վերայ կը թափառուի , և այժմ իս-  
պառ չքաւորեալ անօթի քաղցած կը վերա-  
դառնայ հայրենի տունը . զքեզ Պողոթնային  
գլուխը գտաւ , և դու երկինքէն մինչեւ Բեթ-  
լէհէմի մնուր և անտի մինչեւ այսր՝ զայն  
կերօնէիր և ահա գտեր : Գիրկս արկ , համ-  
բուրէ , զի դու երկնից Հօր գորովոյն բա-  
զուկներն ես . զքեզ երկինքէն մինչեւ յերկիր  
պարզեց որ զրկես անառակ որդին , յուսիդ  
վերայ բառնառ մոլորեալ ոչխարը : Տե՛ս , Տէր ,  
կորսուած դրամն եւս ոտքիդ տակն է , ժան-

գոտած եղծուած բոլորովին . կը ճանաչե՞ս  
արդեօք , ա՛յդ է քո տիրական պատկերն ու  
կնիքը :

Տէր , դու այս անգին գիւտերուդ հա-  
մար զի՞նչ գին կը վճարես . արդէն գիտես  
Հօրդ կամք , դու նորա ի յաւիտենից պահ-  
եալ պարարակ եղն ես . նա կը հրամայէ որ  
անառակ որդւոյն դարձին համար զենուն  
զքեզ , խնճոյից սեղան կազմուի , հրեշտակ-  
ներ ու մարդիկները առհասարակ հրաւիր-  
ուին , երկինք և երկիր զիրեար գրկախառ-  
նեն , հաշտութեան ազեղն Պողոթնայի գրու-  
խէն ձգէ դէպ երկինք , և հասնի Աստուած-  
պետական աթոռին առաջ . խռոված Հայրն  
հաշտուի աշխարհին հետ :

Փրկութեան աւուր երրորդ ժամն եհաս .  
տարածիր , Յիսուս , պարզէ ամենազօր բա-  
զուկներդ քառաթեւ սեղանին վերայ , թոյլ  
տուր , որ զենուն զքեզ , լուռուսունջ կաց ,  
բերանդ մի բանար , դու անխօս որոջ մի ես  
քո կտրիչներուն առաջ . ճիշդ այնքէս կաց  
ինչպէս գուշակեց Եսային :



Զմուսեալ գինի կուտան քեզ, չգիտեմ քեզ կը կարեկցի՞ն, որպէս զի թմրիս և սաստկագոյն ցաւ չզգաս. թէ վասն այն կարբուցանեն քեզ, որ անազան մեռնիս, ընդ երկար ողջ մնաս խաչին վերայ. թշնամիներդ վա՛շ վա՛շ կարդան քո դէմդ և զքեզ աւելի եւս զկծեցուցանեն : Այսպէս վարեցան ընդ քեզ կատաղի ոխերիմներդ, չգիտնալով թէ դու մարդոյն սիրով արբեալ՝ կամաւդ անզգայեալ ես :

Առէ՛ք սուր, կտրեցէք, ո՛վ սպանդարանի արեան ու մահուան պաշտօնեայներ, զոհն հեզ է, իւր վիզը կամակար կը ձգէ. բեւեռները հարէք, դժոխադէմ՝ դահիճք, խաչակիր նահատակն իւր թեւերը կը տարածէ. պինդ հեղուսէք զԱստուածն ի փայտ. իւր խաչով հանդերձ վերացուցէք ու կանգնեցուցէք Բեթելայ սարին դադաթ, թող աշխարհ և երկիրք տեսնայ :

Ո՛վ դուք, Մովսիսի անհաւան և ստահակ որդիքները, տեսէ՛ք, ահաւասիկ կեանք ձեր կոխեցաւ զփայտէն : Դա անապատին մէջ բարձրացած պղնձէ օձ չէ, որ միայն Խորա-

յելի օձահար որդիքները բուժէ. այլ բոլոր բովանդակ հեթանոսները մահաշունչ վիշապին խայթուածէն պիտի բժշկէ, և առ այս նշան կուտայ մարդարէն. « Եւ բժշկութիւն ի թեւս նորա : »

Դուք արդ՝ յանդիման կեցած կը նայիք նորա վերքերուն և խոցերուն, ո՛վ ազգ չար և դառնացող. որ երբէք քո սիրտ և հաւատարմութիւն չուղղեցիր առ Աստուած, և միշտ նորա սուրբ մարգարէները սրահան և սղոցով զրաւեցիր : Եւ արդ նոյն իսկ մարգարէից Տէր և Աստուծոյ Միածին որդին կը խաչես, և չես ամաչեր : Յիսուս ձեր չար ու խորամանկ միտքը բացատրեց ճիշդ իւր առակով. դուք վասն այն արտաքոյ այգւոյն հանելով կը քարկոծէք Հօր սեփնական ժառանգը. որ բոլորովին գրաւէք Յակովբայ տունը և այգին, ժառանգութեան տէր լինիք, արդիւնքն ուտէք և բուն այգեատէրը հանէք իւր արդար ժառանգութենէն :

Ահա բարձրացար, Տէ՛ր, և դու կասէիր թէ երբ բարձրանամ ես, զաշխարհ բոլոր առ իս կը ձգեմ : Եւ զարմանամ, Տէ՛ր, այդ



անլուր , անհնար հրաշքիդ . չգիտեմ ինչպէ՞ս պիտի ձգես . թեւերդ կապուած են , ոտներդ բեւեռուած և սակաւիկ մի եւս դու կը մեռնիս և կը մնաս անշարժ , և մարդիկ զքեզ ի գերեզման կը տանին , կարծելով թէ դու եւս մեր աշխարհի մեռեալներէն ես : Եւ միթէ հնար է խաչդ և գերեզմանէդ զաշխարհ առ քեզ ձգել :

Այլ գիտեմ և կը հասկնամ , Յիսուս , քո միտք պարզ է և խոր , քո ամենահաս , ամենազօր ձեռքդ նոյն իսկ մահուդ մէջ կենդանի և զօրաւոր է . և դու զմարդիկ առ քեզ սրոյ բռնութեամբ չես ձգեր ինչպէս աշխարհիս տիրապետ աշխարհակալները . այլ անհուն սիրովդ կը ձգես , խաչիդ անձնանուէր զոհովդ կը ձգես , անպարտ արիւնովդ կը ձգես . քաղցրը լըծովդ կը ձգես , անսահման ներողամտութեամբդ կը ձգես , Աւետարանիդ ազատ քարոզութեամբ կը ձգես . այս աշխարհէն՝ կենդանի հաւատացեալները կը ձգես , ի գերեզման կիջնաս՝ հողէն մեռեալները կը ձգես . ի ներքին բանտն երթալով՝ կապեալ հողիները կը ձգես . կռամոլութեան տաճարներէն՝ մոլորեալ հեթանոսները կը ձգես . և կը բե-

րես կածես եկեղեցւոյդ նորադաւիթը , զամէն մի հօտ կազմելով քաջ հովուիդ գաւազանին տակը կը ժողովես :

Այսպէս , ո՛վ Տէր , աշխարհի հաւատացւոյ միայն քո սէր կը յայտնես , իսկ սանդաւրամետական իշխանին՝ քո բուռն և ահաւոր զօրութիւնը : Կը վերանստ կը բարձրանաս , ո՛վ սրաթուիչ բազէ , ինչպէս ամպէն կը խօսէիր առ քո նահատակն Յովբ :

Այո՛ , Տէր , բազէն քո հրամանով կը վերանայ , իսկ դու՝ Հօրդ հրամանով կը վերանաս ի խաչ , թեւերդ ի թուիչ կը տարածես , զաչերդ յանդուճողս կը սեւեռես , խաչի բարձրադիտակ գազաթէն որսական բազէի նման շեշտակի սաւառնե՛լ կուզես ի սանդաւրամետ , որպէս զի որսերդ կորզես ու որսաս սատան բռնաւորին ճիրանէն և վեր բերես կրկին ի դրախտն . ուր մարդն որս եղեւ խաբուսիկ բանտարկուին և մահն այս աշխարհը մտաւ :

Յօղէ , ո՛վ կենաց աղբիւր , ցօղէ սուրբ աբիւնդ , թող ի խաչդդ իջնան թափին մեր նախահօր գազաթան վերայ . զոր մահուն



ոստիկան, ո՛հ, ոտնհարելով գլուխդ գերեզ-  
մանին գուրբ. մարդն անմահ էր, լոյս էր,  
Աստուծոյ անեղծ ձեռագործն էր. աւա՛ղ  
անմահն մահացաւ, ու եղծաւ տիրական  
սլատկերն :

Ո՛վ յառաջատես Իմաստութիւն, թող թե-  
րահաւատները դիպուած կարծեն. այլ ես  
կը հաւատամ, որ դու քո յաղթական խաչը՝  
մեղուցեալ նախամարդոյն գազաթան վերայ  
կանգնեցիր, որպէս զի արեանդ կենսատու  
ցօղով՝ մեր հանգուցեալ նախահօր կեանք  
տաս, նոր վերաստեղծես հողէն. և ամբողջ  
աղամային հաւատացեալ սերունդը կրկին ի  
կենդանութիւն արարչագործես :

Տէր, դու երբեմն մինչ կենաց բան կա-  
ւետարանէիր. Յակովբայ ջրհորին գլուխ նըս-  
տար ինչպէս վաստակեալ ու ծարսուած ու-  
ղեւոր մի. Սամարացի կնոջէն ջուր կը խընդ-  
րէիր. և այժմ ի խաչէդ անադորոյն դահիճ-  
ներէն ջուր կը խնդրես : Չգիտեմ, յիրաւի  
ծարաւի՛ ես, թէ սիրտդ ի սիրոյ կը տոչորի,  
կասես թէ ծարաւի եմ, միթէ Ովկիանոսը կը  
քաւէ՞ քո ծարաւ և սրտիդ հուրը չիջուցաներ :

Միայն կը ծարաւակրի՞ս խաչեալդ իմ Յի-  
սուս, քաղցեալ չե՞ս և հաց չե՞ս ուղեր. և  
ի՞նչ պէտք են այլ եւս քեզ համար ասե-  
րախտ ժողովուրդին հաց և ջուր. սլահ մի  
ժուժկալէ և կը մեռնիս, կանցնի քո ծարաւ :  
Բա՛բէ, ո՛վ կը հաւատայ. միթէ դու այն կեն-  
դանի ջրոյ ակն չե՞ս. որ բղխեցար Նրուսա-  
ղէմի մէջ և կաղաղակէիր. « Որ ծարաւին իցէ  
եկեսցէ առ իս : »

Տէր, դու չե՞ս և չէիր այն հրաշաքուղիս  
հոգեւոր վէ՛մն, որ մշտահոս անհատ կը վա-  
զէիր Իսրայէլեան բանակին ետեւէն և կար-  
բուցանէիր տրտնջող թերահաւատ ժողո-  
վուրդը : Արդ կը ցամաքի՞ս, հոգիդ աւանդէ,  
թող հեթանոս հարիւրապետը տիգաւ խոցէ  
վիմիդ կողը. տես ինչպէ՞ս կենդանի կողդ  
կենսացնցուղ ազրիւր կը բղխի, ջուր և ա-  
րիւն իմիասին : Անհաւան ազգ տեսաւ ու չը  
հաւատաց, այլ ես հարիւրապետին հետը կը  
հաւատամ և կը դաւանիմ թէ, « Իքէն է, Տէր,  
աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց տե-  
սանեմք զլոյս : »

Յիսուս, որդի Կուսին, մահուան ժամը



կը մօտենայ. պահ մի զաչերդ՝ առ Մայր քո  
դարձուր, որ խաչիդ պատուանդանին տակ  
ուշագնաց անկեալ՝ ծնողական գորովով կա-  
ղէկիցի: Սէր՝ որ քան զմահ հզօրագոյն է,  
զքեզ և զմայրդ նոյնավիշտ կը տանջէ. Սի-  
մէօնին սուրը՝ Կուսին ի սիրտ կը մխի. և քո  
փտակահոս կողը՝ Ղուենկիանոսին գեղարդ:  
Քո անտար ցաւերդ առօրեայ են, մահով  
կսպառին, և դու կը ննջես ի հանգիստ. այլ  
սգալի մօրդ տակաւ տակաւ կառաւելուն:

Եւ կարի՛ յոյժ. երբ անմահդ մահացեալ  
տեսնայ, երբ իբրեւ մեռեալ զքեզ պատանէ  
և միամօր որդիդ դնէ ի գերեզմանի. երբ  
Գաբրիէլին աւետիս յուշ ածէ և անվախճան  
թաղիդ ու աթոռիդ տեղը՝ փուշ պսակ, և  
մահապարտից խաչը տեսնայ: Այո՛, պիտի  
մորմոքի, զի մայր է. այլ եւս չկայ աշխար-  
հիս վերայ բնաւ սիրտանք մի մայրական սըր-  
տին մինչեւ տեսնայ քո փառաւոր յարութիւն:

Տէր, որ տիեզերաց խնամակալ Աստուած  
ես, յանձնարարէ և տուր քո հրաժեշտ, ո՛վ  
այսուհետեւ պիտի խնամէ քո անորդի Մայ-  
րիկդ: Հայրագիրդ Յովսէփ վաղ մեռաւ,

մերձաւոր մտերիմներդ ու բարեկամներդ  
հեռացան քեզմէ ու չկան ի միջի. միայն քո  
սիրելի աշակերտ Յովհաննէս կայ, այն որ  
զքեզ ողջագուրեց և ասաց. « Տէր, ո՛վ է,  
որ մատնելոց է զքեզ: »

Եւ դու ծնողասէր և հնազանդ Որդեակ,  
ի հոգեհանիդ ժամուն երկու բան միայն կը  
բարբառիս. « Ով կին, ահա՛ որդի քո. և  
թէ՛ Սհա մայր քո »: Եւ ցոյց կուտաս այ-  
սու, մարդասէր և ամենախնամ Տէր, թէ  
խաչիդ փրկագործութեան ծանրավիշտ հո-  
գերուդ մէջ՝ դու ամէն բան կը մոռնաս բաց  
ի խաչդ, և սորա համար քեզ հետեւող խրմ-  
բին աշխարհուրաց անձնանուիրութիւնը կը  
քարոզէիր. « Որ սիրէ զհայր կամ զմայր ա-  
ռաւել քան զիս, չէ ինձ արժանի » Այլ քա՛ւ  
թէ կարծեմ, որ դու Աւետարանիդ այս վրձ-  
նով որդիական սիրոյ սրարտիքը կուրանաս,  
հակառակ բնական և Հօրդ օրինաց, որ կը  
պատուիրէ զհայր և զմայր պատուել:





ՅԻՍՈՒՍ ԱՆՕԳՆԱԿԱՆ ԹՈՂԵԱԼ

Եւ դու զմայրդ կը թողուս, Յիսո՛ւս, որ քո սիրովդ սիրան ի խարոյկ կը տոչորի, մեծածայն կազաղակես առ հայրդ. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս:» Ի՞նչ կը խօսիս, ինքնազօր Տէր, իբրեւ անօգնական մանուկ կը պաղատիս. Աստուած ես, Աստուածորդի ես, զԱստուած քեզ օգնական կան կը կանչես: Ընթրեաց երեկուն կասէիր, «Ես չեմ միայն, զի Հայր ընդիս է.» և այժմ գքեզ թողո՞ւց: Մարդ կը վարանի և կը գայթակղի երբ խաչիդ ճառը մտքով և եթ ըմբռնել ուզէ:

Ի՞նչ է այս քո խորին խորհուրդ, որ մեծութեան և նուաստութեան մէջ, զօրութեան և տկարութեան մէջ կը տարուբերիս: Մերթ մինչեւ Սինային գլուխ բարձրանալով՝ իբրեւ մրրկալից ամպը կայծակունս կը փայլատակես. և խորագան ձեռքդ առնելով տաճարին գոգերը կը հարուածես. մերթ եւս այնչափ կը խոնարհիս, այնչափ կը նուաստանաս, մինչեւ մարդոյն մեծամիտ ոգին այլ եւս չի հաւատար, թէ Աստուած կը խոնարհի մինչեւ մահապարտից կառափնատեղ:

Ո՛վ ես դու, որ ելեր ես բարձր վիմին վերայ, հոգւոյդ աչքով կը նայիս դէպ ի խաչին տեսարան: Ի՞նչ կը տեսնաս, Ամբակում, ի Բեթլէհէմի մուր, եզին և իշոյն մէջ յայտնեալ Բանն՝ այժմ կերեւի քեզ երկու չարագործ աւաղակաց մէջ մահապարտից փայտէն մերկ կախուած, փառաւորեալն Աստուած մատնեալ ի խաչ և յանարգութիւն, ո՛վ, կը հիանաս և կաղաղակես. «Տէր, զուր քո լըուայ և երկեայ, նայեցայ ի գործս քո և զարհուրեցայ:»

Դու հազար տարի յառաջ խաչին ստուերադիծ միայն տեսնալով կը զարհուրի՞ս, Մարգարէ, մարդացեալ Աստուածորդւոյն հիանալի մեծագործութիւնը այդ չէ միայն, դեռ խաչէն իջնալով ի գերեզման պիտի երթայ: Դու եւս շատ մի կենար ի վիմիդ, չուտ իջիր ի վայր, թո՛ղ խաչին տեսարանը, դնա՛ճաչդ տար ի Բաբելոն. քան զայդ աւելի մի ջանար խորհրդազգաց լինել, զի ճառ խաչին և խորհուրդը՝ մեր գիտութենէն ծածկեալ է:

Արեւն ի միջօրէի կէտը հասաւ, ո՛վ դու լոյսդ և արեւդ փառաց, ասա քո վերջին



բան • « Ամենայն ինչ կատարեալ է », և աւանդէ հոգիդ • և ահաւասիկ արեգակն խաւարեցաւ , խոր գիշերով պատեց բովանդակ աշխարհը , ապիրատ Սաղիմ իւր երեսը դարձուց , որ չտեսնայ խաչին վերայ իւր Արարիչը՝ ի մահ դատապարտեալ :

Խաչեալդ իմ Տէր , մինչ ողջ էիր դու , զարմանազան սքանչեւեօքդ Խորայելի աշխարհը լցիր և արդ ի մահուդ եւս սքանչելիս կը գործես : Դեռ ի գերեզման չգնացիր , հազարաւոր ամաց մեռեալները գերեզմաններէն յարութիւն կառնեն : Տաճարին վարագոյր վերուստ ի վայր կը ցելու , Հոգին ի տաճարէն կ'երթայ , Ահարօնեան քահանայութիւնը կը դադրի , մեծ Քահանայապետիդ խաչին վերայ միանգամ մատուցեալ զոհ կը մշտնջենաւորէ • և զայս ամէն գործելով ցոյց կուտաս ուրեմն , թէ ի մահուդ՝ կենդանի Աստուած ես և քո մահ՝ մեռելոց համար անմահութիւն է :

Զվէմդ անարգեցին շինողք , սորա համար ահա Սիօնի լեռան ապառաժ վէմերը մեծ ճայթուտով կը պատառին , անպարտ մա-

հուդ համար քարերն անգամ չհանդուրժելով աղաղակեցին • Խուլ և համր Յակովբայ որդիքները համրացան ու չլսեցին : Կեղծաւոր ու նախանձաւոր դպիրք և փարիսեցիք , որ հին Տաճարին իբրեւ շինողք կը համարուէին և որ Մովսիսի յաթոռ կը բազմէին , նոքա զքեզ անարգելով անարգեցին • Երբէք չիմացան խելակորոյս ոգիները , թէ դու ես միակ հին ու նոր Սիօնին ընտրեալդն և միացուցիչ վէմն անկեան :

Սարեկայ խաչի ծառէն կախուած , ո'վ ճշմարիտ զոհ , քանի՞ անուշահոտ է ծուխդ որ կը ծաւալի և կը ծառանայ դէպ երկինքը • աշխարհ բովանդակ զոհիդ փրկութեան հոտով լցաւ : Եւ ահա քո Հայր Աստուած Երկինքէն իջեր է Պողոսթային գլուխը , հրեշտակներ ու մարդիկ խաչիդ սանդուղէն ելեւէջ կառնեն , հաշտութեան նշան ուխտին կամար կապեր է մէկ ծայրն յԱստուած , միւսն ի մարդիկ , երկինք և երկիրը ի հաշտութիւն կը կապէ : Եւ այսպէս կը լրանայ և կաւարտի , Տէ՛ր , փրկաւէտ զոհիդ մեծահրաշ խորհուրդ :





ՅԻՍՈՒՍ Ի ԳԵՐԵՋՄԱՆ ՄԱՀՈՒ

Աստուածորդիդ իմ անմահ, ահա մարդիկ քո կեանք երկրէս բարձին: Եւ ո՞ պիտի պատմէ այսուհետեւ քո ազգատոհմ: Միթէ դու այս աշխարհիս վերայ անազգ անտոհմի՞ն ես, որ խաչին վերայ մեռած այնպէս մնացիր. միայն Մայրդ կայ առ խաչիդ ողբով ու կոծով նուաղեալ, և մի քանի եղբայր ու քոյր մտերիմներդ, որ խապառ զքեզ սիրեցին և մինչեւ ի մահդ չմեկնին քեզմէ:

Ո՞ր է քո վերջին հանգիստ, անթաղ անգերեզմա՞ն պիտի մնաս Տէր: Հայրենի ժառանգութիւն կալուած չունիս, անտուն անստացուած կեանք վարեցիր աշխարհիս վերայ: Յակովբայ տան պարգեւ տուիր Աւետեաց երկիրը. տեսցուք, թէ նա քո գերեզմանին համար մի կանգուն տեղ կուտայ:

Արեմաթացի իշխան Յովսէփ, որ ի ծածուկ քեզ կը հաւատար ու կը պաշտէր, և այն որ դպրաց ու փարիսեցւոց ահէն չհամարձակեցաւ երթալ Պիղատոսի առեանը և քո դատը պաշտպանել, աւաղիկ նա քո մահուանէն

յետոյ կը սրտապնդի գէթ ի մահուդ՝ թաղմանդ սպասաւորել: Նա մոռացաւ ճշմարիտ բարեկամութեան սէրն ու սլարտիքը, մտաբերեց ընդհանուր մարդասիրութեան սլարտիքը վճարելով՝ քաւէ իւր յանցանքը: Ուստի գնաց առ Պիղատոս և ասաց: Տէր դատաւոր, մի սլարդեւ կը խնդրեմ ի քէն, որ աշխարհիս իսառք կամ պատուանչան չէ, այլ միայն մեռած մարմին մի Նազովրեցի Յիսուսին, որ տակաւին անթաղ մնացեր է Գողգոթային գլուխ: Նա աշխարհիս հրապարակին վերայ ինկած՝ անտերուհ լեռեալ մի է. բարեկամ ու պաշտպան չունի: Միայն մայրիկ մի ունի, որ խաչի սլատուանդանին տակ թաղկացած է իւր միակ որդւոյն սիրով: Տէր, կաղաչեմ հրաման տուր, երթամ թաղեմ Յիսուսը, գէթ սիրովեմ սուգն ու լացը՝ նորա վշտագին մօրն:

Եւ գիտե՞ս դու, ո՞վ իշխան, մեր անհաւան Հրէից ազգը առ նախանձու մատնեցին քեզ այն անմեղ և արդար անձն. և դուք ինքնին զգացիք իսկ նորա անմեղութիւնն. թերեւս սորա համար ձեռքդ ժողովուրդին առաջ լուսնաւով՝ անպարտ արիւնէն զձեզ քաւել ուղեցիք: Եւ ես իսկ, որ նոյն Հրէից



ժողովուրդէն եմ, բնաւ հաղորդ ու մասնակից չեմ Յիսուսի մատնութեան կամ նորա տա-  
րապարտ մահուն :

Տէր իմ, այնպէս կը թուիս թէ անտե-  
րունչ ես, այլ դու բարեբաստիկ կը համար-  
ուիս քան զազքատն Ղազարոս : Եւ դու տե-  
սե՞ր զայն արդեօք . որ մեծատան դրան ա-  
ռաջ փողոցին մէջ մեռաւ, ոչ բարեկամ ու-  
նէր, ոչ ազգական . իւր պահապան և կարե-  
կից փողոցի շուններն էին, որ լիզելով կը կազ-  
դուէին նորա ցաւալից վերքերը : Եւ դու  
միթէ կը մոռնա՞ս և չես յիշեր առակիդ մէջ,  
թէ ո՛վ եղաւ յուզարկաւոր և թաղեց այդ  
փողոցի ազքատը :

Ո՛վ տիեզերաց Տէր և մեծատուն, որ աշ-  
խարհիս հրապարակներու վերայ ինկած թըշ-  
ուառ Ղազարոսներու համար աղքատացար ու  
մեռար իսկ, մի՛ հոգար թէ մարմինդ Ղա-  
զարոսի նման անթաղ կը մնայ . ահաւասիկ  
հրէից երկու պատուական իշխանները քեզ  
յուզարկաւոր կուգան : Նիկողիմոսն եւս կըն-  
կերանայ Արեմաթացոյն հետը . այն որ ա-  
րեւէն վախնալով զլոյսդ՝ գիշերուն մէջ տես-

նալ կ'ուզէր և որ կը հարցնէր կրկին ծնըն-  
դեան խորհուրդը և կ'ուսանէր քո լուսաւոր  
վարդապետութենէն :

Նրեկոյ է և արեւն ի մուտս կը խոնարհի .  
ճեպեցէ՛ք, ո՛վ Յիսուսի թաղման սպասար-  
կուք . ճեպեցէք մեր աշխարհի արեւուն հետը՝  
կենաց լոյսն և արեւն ի հոգ դնել : Եւ ո՞ւր,  
ո՛հ, աշխարհին Տէր գերեզման չունի : Յով-  
սէ՛փ իշխան, ասեն թէ պարտիզիդ մէջ վի-  
մափոր գերեզման մի ունիս պատրաստ՝ ի  
նախնեաց քեզ ժառանգ մնացեր է, դու զայն  
Յիսուսին քնծայէ : Պաշտող կանայք՝ թող  
պատան պատրաստեն . Նիկողիմոս իշխան ըզ-  
մուռս և հալուէ բերէ . պատուեւ ու պատա-  
նել պէտք է այն խաչեալ մարմինը, որ իւր  
անուշ հոտով զաշխարհ լցոյց . մարդկային  
նեխեալ ու փտեալ մարմինը անապականու-  
թեամբ զմուսեց . որոյ վասն կողբար Ղաւիթ,  
«Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց  
անզգամութեան իմոյ : »

Ելէ՛ք Գողգոթայի գլուխ, երկիւղած իշ-  
խանք, ելէ՛ք և երգեցէք ՍՈՒՐՅ ԶԱՍՏՈՒԱԾՆ.  
խաչէն ի վայր առէք Յուդայի Առիւծակո-



րիւնն, որ ելաւ բազմեցաւ խաչի դիտակին վերայ: Արդ իջուցէք թող հանդէի գերեզմանին մէջ, թող սլահ մի կափուցանէ իւր ամենատես աչքը, զի սիրտն արթուն է: Այսպէս մեռաւ ու ննջեց քո խաղաղութեան այրն, Ղաւիթ. միթէ ո՞չ յաւելուցու յառնել՝ որուն լի յուսով կը հաւատայիր:

Յիսուսի թաղման երգահան ողբերգուն դո՛ւ ես, մեծդ Սահակ. քնարդ ա՛ռ, ե՛կ այսր. Յովսէփայ պարտիզին մէջ հով ծառի տակ նըստիր, մինչեւ իւղարբեր կանայք պատանեն զՅիսուս՝ դու երգէ «ԶՊԱՐԳԵՒԻՍՏՈՒՆ»: Երգէ՛ թէ անմահն Աստուած մեռա՛ւ և Պիղատոսէն իբրեւ պարգեւ խնդրեց զայն Յովսէփ: Երգէ՛, որ լոյս էր և կը հազնէր զայն իբրեւ հանդերձ. ո՛վ, կը հաւանի և չի դժուարիր, կը թողու որ մահկանացու ձեռք զինքն պատանէ: Երգէ՛, յաւիտենից կենդանին՝ կը մեռնի, արթուն Բնութիւնն՝ կը ննջի, արդարութեան Արեգակն՝ գերեզմանի ստուերով կը ծածկի, Հօր փառաց Ճառագայթ՝ կը նսեմանայ, կեանքը՝ կենազրաւ կը լինի, արարածոց Յնձութիւնն՝ կարտասուի իւր սգաւոր մտերիմներէն:

Երգէ՛ զԵրրորդ ճայնդ, էնն Աստուած, գիրն անփակ՝ կը փակի և մեծ Քահանայապետն՝ կը կնքի քահանայից մատանով. կափարիչ ծանր վիմին տակ կը դրուի այն աշխարհալիւր վէմն. որպէս զի անշարժ մնայ, չը խլրտի ու փշրէ աշխարհիս ամբարտաւանութեան պատկերները:

Կենարար Տէ՛ր, դեռ երէկ Ղաղարոս բաւեկամդ գերեզմանէն կանչեցիր, հրաման տըուիր որ նորա երիզապինդ և պատան քակեն և կապանքէն լուծելով թողուն որ երթայ. բա՛րէ, դու այսօր մեռելի նման անշունչ ես: Մարիամ այն թաղմանդ իւղն պահեր էր մինչեւ քո պատանաց օրը. մեղապարտ կիները որ երէկ ողջ գլուխդ և ոտքդ աղնիւ իւղով օծեցին, այսօր ողջ մեռած մարմինդ կ'օծեն. դու որ ի հոգւոյն Աստուծոյ ճշմարիտ Օծեալն էիր, և եկար միայն աշխարհիս աղքատներուն աւետարանել:

Շուտ արէք, ո՛վ եղբրամարք, շո՛ւտ արէք. Յիսուս յաւիտենական մեռեալ չէ. շատ խնամով մի՛ կարէք նորա պատանը մի շօշափէք նորա խոցեր ու վէրքերը. առէք գլխէն



փուշ պսակը, հանէ՛ք կողէն տիգին սայրասուր ծայր, ժողովեցէք արևնոտ բեւեռները, զամէնն եւս պահեցէք իրբեւ յիշատակ. միամօր որդեակն ի գերեզման դրէք, առէք ցաւալի Մայրն ու գնացէք. բաւ է այսչափ ձեր կոծն ու լաց :

Հանգի՛ր Տէր իմ, հանգի՛ր. թող դիւրանան խոնջեալ ոտքերդ, թող անցնի ցաւն վիշտերուդ ու վերքերուդ. կասէիր թէ որդի մարդոյ գլուխ դնելու տեղ չունի, արդ գերեզմանին մէջ դիր. ապիրատ Նրուսաղէմ այդպէս կամեցաւ քեզ : Պաղեստինոյ քարուտ երկրին մէջ շատ վաստակեցար, ո՛վ փրկութեան մչակ. գերեզման քո վերջի քրտանց զրաւն է, այլ եւս խաչակրութեան քայլափոխ չունիս, խաչիդ և տնօրէնութեանդ ասպարէզն այսչափ էր :

Ո՛վ մարմնացեալ ճշմարտութիւն, Բէթ-լէհէմի երկրէն ու մարէն բուսար, երեք տարի միայն զքեզ յայտնելով՝ Աւետարանիդ կենաց բանը քարոզեցիր. և արդ գերեզմանին մէջ կը թառամիս, ո՛վ ծաղիկդ ու գաւազանդ Յեսեայ : Ամիսիէ ձեռքդ, Քիսուս, որով ա-

պերախտ ժողովուրդին որդիքները յարուցիր : Թող լսէ այժմ քո դառն հառաչանաց ձայն՝ որ սրտառուջ հոգեով կը կանչէիր. « Նրուսաղէմ, երուսաղէմ. . . Նիթէ գիտէիր դու գոնէ՛ յաւուրս այսորիկ զխաղաղութիւն քո, բայց արդ վերացաւ ի քէն : »

Աւա՛ղ, Արրահամու որդիք համրացան ու չը լսեցին քեզ : Դու Յակովբայ տան մըշտընջեաւոր խաղաղութիւնն էիր. գո՛նէ այցելութեանդ ժամանակը զքեզ չճանչցաւ, և այժմ դու եւս խռովելով կը վերանաս իրմէն և կը ծածկուիս : Իսրայէլի ժողովուրդին փառք էիր, նա զքեզ ոտնահարեց. որպէս զի քեզ հաւատացող հեթանոսաց իրրեւ լոյս յայտնուիս և Սիմէօնի գուշակութիւնն՝ ըստուգապէս կատարուի :

Յիսո՛ւս, դու Յովսէփի գեղեցիկն էիր, որ եղբայրներդ առ նախանձու քեզ դաւ գործեցին : Այլ քո դէպք նոյնօրինակ չէ, նա ինքն ողջ մնաց, միայն ծաղկենկար պատմուճառն ուլի արեան մէջ թաթխելով՝ համրաւեցին թէ գազաններ զՅովսէփի կերան. իսկ դու կուսական մարմնոյդ անձեռագործ պատ-



մուճանովդ հանդերձ գենեցար, և զքեզ ողջամբ թաթաւեցին արեան մէջ. թող այս՝ և արդ մահուան ու գերեզմանին դուրն իջուցին: Յակովբ նահապետ Յովսեփայ արիւնասերկ սլատմուճանին վերայ անմխիթար կուլար: Իսկ քո Հայր երկնքէն աւաժոյժ խաչիդ վերայ հայեցաւ, և այժմ եւս գերեզմանիդ վերայ կը հայր: Գիտես թէ անկարեկից է, կզբօսնու և կը զուարճանայ. վասն այն դու գերեզմանիդ խորէն սրտադոջ բարբառ մի կը հանես երկինքը, « Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո (Հայր) զամենայն զբօսանա քո ածեր ի վերայ իմ »:

Ա՛յ, քանի՞ դժուարին է հասկնալ քո Հօր և քո անհաս խորհուրդները, ո՛վ Աստուածորդիդ մեռեալ: Ինչ որ քեզ համար խաչ, անարդութիւն, և մահ է, Հօրդ համար հաճոյական սլաշտօն և զոհ է:

Միթէ քո Հայր, մեր փրկութեան համար խաղ արար զքեզ, խաչի տեսարան թողուց և արդ գերեզմանիդ վերայ կ'զբօսնու. ոչ ինչ փոյթ չունի, կը թողու, որ անմահդ՝ ի կարգս մեռելոց թաղեն. լոյսդ՝ հողին հետ խառնել

կուտայ, կեանքդ՝ մահուն կը մատնէ, անբաժան սէրդ՝ մինչ ի դժոխս կը մերժէ: Վասն որոյ դու ոչ միայն աշխարհի մարդիկներէն, այլ նոյն իսկ քո Հօրէն թողուած իբրեւ անծանօթ մարդ մի եղար աշխարհիս վերայ: Նւարդ թողիր գնացիր մեռելոց աշխարհը. տեսցուք այդ մոռացեալ երկրին մէջ ո՛վ պիտի ճանաչէ զքեզ:

Ար ննջե՞ս, կը լռե՞ս և գերեզմանիդ խորէն չե՞ս մռնչեր, հզօր Առիւծ. ես զքեզ տեսայ, դու երբ ի Բեթանիա՝ Ղաղարէ՝ կը կանչէիր, ձայնդ մինչեւ ի սանդարամետ հասաւ: Տեսցուք, ո՛վ պիտի կոչէ զքեզ, զի անձնանուէր խաչակրութեանդ մէջ մարդ մի եղար առանց օգնականի, և կասեն քեզ համար թէ մեռելոց մէջ աղատ ես: Չգիտեմք, ի՞նչ է այս, մահուան ստուերին տակ և մեռելոց աշխարհին մէջ աղատութիւն կա՞յ:





ՅԻՍՈՒՍ Ի ՆԵՐՔԻՆ ԲԱՆՏՆ ՍԱՆԴԱՐԱՄԵՏԻՆ

Ո՛վ դու արեւդ անստուեր, որ մեր աշխարհին՝ կենաց լոյսն էիր, գնացիր մտար մեռելոց աշխարհը: Չգիտեմ, ո՛վ բացաւ քո դէմդ այն յաւիտենական աղիւսեալ դուռն, որ երկաթի սողնակով և նիգերով ամրացեալ էր:

Այլ քո զօրութեան ո՞ ընդդէմ դառնացէ ինչպէս կը խօսի Յովբ, զի դու դարձա՞ր ի բարկութենէ և իքէն սարսեցան կէտք, որք ի ներքոյ երկնից:

Գանիէլի տեսեան փոքրիկ ու հրաշալի վէմ Յիսուս, Բէթլէհէմի լեռնէն հատար. երեք տարի Սաղիմայ աշխարհին մէջ գլորելով գլորելով հասար մինչեւ գերեզմանին վիհը: Եւ արդ գերեզմանէն կը գլորիս մինչեւ Սանդարամետին աշխարհ, մինչեւ ի ներքին արգելահան բանտն, մինչեւ գերեալ հոգիներուն երկաթէ զնդան. և մինչեւ անդ հասար դու՝ մեծացար լեռնացար, ինչպէս հիւսիս ձիւնակոյտ, ու ժգնակի թափով զարկիր քանդեցիր հին Նրիբովի դռները ու պարիսպները: Խաւարին իշխանը սարսափեցաւ

թէ ո՛վ է այս ահաւոր գունդը, որ վեց հազար տարուան շինածս յաւիտենական ամբուրութիւններս քանդեց, աւերակ դարձուց:

Գեղեհօնի գարեղէն փոքրիկ նկանակն ես. Տէր, դու զայն, գիտեմ մարդեղութեամբդ կազմեցիր բանդ ի մարմին փոխելով ու չարչարուելով եւրար Գողգոթային գլուխ. և ահաւասիկ անտի աշխարհադուրդ շարժամբ հողովելով կը յարձակիս Մատիանացոց բանակին վերայ. ՍՈՒՐ ՏԵԱՌՆ ԵՒ ԳԵԴԵՀՉՆԻ, գոչելով՝ կը զարնես և բովանդակ խաւարագունդն Մատիամու կը փչրին կը ջախջախին զօրաւոր նկանակիդ առաջ:

Ինչպէս առակով ցոյց տուիր, Յիսուս, արդ գնացիր մտար հզօրին տունը, արդ կապէ նախ այդ ապստամբ հզօրն. խաչիդ կռնով փչրէ դժոխոց դարբնին կռու շրջթաները, թող արձակուին ի լոյս գան, մահուան ծանր ստուերին տակ փակուած կալաւաւոր հոգիները:

Ի լոյս ելէք ի լոյս, յազատութիւն ելէք, ո՛վ յաւիտենական կոճեղով ոտնակապեալ



գերիները . ձեր Փրկիչն և գերեզարձ հասաւ  
և դուք կը ճանաչէ՞ք զինքն : Նշան կուտամ  
ձեզ , սրունքներ դեռ կարմիր են , խաչի հըն-  
ժանը նոր կոխեց և եկաւ , մի կողին վերայ  
վիրաբաց նշան ունի , ձեռքեր և ոտքերը հա-  
մակ ծակոտուած են բեւեռներէն . իւր յաղ-  
թական դրօշակը՝ խաչանշան փայտին վերայ  
պարզած յարին թաթաւեր է : Սորա համար  
Մկրտիչն ասաց՝ թէ Աստուծոյ դառն է , այժ-  
միկ քաղցած առիւծ դարձեր է և կը մռնչէ  
որսերը գտնալու , Հօր բարկութեան կայ-  
ծակն է , որ երկնքէն շեշտակի մինչեւ ի ներ-  
քին դժոխս կ'իջնայ , որ պիտի զարնէ սատան  
թշնամուոյն գոռոզ գազաթէյն և զայն տոչորէ  
և այրէ անչէջ կրակով :

Հուր էիր , Տէր , այլ Յովհանու պէս մտար  
մեծ կիտին փորը՝ Դանիէլի ճարտարած խը-  
մորէ գունդն էիր , զոր քո Հայր ձգեց Բա-  
բելօնի մեծ վիշապին բերանը . տեսցուք , թէ  
կարող է զԱստուածդ կլանել , ինչպէս մեղա-  
պարտ Ադամ :

Կէս գիշեր է , Տէր իմ , հերիք է որ Լոյսդ  
խաւար աշխարհին մէջ մնայ , չո՛ւտ արա ա-

ւարներդ ժողովէ . և պինդ կապէ մահուան  
բռնաւոր ոստիկան , որ այլ եւս մեր աշխարհը  
չաւարէ : Եւ դու շտապաւ դուրս ել ի սան-  
դարամետէն , արի՛ դարձեալ Յովսեփայ պար-  
տէզը և քո գերեզմանդ եւս կենագործէ , խա-  
չին վերայ մեռած ու թաղուած մարմինդ ա՛ռ ,  
զոր քո հայր անապական պահեց և չիկրցաւ  
դժոխածին որդը կրծել զայն իւր երկաթի  
ժանիքներով :

Արդ հագի՛ր վերստին անտիսեղծ մարմնոյդ  
հանդերձ , որ նոր փեսայութեանդ գեղե-  
ցիկ պատմութեանն է . ահաւասիկ լուսափայլ  
հրեշտակը՝ շիրմիդ կափարիչ վէմը ի բաց դը-  
լորեր է , նստեր է վրան . պահապան զինուոր-  
ները զարհուրազին փուռեր են գետինը :  
Վերջին փառաւորութեանդ ժամ հասաւ , Յի-  
սուս , դու հնացեալ մարդոյն վիրանորոգիչ  
ճարտարապետն ես , շինէ դարձեալ քակուած  
մարմնոյդ կենդանի տաճարը . երեք տիւ և  
երեք գիշերն անցաւ և լրացաւ քո պայմա-  
նին օրը :



ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ ԽԱԶԻՆ

Հրեշտակ դու, որ Բեթլէհեմի մարէն Աստուածորդւոյն ծննդեան աւետիս տուիր, և արդ Յովսեփայ պարտիզի գերեզմանէն աւետիս տուր բոլոր աշխարհին. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ:

Հետ հրեշտակին դուք եւս տառարակ և սոխակ, որ Սողոմոնի փակեալ պարտիզին ծառաստանեայց վերայ կը ճխայք ու ճռուղէք՝ երգեցէք նորա սիրաբարբառ երգը. «Արի՛ եկ, գեղեցիկ իմ, աղաւնի՛ իմ, կատարեալ իմ, քանզի ձմեռն էանց, անձրեւք անցին և դնացեալ մեկնեցան»: Այո՛, անցաւ չարչարանաց ձմեռը, եկաւ հասաւ գարուն, թզենին ընձիւղեց բողբոջը, այգիները ծաղկեհոտը բուրեցին. զի ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ:

Որչա՞ր հրաշալի ցորենահատ մի ես, ով կենդանի հաց Յիսուս. դեռ երեկ էր, որ Քո Հայր մշակ խաչիդ ակօսով վարեց Գողգոթային գլուխը և զքեզ ցանեց Յովսեփայ քարալոփ արտին մէջ, ուր ոչ ջուր կար, ոչ հող,

ոչ նիւթ: Զուր քո կողի կրկնակի աղբիւրն էր, նիւթ և պարարտ սերմն՝ քո չարչարուած մարմին: Եւ դու ո՞րպէս վաղվաղակի բուսար բազմաճիւղ հասկերով, վեց հազար տարուան փտած մեռելոց հատիկները հետ քեզ բուսուցիր:

Մարդիկ թերահաւատ են, ո՛վ մեծագործ Տէր, միայն կը հաւատան թէ ցորենի հատիկները կը բուսնին. բայց մեռելոց մարմիններ չեն բուսնիր: Եւ ինչո՞ւ, չգիտեմ, անշուշտ մարմինը կը բուսնի և շնչաւորը չի բուսնիր:

Այլ քո ճշմարիտ հաւատացեալներն այնպէս կը հաւատան ինչպէս կը քարոզէ Սուրբն Պօղոս. «Սերմանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգեւոր»: »

Յիշէ՛, Յիսուս, ընթրեաց իրիկունը, կը գոչէիր առ Հայրդ. «Հայր, փառաւորեալ զորդիքո՛ւ զի և որդի քո փառաւորեսցէ ըզքեզ:» Հնազանդ Մանուկ Հօր, դու քան զՀայրդ կանխեցիր, և խաչիդ յաղթանակով նախ դու փառաւորեցիր զՀայրդ. և ահաւս սիկ Հայրդ առաւել եւս փառաւորեց զքեզ:



Պահ մի զորդեակդ մատենց մահուան ձեռք ,  
այլ չթողուց քո անձն ի դժոխս . որ դու եւս  
մեղապարտ մարդոյն պէս ապականութիւն  
տեսնաս . զի դու սուրբ , անարատ և անմեղ  
էիր : Հոգիդ աւանդած ժամուն , աշխարհի իշ-  
խանն եկաւ խուզարկեց զքեզ և ոչինչ գտաւ :  
Եւ ո՛վ կարող եղաւ յանդիմանել զքեզ վասն  
մեղաց :

Սորա համար մեռելոց աշխարհին մէջ դու  
միայն ազատ ես . մահուան բուռն զօրութիւն  
ընկճեցաւ քո հզօր արդարութեան առաջ :  
Դու մտար 'ի գերեզման և ելար , գերեզման՝  
անմահութիւն դարձաւ , հոգին կեանք տուիր ,  
ստուերն ի լոյս փոխեցաւ , գերեզմանի ապա-  
կանիչ որդերը մեռան եւ քո պողպատէ ոտքը  
ջախճախեց դժոխքին խայթոցը . և դու մահ-  
ուան սրտին վերայ կոխելով կը կանչես ուժ-  
գին . « Ո՛ւր է մահ , զօրութիւն քո , և ո՛ւր ,  
դժոխք , խայթոց քո : »

Դաւիթ , զքնարդ ա՛ռ , լարերը՝ ներդաշ-  
նակ պնդէ , նուազէ քո տառնաղի երգը . դու  
ցնծա՛ , ես էլ հետ քեզ կը ցնծամ . « Որպէս  
այն որ գտանէ աւար բազում : » Մեր հզօր

աւարաւուն գերողէն իւր աւարները դար-  
ձուց , իւր յաղթական կամարը՝ գերեզմանին  
դուռն է . և ահա դուրս կուգայ անտի , հըս-  
կայապէս կ'ընթանայ . ուստի հնչէ՛ յաղթո-  
ղական փողդ . « Զի յարեաւ Աստուած և ցըր-  
ուեցան ամենայն թշնամիք նորա : »

Հող կերէք , դպիրք և փարիսեցիք , օձի  
և իժերու ժանտ ծնունդներ , ձեր կերա-  
կուրն այն է : Դուք կապեցիք զարդարն , որ  
ձեզ դժպնի կը թուէր , որ ձեր գործոց հա-  
կառակ կը լինէր , ձեր կեղծաւ որութիւնը կը  
յանդիմանէր , և դուք փորձ փորձեցիք զար-  
դարն սպաննել և նորա յիշատակը երկրէն  
բառնալ . տեսնալ այնուհետեւ թէ՛ արդեօք  
երկնից այցելութիւնը պիտի պաշտպանէ՞  
զայն . որովհետեւ կը զայրանայիք երբ ոգին  
անարատ՝ զԱստուած իրեն Հայր կը կոչէր . և  
այնպէս կը կարծէիք դուք թէ՛ հեզ և խո-  
նարհ ոգին կը հպարտանայ , ինչպէս դուք  
անձնապանծ փարիսեցիք :

Փորձեցիք , տեսաք աւասիկ , և դարձեալ  
անհաւատ մնացիք , չարութիւնը զձեզ կու-  
րացոյց : Անգիտութեամբ արդեօք զիստաց



Տէրն ի խաչ հանիք, խաչէն ի գերեզման դը-  
րիք, ձեր մատնութեան մատին մատանով  
կնքեցիք: Երկնից Հօր այցելութիւնն իւր  
Արդարոյն դատը պաշտպանեց, և չթողուց,  
որ Սուրեն՝ ապականութիւնը տեսնայ. դուք  
երէկ թաղեցիք Նազովրեցին Յիսուս, և այ-  
սօր Աստուած՝ յաւիտենից կենդանին կոչեց  
և հանեց մահու գերեզմանէն. Յուդայի ա-  
ռիւծն արթնցաւ, և դուք նորա մոնչիւնէն  
ո՞ւր պիտի փախչիք:

Գերեզմանէն լոյս տեսնալով՝ չլացութեամբ  
կ'ամթահարիք դուք, մտածելով թէ մի  
գուցէ յետինն չար լինի քան զառաջինն: Ուստի  
բազում արծաթ գաղտ կը խօսէք զօրական-  
ներուն ձեռք, և խրատ կուտաք որ սուտ  
կարկատելով համբաւ հանեն թէ. «Աշակերտք  
նորա եկեալ ի գիշերի գողացան զնա», մինչ  
մեք ի քուն էաք: »

Այդ անճարակ Գալիլիացի ձկնորսներ՝ գո-  
ղացան, որ ձեր տէնն ամէնք փախեր մտեր  
էին Գեթսեմանի ձիթաստանեայց ծառերուն,  
ձորերուն, ծերպերուն մէջ և զօղեր էին ինչ-  
պէս երկչոտ նապաստակը, որ անգութ որ-

սականներէն հալածուելով՝ կ'երթայ բարձր լե-  
րանց քարերուն կ'ապաստանի: Եւ դուք, չա-  
րահար մատնիչներ, Վարդապետը խաչեցիք՝  
այժմ խեղճ աշակերտները զրպարտե՞լ կ'ուզէք  
և չէք ամաչեր:

Յարուցեալ Տէր, մտերիմներդ անձկու-  
թեամբ և կարօտով քեզ կը մնան. կը յիշեն  
ինչ որ ընթերեաց իրիկուն խօսեցար, « Փոքր  
մի, և ոչ եւս տեսանիցէք զիս, և ապա սա-  
կաւիկ մի և տեսանիցէք զիս »: Յոյց տուր  
ուրեմն, քո սակաւիկն միայն քառասուն օր  
է. ցոյց տուր, որ սգաւորներդ մխիթար-  
ուին. ցոյց տուր, որ աչքով իսկ տեսնան քո  
ճշմարտապէս յարութիւնը. ցոյց տուր, որ  
սրտապնդին և հաւատան քեզ. և դու գի-  
տես, սրտագէտ Տէր, թէ որչա՞փ կը տա-  
տանի նոցա միտքը:

Այս գիշեր էր, Տէր, գերեզմանէն ելար,  
չգիտեմ թէ՝ ո՞ւր կը շրջիս, արդեօք աւար-  
ներդ կը տեղաւորես, չէք ցիրուցան եղած  
փոքրիկ հօտը կ'որոնես: Մերթ պարտիզին  
մէջ Մաղդաղենացւոյն կ'երեւիս, և չես թո-  
ղուր որ անձկաւէտ կինը ոտքդ համբուրէ:



Մերթ ի Գալիլիա կ'երթաս ժամադրեալ տեղին, ուր եղբայրներդ զքեզ տեսնալով՝ ուրախութեամբ և յուսով կը լեցուին: Այլ երկբայեցան քու վրադ, մինչ տեսին փառաւորեալ մարմնոյդ կերպարանք, որ լոյս կ'արտափայլէր. այնպէս կարծեցին թէ՝ դու չես նշմանիր այն հեզ և խոնարհ Յիսուսին, որ ղենջակ ախածանելով՝ անցեալ իրիկունը նստար և նոցա ոտքը լուացիր: Իսկ Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս, որ ճառագայթով լոյսդ առ հաւատչեաց տեսեր էին Թափօրին գլուխը՝ նոքա չերկուացան. այլ գիտացին թէ՝ դու նոյն հրաշափայլող լոյսն ես. հաւատացին քեզ ու հաստատեցին երկմիտ եղբայրները:

Մինչ դու քանիցս անգամ երեւցար աշակերտներուդ, տակաւին թերահաւատն թովմաս զՔեզ չէր տեսեր. եղբայրներէն անջատուած՝ ո՛վ գիտէ թէ՝ ո՛ւր կը գեգերէր առանձին: Չգիտեմ Հրէից երկիւղէ՞ն էր, թէ՝ զՔեզ գտնելու համար. և միթէ կ'երկնչէ՞ր, որ խրախոյս կը կարդար լքեալ ընկերներուն. Օ՛ն եկայք, որ մեք եւս մեր Վարդապետին հետը մեռնինք:

Մի նուագ՝ երբ նա եւս խմբին հետը փակուած էին ամէնքը առանձին տան մի մէջ, մտախորհ կը լինէին և կը պատմէին իրարու քո նորասքանչ յարութիւնը. դու յանկարծ փակուած դռնէն ներս մտար ու կայրիւ նոցա մէջ: Հրաշքիդ կը հաւատամ, Տէր, դու որ կնքեալ գերեզմանէն և մահուան ստուերին ճնշող ծանրութենէն դուրս ելար, և որ լեռները կը հարթես, միթէ կարո՞ղ էր տան պատն և դուռն քո թափանցիկ լուսախառն մարմնոյդ դէմ դնել: Առ որ բնախօսն կը վարանի և կ'ուղէ քո մեծամեծ հրաշքները բնական օրէնքով լուծել, մինչ դու ՚ի վեր քան զընականն կը գործես. և կը սրտմտին մարդիկ թէ՝ ինչո՞ւ իրենց պէս չես գործեր:

Անուշ և աղուական ձայնովդ կանչեցիր. Թովմաս, բե՛ր ձեռքիդ մատուցները, միտէ իմ խոցեալ կողը, տես աչքովդ ոտքիս ու ձեռքիս ծակոտուած բեւեռատեղերը, ու լաւ շօշափէ բոլոր վերքերս և հաւատա, թէ՛ ես ձեր խաչեալ վարդապետն եմ: Պարծեցար, Թովմաս, որ ինձ հետը մեռնէիր, չմեռար և գոնէ մինչեւ ի խաչ գայիր, ես միայն ինքնին մեռայ, ինքնին գնացի ի մահու տապան,



ինքնին իջայ ներքին բանտն, ինքնին գրաւեցի աւարներս, ինքնին ելայ գերեզմանէս և արդ կ'երեւիմ ձեզ, խկապէս նոյն վարդապետն եմ, որ երեք տարի ամբողջ ձեզ հետ շրջելով՝ կենաց բանը աւետարանեցի. կը հաւատաս, Թովմաս, թէ ես նոյնն եմ. սոսկ աննիւթ ոգի մի չեմ, զի ոգին ոսկր և թանձր մարմին չունի:

Այժմիկ կը հաւատամ, Տէր, զՔեզ ձեռքովս շօշափեցի և քանի՞ նոր և թարմ են դեռ կարմրանիշ վերքերդ, գիտես թէ նոր խաչուած՝ արիւն կը հոսեն: Մտնեցաւ կարմիր ներկեցաւ, վա՛շ, թող այս յիշատակ ձեռքիս վերայ մնայ, Տէր, քանի տեսնամ, յիշեմ թերահաւատութիւնս, աներկբայ հաւատամ Քեզ, երթամ մինչեւ ի Հնդկի, քարոզեմ քո Աւետարան, պատմեմ քո սքանչելի գործերը, քո խաչ, քո մահ, քո փրկութիւն և փառաւորեալ յարութիւնդ:

Մինչ թերահաւատ Թովմաս տեսնալով և վերքերդ մատնամուխ շօշափելով քեզ հաւատաց, Տէր, դու առաւել երանի՛ տուիր այն ամեն հաւատացեալ որդիքներուդ, որք

առանց զՔեզ տեսնալու լսելով միայն Աւետարանիդ ձայնին կը հաւատան:

Տակաւին Քեզ չհաւատացողներ կան, Յիսուս, որ քո մարդեղութեան և չարչարանաց վերքերդ իրենց գիտութեան մատերով շօշափել և խորապէս զննել կ'ուզեն. կը տարակուսին ու կ'ասեն թէ՝ ինչպէ՞ս կարելի է հաւատալ, որ Աստուածորդի մի՞ մահկանացուի ձեռքէն վէրք ընդունի. եթէ ինքն անմահ է, լոյս է, անըմբռնելի է:

Այո՛, Տէր, դու թերահաւատէն միայն կը փախչիս, ճշմարիտ հաւատացեալը՝ զքեզ շուտ կ'ըմբռնէ. և մեք կը հաւատամք քեզ ինչպէս Նսային կը քարոզէ. « Թէ նա վիրաւորեցաւ վասն մեզաց մերոց և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց, խրատ խաղաղութեան մերոյ ի նմա և նորա վիրօքն ըրժըշկեցաք »:

Չգիտեմ, Տէր, Պետրոսն եւս Թովմասին նման մերթ կը թերահաւատէր. և դեռ ուրացութենէն բժշկուած չէ՞ր արդեօք. երէկ տեսաւ քո նորահրաշ յարութիւնը, մոռացաւ



առաքելութեան պաշտօնը՝ գնաց ձուկ որ-  
սալ, կարծեց թէ առանց քեզ ձկներն իրեն  
կը հնազանդին. զողջոյն գիշեր տքնեցաւ և  
ոչինչ կալաւ : Եւ դու յանկարծ Տիրերական  
ծովուն եղերքը իջար, Պետրոսին և որսակից-  
ներուն ուռկանը մեծամեծ ձկներով լցուցիր :  
Իբր յանգչեստ կը հարցնէիր, մանկունք, ու-  
նի՞ք ինչ ուտելու : Քո որսական մանուկները  
ծովէն ելան, տեսան աւազակին վերայ հրա-  
շավաւ կրակը և ձկները վրան խորոված  
պատրաստ :

Նստար ու ճաշցիր մանուկներու հետը,  
եւ խիստ ախորժանօք կերար այս վերջին  
ճաշը, որ յարուցեալ փեսայիդ հարսանեաց  
ճաշն էր. ձկնասէր մանուկները լուռ ու  
պառկառանօք կերան քեզ հետ այս ճաշն, և  
հաւատացին թէ դու նոյն Տէրն ես, որ Ընթ-  
րեաց երեկուն հետ իրենց Զատկական Գառն  
կերար :

Յետ ճաշին՝ մտերմաբար կը հարցնէիր  
դու. Պե՛տրէ, կը սիրե՞ս զիս. և նա կը պա-  
տասխանէր թէ՛ կը սիրեմ. եւ մինչ դու ե-  
րեք անգամ կրկնեցիր սիրաբան հարցում-

ներդ, Պետրոսին դժար եկաւ. Տէ՛ր, ասաց.  
դու ամեն բան գիտես ու սրտագէտ ես :  
Այո՛, առաւել կը սիրեմ քեզ : Ուրեմն, Պետրէ,  
կրկնեցիր նոյն բան, Արած է՛ իմ հաւատացեալ  
գառները :

Ո՛վ սքանչելի սէր և սիրոյ բժիշկ. Պետ-  
րոսի երեք ուրացութեանց վէրքը՝ սիրոյդ  
ամենագեղ քաղցր սպեղանիով բժշկեցիր, և  
որ ուրացութեամբ զրկուած էր Առաքելական  
պաշտօնէն, սէրը՝ երաշխաւոր առիր, և նե-  
րելովդ՝ կրկին յանձնեցիր նմա Աւետարանին  
տնտեսութեան պաշտօնը : Այլ Պետրոսի պան-  
ծացող դահակալները, այնպէս կարծեցին թէ՛  
դու միայն Պետրոսի ձեռքը անասման իշ-  
խանութեան դաւազան մի տուիր, որ նա ի  
Հռոմ նստի իբրեւ աշխարհակալ մի, տիրա-  
պետէ քո ազատ հօտին, եւ իւր հաւասար  
եղբայրները ճնշէ ու զրկէ : Քա՛ւ թէ դու այն-  
պէս կամեցար, քաւ թէ Պետրոսն այնպէս  
հասկեցաւ և կամ իւր առաքելութեան պաշ-  
տօնին մէջ այնպէս վարուեցաւ : Այս տիրա-  
պետութեան հոգին աշխարհինն է, և քո հեզ  
հոգին չէ, Յիսուս :



## ՅԻՍՈՒՍ Ի ԼԵԱՌՆ ՁԻԹԵՆԵԱՅ

Փրկագործ տնօրէնութեանդ խորհուրդներն աւարտեցան, Յիսուս Փրկիչ. ինչ որ Հօր կամքն էր՝ զայն լիովին կատարեց հնազանդ որդիդ: Այլ եւս ի՞նչ մնաց քեզ. բանն էիր՝ մարմին եղար, երեք տարի մարդկանց հետը իբրեւ որդի մարդոց շրջեցար, Աւետարանիդ կենաց բանը քարոզեցիր, սէր շնչեցիր, խաղաղութիւն տուիր, խաչին զօ՛ր կատարեցիր, անպարտ մեռար, պարտաւորները ազատեցիր, մահուան աշխարհը մտար, մահը մեռուցիր, յաղթութիւն տարիր, ուստի կը գոչես. « Գաջալերացարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի »:

Այլ եւս տակաւին մնա՞ց քեզ գործ, Տէր, դարձեալ հին Սիօնի լեռան վերայ եկեղեցւոյդ հիմը դրիր: Աշխարհամատրան գաւթիմն աւելի եւս ընդարձակեցիր, որպէս զի ոչ միայն Խրայէլի տան կորսուած ոշխարները, այլ և հանուր աշխարհէն հաւատացեալ հօտերը ժողովելով՝ հոն մակաղես, և մի հովուիդ համար մի հօտ կազմես. և այնպէս կը

կամիս դու, որ մարդիկ միակրօն լինին, մի տաճարի մէջ հոգւով և ճշմարտութեամբ զՍտուած պաշտեն:

Այսպէս աւարտեցիր Ստուծոյ իմանալի քաղաքն, ո՛վ իմաստուն ճարտարապետ, հիմն երկրիս վերայ դրիր, գմբէթը մինչեւ երկինքը բարձրացուցիր. և դու միայն միջնորմն եղար. երկիրը՝ երկնից հետը, մարդիկը՝ Ստուծոյ հետը, մահկանացուք՝ անմահութեան հետը՝ սերտ և պինդ կապեցիր, և դու միայն հատեր մահուն երկաթէ կապանքը, որ վեց հազար տարի զմարդիկ և զհոգիները դժոխոց աշխարհին հետը կապեց:

Ամենայն ինչ վճարեցաւ, Տէր, այլ եւս աշխարհիս մէջ մարմնոյդ գործակցութեամբ բան չունիս: Ուստի ա՛ռ ձեռնասուններդ, Ձիթենեաց լեռը ելիր, խաչատարած ձեռներդ համբարձ, օրհնէ՛ փոքրիկ հօտդ, տեառնադրէ զեկեղեցին և բովանդակ աշխարհ: Խօսի՛ր կրկին՝ ինչ որ պատուէր ունիս, տուր վերջին հրաժեշտը:

Եւ ի՞նչ են քո տիրախօս պատուէրները՝



Աւետարանիչ ծառաներուդ . երթալ յաշխարհ ամենայն , քարոզել քո կենաց բանը . ուսուցանել՝ ինչ որ պատուիրեցիր հրաւիրակ Առաքեալներուդ . պահել քո Աւետարան , որ ստրկացեալ հոգիներուն ազատութիւն է . պահել քո հաւատ , որ եկեղեցւոյ որդիքներուն փրկութիւն է . պահել քո սուրբ հոգին , զոր շնչեցիր . պահել քո սիրոյդ զօր , որով անջատեալ և թշնամացեալ մարդիկ իրարու հետ կապելով ասացիր . «ԳՈՒՅ ԵՂԻՍՅՐ ԷՅ : »

Ո՛վ սքանչելի յեղաշրջող սիրոյդ . առիւծն անտառէն լսեց քո սիրոյ ձայն՝ եղան հետը խոտ կերաւ . գայլը լսեց և դառին հետ ձարակեց : Այո՛ միայն քո սէր և խաղաղութիւնը՝ մեր բարբարոս աշխարհ ոսկեղար դարձուց :

Մեկնելոյդ ժամն եհաս , վերացիր , Յիսուս : Ո՛վ , քանի՞ թեթեւ դէպ ի վեր կը սլանաս . երկրածին չես դու , մեղք չունիս , որ կապարի նման ծանրանայ , զքեզ վայրաքարշ առնէ : Ո՛վ անբմբունելի Բան , դու ի Նազարէթ իբրեւ թեթեւ մեղմացող դեղման վերայ իջար , և արդ ըմբռնելի թանձր մարմնով յերկինս կը վերանաս , մէկ ուսիդ վերայ մո-

լորեալ ոչխարը դրեր ես , միւսին վերայ՝ յաշխարհիւս դրօշակդ . ձեռքիդ մէջ պինդ խփեր ես կորուսեալ դրամն . ոտքէդ կախուեր են աւարեալ հոգիները . և ո՛ւր կը տանիս այդ ամէն շնաշխարհիկ պարգեւները . այս աշխարհէն կը տանիս և Հօ՛րդ կ'ընծայես :

Ո՛ւր ես , Դաւիթ , հովուական փողդ ա՛ռ անցիր՝ Յաղթականին առաջը , հնչէ՛ անոյշ , թող ազատեալ հոգիները հրճուին . հնչէ՛ զօրութեամբ , թող բարապան հրեշտակները՝ երկնից դռներուն փեղկերը լայն բանան , որ փառաց թագաւորը իւր աւարներով հանդերձ համարձակ ներս մտնէ :

Իբրեւ անծանօթ և նորանշան մարդ կը տեսնաք և որպէս անգիտակ զարմանալով կը հարցնէք իրարմէ . ո՛վ է սա , որ աշխարհի մարդ կը նմանի և դէպ յերկինս կուգայ . ձորձերն ամբողջ բոսորագեղ կարմրացած են . կը թռի թէ պատերազմի դաշտէն ելած է . բուռն զօրութեամբ կուգայ . գիտես թէ երկնից տէրն է և արդարութեամբ բարձրացեալ՝ իրաւունք ունի , միայնակ չէ , բազում ա-



ւարները առեր է հետ • ուստի՞ աւարներ է և  
ո՞ր կը տանի, չգիտեմք :

Հրեշտակները միթէ քո մարդեղութեան  
խորհրդոյն խորհրդազգած չէի՞ն, որ իբրեւ  
անգէտ կը հարցնեն և դու պատասխան կու-  
տաս և կը ճառես : Ես երկնից Արդարու-  
թիւնն եմ, որ գնացի աշխարհի իշխանին  
հետ դատաստան տեսայ : Ես յաւիտենական  
Բանն եմ, որ մարմին զգեցայ, որպէս զի  
մարդիկները հետ Աստուծոյ միացնեմ : Ես  
Հօր փառաց ու երեսաց լոյսն եմ, որ գնացի  
աշխարհը լուսաւորել և մահուան ստուերէն  
ազատել խաւարակապ հոգիները : Ես Հօր  
յաւէտածին մանուկն եմ, գնացի աշխարհին  
աւետարանել • միայն մանուկներ ընդունեցին  
և սիրեցին զիս : Ես Գողգոթայի խաչին հըն-  
ձանահարն եմ, որ սրտմտեցայ և մարդեղու-  
թեանս ոտքով ելայ սատան իշխանին վերայ,  
կոխեցի ձմէցի և իջուցի զինքն մինչեւ յան-  
դուռնդ : Ես Աստուծոյ հեզ գառն եմ, որ  
զոհուեցայ Գողգոթայի սեղանին վերայ, ա-  
րիւնովս քաւեցի աշխարհին մեղք և արդ իբ-  
րեւ մի միայն նոր ուխտին Քահանայապետ,  
պէտք է երթամ մտնեմ ի ներքին կողմն վա-

րագուրին • միանգամ պատարագելովս՝ մըշ-  
տընջենաւոր բարեխօս լինիմ աշխարհի հա-  
մար : Այսուհետեւ պէտք է դադարին Մով-  
սիսի խորանին, Սողոմօնի տաճարին անաս-  
նական ողջակէզներ և կռամուլութեան մար-  
դազոհներ :

Մտար ի ներքին կողմն վարագուրին, Յի-  
սուս, և կը խօսիս առ Հայրդ, պատարագ-  
ներդ կը մատուցանես : Հայր իմ, ահաւասիկ  
քո կամք կատարեցի, խաչին բաժակը յօժա-  
րակամ խմեցի, հրամանիդ՝ մահու չափ հնա-  
զանդեցայ, երեք տարի քո կամք և ճմար-  
տութիւն քարոզեցի : Դու կամեցար որ Աւե-  
տարանը՝ տղայոց տամ, այնպէս արարի, երկ-  
րին մէջ թափառեցայ մեր մոլորած ոշխարը  
գտնելու համար, վա՛չ, Բեթելայ սարին գը-  
լուիս գտի զայն, որ նա եւս բառաջելով իւր  
հովիւր կը խնդրէր, հոն գտի նաև հողերուն  
մէջ կորսուած դրամն, բայց քանի՞ ժանդո-  
տած էր և տիրական կնիքն բոլորովին եղծ-  
ուած : Ես զայն զոհիս արիւնով սրբեցի, քո  
տիրական կնիքն վերստին փայլեցուցի : Ա-  
հաւասիկ Քեզ կը մատուցանեմ, ա՛ռ և դիր



արքայութեանդ գանձարանը : Զեռքդ տուր  
թող համբուրէ քո մոլորեալ ոչխարը՝ անա-  
ռակ որդին , գրկէ համբուրէ զինքն , հրաման  
տուր թող տան իւր որդիական իրաւանց  
մատանին , թող հագուցանեն զպատմութեանն  
և զկօշիկս : Այսչափ էր , Հայր , քո կամք և  
կատարեցի :

Նիստ ընդ աջմէ իմմէ , սիրելի Որդեակ  
իմ : Ո՛հ , քանի՞ խոնջած ես , աշխարհին հետ  
կռուեցա՞ր , խաչի դաշտէ՞ն կուգաս : Ապի-  
րատ Յակովբ իմ հացը կերաւ , զքեզ անկու-  
շեց և խաչեց իսկ : Բե՛ր համբուրեմ վէրքերդ ,  
հզօր որդեակ իմ , տամ քո մրցանակ . Անուն  
մի , որ ի վեր է քան զամէն անունը , բոլոր  
թշնամիներդ ոտքիդ պատուանդան պիտի  
դնեմ , խաչիդ ու գերեզմանիդ փոխարէն մե-  
ծամեծ չարիքները պիտի բերեմ ապերախտ  
Երուսաղէմին վերայ . որ զքեզ մերժեց ու չը  
ճանչցաւ քո այցելութեան ժամանակը : Դու  
գնացիր , որ իմ տնկած ու դարմանած այ-  
գիէն պտուղ պահանջէիր , անիրաւ մշակները  
զքեզ սպանին , որպէս զի քո հօրենական ժա-  
ռանգութիւնը յափշտակեն : Տե՛ս դու , ես

այդ չարերը՝ չարերով պիտի կուրուսանեմ և  
կատարեմ քո առակին բանն : Սիօնի վերնա-  
տուն քո անձկութեան և տագնապին օրը կը  
գոչէիր ուժգին . « Հայր , փառաւորեա զորդի  
քո » : Ես զքեզ փառաւորեցի , հեզ Որդեակ  
իմ , մինչ դու Յովնանու պէս մահուդ ծովէն  
մինչեւ յանդունդս իջար . ես չթողի որ դը-  
ժօխք և մեծ կէտն զքեզ կլանէ . դու բնաւ  
ապականութիւն չտեսար և ես յարուցի զքեզ  
ու փառաւորեցի քո խաչ և քո մահը : Եւ  
այժմ կը փառաւորեմ զքեզ նոյն փառօք , որ  
աշխարհիս լինելութենէն յառաջ ընդ իս փա-  
ռաւորուած էիր . զի դու բովանդակ արա-  
րածոց Անդրանիկն ես . ու ես քեզմով բո-  
վանդակեցի զաշխարհ :

Իսկ դուք , դեռ սլուցեալ դէպ ի վեր  
կը հայիք , որբացեա՛լ աշակերտները . ամպն  
եկաւ ձեր աչքէն տարաւ զՅիսուս Վարդա-  
պետն . նա գնաց մոռալ յերկինս , անցաւ  
ի ներքին կողմն անձեռագործ խորանին :

Այլ մի՛ վարանիք , նա զձեզ որբ չի թո-  
ղուր ինչպէս խօսեցաւ : Ահա լուսազգեաց



հրեշտակ մի ձեզ աւետիս կուտայ. «Արք  
Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ յեր-  
կինս: Այս Յիսուս որ վերացան ի ձէնջ սոյն-  
պէս եկեսցէ, զոր օրինակ տեսիք զնա եր-  
թալ յերկինս:»

Դարձէք ձիթաստանեայց լեռներն, դար-  
ձէք գնացէք Սիօնի վերնատունը. նստէք հո-  
գացէք, խաչերը պատրաստեցէք, Աւետա-  
րանի դասերը սերտեցէք և պահ մի եւս ըս-  
պասեցէք անդ մինչ Սուրբ Հոգին զգենուք,  
հոգւով զինուորիք, ձեր ծանրախօս լեզու-  
ները բացուին, դուք իւրաքանչիւր անցուպ,  
անմախաղ, մերկամարմին ոտքով աշխարհիս  
տատասկափչեր, օձեր և կարիճներ պիտի  
կոխէք և անցնիք: Դուք Աւետարանի ան-  
մահ մշակներն էք, ձեր վարձքը երկնից մէջն  
է, իսկ այս աշխարհիս վերայ, ձեր բաժինն է  
միայն խաչակրութիւն և մահ:

Ահաւասիկ, փառաւորեալդ իմ Յիսուս,  
Քո Վերջի չաբաթ, խաչիդ ճառ և Յաղթա-  
կան Յարութիւնդ աւարտեցի: Սիօնի վերնա-  
տունէն սկսեալ տարի հասուցի մինչեւ երկ-

նից անմատոյց խորանն ի վերին Սիօն ուր  
ամէն խաչակրաց ազատաւայրն է, և ուր չը  
կարեն հասնիլ երկրիս հալածչաց ձեռք:

Այլ եւս կմնայ ինձ, Տէր, գրեւ ու հա-  
մառօտեմ՝ անկրօն կորուսելոց համար, որոց  
առաջը քո խաչի ճառը՝ յիմարութիւն կը հա-  
մարուի, հաւատք՝ խաղ, կրօն՝ աւելորդ, և  
եկեղեցին՝ խուժանաց ժողովը: Սոքա հետե-  
ւող զաւակներ են այն հին հեթանոսութեան  
դարուն կարծեցեալ իմաստնոց, որոց համար  
կը ճառէ քո ծառայն Պօղոս թէ՛ «Զանձինս  
առ իմաստունս ունէին՝ յիմարեցան:»

Տէր, դու աշխարհիս յաղթեցիր ու թո-  
ղիր գնացիր աշխարհէն, այլ աշխարհը տա-  
կաւին քո դէմը կը մարտնչի, և երբ ձեռքն-  
հաս չէ գրեզ ըմբռնել և վերստին խաչել՝  
զԱւետարանդ կը հալածէ և քո հաւատարիմ  
ծառաները կը ծաղրէ: Այս կռիւ և գայթակ-  
ղութիւն պիտի տեսէ մինչեւ ի կատարած  
աշխարհի. զի քո անյեղլի վճիռն է «Ոչ է  
մարթ չգալ գայթակղութեան:»







սուն տարի ամբողջ Նազարէթի հայրենեաց մէջ իրեւ հիւսան որդի կարծուելով՝ կաճէիր ու կը զարգանայիր, գեղացի մանուկներու հետ կը խաղայիր. արդեօք նոքա եւս իրենց հօրերուն պէս քեզ հետ կուեցային : Ո՛չ, դու աննենգ մանուկները՝ քո մանկութենէն ճանչցար ու միշտ սիրեցիր զիրենք. պարզամիտ մանուկները քո դէմ դատ ու բողոք չբարձին. և ոչ քո խաչի մատնութեան օրը՝ մատնտու եղան : Այլ քո դէմը՝ տաճարի վարդապետները նախանձելով կը վիճէին մինչ դու տասներկու տարուան պատանի էիր, անուս, անդպրոց, անվարժապետ կը յաղթահարէիր օրինաց վարդապետները :

Որ սիրահար էիր մարդոյն փրկութեան, Յիսուս Տէր, արդեօք ծա՞նր թէ թեթե՛ւ անցաւ երեսուն տարուան կենացդ շրջան և այն ինչ կ'աւարտէր, դու Գալիլեայի բարձունքէն կը դիտէիր, և երբ տեսար քո յառաջընթաց ծառայն Յովհաննէս յանապատէն Յորդանան կ'իջնար՝ ետեւէն հասար. քեզ կ'սպասէր Յորդանանու յորձանաց մէջ բռնեալ հին վիշապն, որ Փշալով զքեզ կ'լանէր կ'ուզէր. դու խոնարհ ոտիւքդ ջախջախեցիր նորա գլուխը

և Յորդանանը գրաւելով՝ տիրեցիր Ովկիանոսին :

Հին սատան թշնամին փորձութեան լեռան գլուխ զքեզ գտաւ, տեսաւ թէ ի պահոց ուժաթափ եղեր ես, ասաց, թէ կարեմ՝ յաղթել՝ կարծելով թէ դրախտի տկար Ադամն ես : Անդ սուտ խօսելով խաբեց թէ Աստուած կը լինիք, աստ կը խոստանայր աշխարհ իւր փառքով քեզ շնորհ տալ, միայն թէ խոնարհիս նորա հպարտութեան առաջ երկիր պազանել : Դու անդէն սասուեցեր անբարտաւան ոգւոյն, որ յետս երթայ կորնչի. ուր յառաջ քան զԳողգոթայի խաչն՝ առաջին յաղթանակը՝ փորձութեան լեռան վերայ կանգնեցիր :

Հզոր մարտադիր Յիսուս, Բեթլէհէմի մըսրէն, Յորդանանու եղերքէն, փորձութեան լեռնէն աշխարհի իշխան իւր ճակատամարտն՝ քո դէմն սկսեց Սատան. Հերովդէս, իշխանք Հրէից, դպիրք, փարիսեցիք, օրինաց վարդապետք, քահանայապետք. այս ամէն համախումբ բանակ կազմեցին, դու միայնակ էիր. երեք տարի շարունակ կուեցելով հալածելով՝ վարեցին տարին հասուցին զքեզ մինչ-



չեւ Բեթելին գլուխ . ուր քո կեանքը բարձին անարգանաց խաչով, մահուան գերեզմանին մէջ դրին , ծանր քարով ծածկեցին ըզլոյսդ անծածկոյթ . որպէս զի քո ճշմարտութիւնը քարին տակը ճնշեն : Այլ դու իբրեւ հզօր երեք օրէն յետոյ թափեցիր մահուանդ գինին ու բաժակը . տեսաւ զքեզ Մահն ու սարսափեցաւ և թաւալեցաւ ոտքիդ տակ :

Յիսուս փրկիչ աշխարհի , դու լոյս յաշխարհ եկիր . աշխարհ և խաւար քո դէմ պատերազմ ելաւ . դու կեանք բերիր , աշխարհ մահ գրկեց ու զինեցաւ քո դէմ . դու սուրբ հոգի շնչեցիր , մարդիկ մարմին դարձան ու նուաճեցին իշխանական ոգին . դու Աւետարան և ազատութիւն քարոզեցիր , աշխարհ և իւր բռնակալները ոխացան քո դէմ և դեռ կը ոխան . դու սէր , ընկերսիրութիւն ուսուցիր , աշխարհ իւր զրկիչներով քո աղքատ որդիքները կը հարստահարէ . դու երկնից արքայութիւն խոստացար , աշխարհ իւր որդիքները կը համոզէ . թէ ձեր արքայութիւն , ձեր կեանք , ձեր վայելք և երջանկութիւնն ես եմ . այս աշխարհէն զատ ձեզ համար ուրիշ աշխարհ մի չկայ :

Տէր , դու երկնքէն իջար , քո մեծ խորհուրդ և Հօր կամքն այն էր , որ մարդիկ երկինք տանիս , քո Աւետարան հրաւէր կը կարգայ իւր մոտերիմ որդիքներուն . թէ « Դուք այս աշխարհէն չէք : » Իսկ աշխարհասէր ոգիները , քեզ չեն հաւատար . կարծելով թէ՝ քան զայս այլ գերագոյն աշխարհ մի չունիս , և քո բան այսպէս լինելով կ'արհամարհեն և կը խօսին այսպէս . « Ո՛չ , մեք այս աշխարհէն ենք , ու մեր կեանքը աշխարհն է . երկնից արքայութիւն , հոգւոյ անմահութիւն , յաւերժական փառք , մեզ համար զաւացանք է . մենք շնչաւոր հող ենք ինչպէս ամէն կենդանիք . պէտք է մեռնինք ինչպէս կը մեռնին անասունք . մեր վերջին դադար հողն է . մարդ երկրէն ելած է , յերկիր պիտի դառնայ անդրէն . զի այս է միայն մարդոյն վախճանը և ուրիշ ոչինչ . թող որչափ կ'ուզէ աղաղակէ Պօղոս թէ՝ « Մեր քաղաքականութիւն յերկինս է : »

Այո՛ , ձեր ընդունայն յոյս ու հաւատք այդ է , թող այնպէս լինի ձեզ , աշխարհի որդիքներ , կը վկայեմք ձեզ հետ թէ այդ իսկ է երկրաքարշ մարդոց վախճանը . դուք աշ-



խարհը կը սիրէք, աշխարհ գծեղ կը սիրէ. մեք գիտենք ի սկզբանէ անտի, որ աշխարհը հաւատացեալները կը մերժէ և գծեղ կը գրկէ: Գնացէք ի հող, ձեր կեանք, ձեր յոյս մինչեւ հոն է. դուք ոչ երկինք և ոչ Աստուծոյ ընտրեալներուն հետ բաժին ունիք. ձեր վերջի բաժին հողն ու գերեզմանն է. ուր միայն պէտք է կարգացունին ձեր անուանք, երկնից ու կենաց դպրութեան մէջ՝ ձեր յիշատակ ջնջուած է:

Տէր իմ, դու երանի տուիր, որ մարդիկ չդայթակղին, տեսնալով աշխարհի մէջ քո անօրինակ կեանք: Դու գիտես իսկ, թէ աշխարհի աներկիւղած իմաստուններ ինչո՞ւ համար կը գայթակղին քո վրադ. զի դու աշխարհի զինակալաց պէս մեռցնելով չյաղթեցիր, այլ մեռնելով. քո զէնքն էր՝ անարգանաց խաչ, արիւն ու մահ. սորա համար իսկ չհաւատալով կը խօսին. « Եթէ Յիսուս ճշմարիտ Աստուած էր. ուրեմն նա հզօր էր և անմահ, ո՞վ կարող է հաւատալ՝ թէ հզօրն սոսառի նկուն կը դառնայ. երկինքէն մինչ ի գետին կը խոնարհի. տիեզերաց սանձ կրող զօրութիւնն, խաչի ծանրութեան տակ կ'հեծէ:

և կամ ասպնորհ մարդոյն համար կը մեռնի՞ արարիչ Աստուած: »

Վա՛շ ձեր ամօթահար իմաստութեան, յայտ իսկ է ահա, որ խաչի ճառի անհաս խորհրդոյն վերայ դուք կորուսեալքդ՝ կը յիմարանայք և յիմարները՝ կ'իմաստնանան հաւատով. դուք խաչին ճառը ծաղր և անարդութիւն կը համարիք. Պօղոս զայն Աստուծոյ իմաստութիւն և զօրութիւն կը կոչէ և ինքն եւս խաչի ճառին համար հիանալով կ'աղաղակէ. « Ով խորք մեծութեան Աստուծոյ, որպէ՛ս զի անքննելի են գործք նորա: » Դաւիթն եւս թերեւս ձեզ համար խօսեց, թէ « Այր անզգամ զայս ոչ ծանիցէ և անմիտն զայս ոչ առնու ի միտ: »

Իջէ՛ք ձեր հպարտութենէն ո՛վ դուք աշխարհիս մեծամիտներ, ձեր գիտութեան միջանմիտ անխորհուրդ մի՛ լինիք. տարէ՛ք ձեր հանճար, ձեր փիլիսոփայութիւնը դրէք խաչին տակ ու հաւատացէ՛ք թէ Աստուծոյ մեծ խորհուրդը հեռի է ձեր թիւր և անձուկ խորհուրդէն ինչպէս երկինք երկրէն. գիտցէ՛ք Աստուած՝ մարդոյն խելքով ու խորհրդ-



դով չի գործեր, և դուք ո՞ւր էիք մինչ նա երկրիս հիմունք կը դնէր. դուք զայն ձեռ խորհրդակից կը կարծէք, դուք նոր Պղատոններ, զԱստուած ձեր գիտութեանց ձեմարանին կաճառո՞րդ կը համարիք:

Ես գիտութիւն չեմ մերժեր. և կը մերժեմ երբ մարդիկ առանց Աստուծոյ, առանց երկիւղի իմաստասիրել կ'ուզեն, ու կը պարծին յանձինս: Ո՞վ են այդ պանծացող գիտունք, խորին փրկիստփայք. որ Կաթուղիէ եկեղեցւոյ դմբէթին բարձրութիւն, Մկրտարան աւազանին խորհուրդ և խորութիւն, նոր Սիօնի տիեզերական տաճարին լայնութիւն և երկայնութիւն՝ չգիտեն ու չկամին չափել, կաթիլ մի ջրով դուզնաքեայ գիտութեան՝ զՈվկիանոս կը չափեն. ձեռագործ աչքով երկնից անպարունակ աստեղատուն կը գիտեն, մոլորեալք զմոլորակս կը հետազօտեն. երանի՜ թէ միայն զԱստուած գտնէին տեսնելով նորա մատանց հրաշարուեստ գործքերը:

Առէք միանգամ դուք հաւատոյ կարկին ձեր ձեռք. դնացէք յԵրուսաղէմ, կացէք

Սիօնի լեռան վերայ. դուք համայն աշխարհագունդ չափեցիք, ծոփն ու ցամաք չափեցիք. չափեցէք նաեւ մարդացեալ Աստուածորդւոյն սիրոյն և խոնարհութեան ասպարէզը. չափեցէք երկինքէն մինչեւ Բեթլէհէմի այրին մտուրը. չափեցէք անտի մինչեւ Գողգոթայի գլուխ. պարզ և ուղիղ մտօք չափեցէք և կը գտնէք յայնժամ խաչի ճառին և Յիսուսի փրկութեան անսահման ասպարէզը. որ այն ինքն է ճանապարհ, ճշմարտութիւն և Կեանք:

Ես չգիտեմ, թէ Յիսուսէն, խաչէն և խաչի ճառէն՝ ինչո՞ւ համար կը խոստովիք. միթէ կը կարծէ՞ք թէ խաչին ճառը՝ չարչարանք և թշուառութիւնը բերաւ այս աշխարհը: Ո՛չ, ո՛չ, մի՛ գրպարտէք, Մովսէս իւր օրէնքով, Յիսուս իւր Աւետարանով թշուառութիւնը չրերին աշխարհ. այլ նոքա կեանք և երջանկութիւն բերին: Յիշեցէք դուք, ապուշ մի՛ լինիք. յիշեցէ՞ք, մի՛ մոռնայք ձեր նախնի կրօնամոլութեան վիճակը: Դուք ի՞նչ էիք հազար ութ հարիւր տարի յառաջ. կարդացէք ձեր հեթանոսական պատմութիւնը և ամաչեցէք. համեմատեցէք անցեալ կեանք այժ-



մոյս հետը , և պիտի տեսնաք թէ քրիստոնէ-  
ութիւն և խաչին ճառը միայն այս աշխարհ  
յեղաշրջեց ի լաւագոյն կեանս : Ապա թէ ոչ՝  
Հնդիկք և Զինացիք քան զձեզ երջանիկ են ,  
և դուք այսօր թշուառ կը համարիք զիրենք :

Անհաւան , ապերախտ մի լինիք , դուք այ-  
սօր ի շնորհս խաչին երջանկութիւն կը վա-  
յելէք և Յակովբայ ապաշնորհ որդւոց պէս  
գիրանալով՝ կ'անգուշէ՞ք սիրելի խաչալը .  
դուք տակաւին կամակորեղով կը թերահաւա-  
տիք և գիտութեամբ կը մեղանչէք , ու ճանչ-  
նալ չէք ուզեր Աւետարանին և խաչին մե-  
ծագործութիւնը : Աւետարան , սէր և հոգի  
չնչեց , մեռած աշխարհ կենդանացաւ . Աւե-  
տարան՝ ընկերսիրութիւն քարոզեց , անկեալ  
ժողովուրդները միացան ու զօրացան . Աւե-  
տարան , ազատութիւն աւետեց , բռնակալաց  
բազուկներ թուլցան , ստրկացած ոգիները՝  
գերութեան շղթայն թօթափեցին : Ո՛վ ասաց  
ձեզ թէ թշուառութիւն բերաւ աշխարհ .  
թշուառութիւնը՝ խաչի ծառի պտուղ չէ , երկ-  
նից արդատիք չէ . զի երկինք բարութեան  
անձրեւ և արեւ կը ծագէ . թշուառութիւն՝  
չար մարդոց սրտին արգասիքն է . ինչպէս

լարին՝ բարի մարդոց սրտին , ասաց Քրիստոս :

Լռեցէք , այլ եւս մի՛ խօսիք , խաչին  
խորհուրդը անհաս է , մոքով մի՛ շօշափէք ,  
խաչն՝ թշուառացեալ մարդկութեան երջան-  
կութիւն բերաւ . խաչն և Տէր՝ աշխարհի յաղ-  
թեցին , դուք նորա տակ ընկձեցայք . խաչին  
յիմարները հաւատով յառաջեցին քան զձեզ ,  
գնացին մոտան երկնից արքայութիւնը . դուք  
ի՞նչ կ'ընէք , դեռ տաժանելով կ'աշխատիք ,  
խաչին ճառը ձեր գիտութեանց սրահներուն  
մէջ սորվիլ կ'ուզէք :

Ո՛չ , խաչի ճառին անշուք ձեմարանը՝ այդ  
հոյակապ շէնքեր , թանգարաններ չեն , այլ  
Պաղեստինու դաշտ , Սիօնի վերնատուն , Գող-  
գոթայի բարձրագագաթ , Աստուծոյ քաղաք ,  
Եկեղեցին , տանիքներու վերայ , աշխարհի  
հրապարակն է : Դասախօս վարժապետները  
Պղատոն , Արիստոտէլ չեն , հապա Յիսուս է .  
և նորա պաշտօնեայք՝ հոգեխօս Առաքեալ-  
ներն են , որոց բարբառ և խօսք հասաւ մին-  
չեւ Ուկրիանու ծայր :

խաչին բարձրախօս ճառը լսեց բովանդակ



աշխարհ, դուք ձեր յամառութեամբ կը համարանայք և խո՛ւլ կը լինիք. խաչին զօրութեան գաւազանը մարդոց ամենի սիրտերը անբռնադատ նուաճեց. դուք դեռ չէ՛ք հաւատար, չէ՛ք զարմանար: Յիսուս՝ աշխարհակալ բռնաւորաց պէս երկաթի ջախջախիչ զէնքով չտիրեց և չճնչեց ազատ ժողովուրդը: Նա յետ խաչին և մահուան՝ առաւել եւս մեծագործեց, մինչդեռ հին Ադէքսանդր և նոր Նաբօլէօն մեռնելէն յետոյ իրենց ամէն խորհուրդ և յաղթական զէնքերը հետ իրենց ի գերեզման տարին:

Այլ Յիսուս մեռաւ և յարեաւ. կարճեցէք ձեր ձեռք, նորա գերեզման մի՛ կրկէք. Յիսուս կենդանի է և կը գործէ: Նա երեք տարի իւր յայտնութեան մէջ գործեց, գերեզմանէն գործեց և երկնքէն Հօր սը կողմ՝ նստած դեռ կը գործէ. միայն քանի մի անգէն անթոշակ զինուորներով աշխարհի կայսրութիւնները խոնարհեցոյց. խուժադուժ ազգ և ազինք Աւետարանի քաղցր լծոյն տակ դրին իրենց բռնաւորութեամբ պարանոց. Աթէնքի բարձունքէն յերկիր կործանեցան Արամազդայ և Աթենասայ տաճարները. անդ

էր Պօղոս սերմաքաղ մշակ, որ խլեց քանդեց կռամուլութեան խոր արմատը, հիմնեց եկեղեցին ու բաժրացուց Աստուծոյ սուրբ քաղաքը: Դուք ի՞նչ կը կամիք, վերականգնե՞լ կ'ուզէք անդրէն հին ամբարշտութեան տաճարներ և եկեղեցին յատակե՞լ:

Ի բաց կացէք, ձեռն մի՛ մխէք, ի զուր մի՛ ձգտիք. եկեղեցւոյ հիմն երկինքն է, անվանելի վէ՛մն Յիսուս է. խիստ է, մի՛ զարնուիք. վէ՛մն զձեզ ջախջախելով կը փշրէ ինչպէս փշրեց Ներոն, Յուլիանոս և եկեղեցւոյ բոլոր ոխերիմ հալածիչները: Նա գիտեմ ձեր հալածանքը այլօրինակ է. դուք եկեղեցւոյ գառները սրով չէք մորթեր, գրջով կը խողխողէք. դուք Աստուծոյ արքայութեան փոքրիկ մանուկներուն գայթակղութիւն կուտաք և զանոնք յիմար կ'անուանէք:

Պարծեցէք ձեր յիմարութեան վերայ, ո՛վ աղաւանման միամիտ հաւատացեալներ, պարծեցէք դուք, մի՛ վշտանայք, թող զձեզ կատակէ ու ծաղրէ գիտութեանց կաճառ: Դուք միայն ուշ դիք հոգեճառ խրատուն, թէ՛ «Ամենայն պարզամիտ անձն օրհնեալ



է ի տեառնէ » : Պարծեցէ՛ք , դուք հաւատով  
իմաստուն էք , դուք խիստ հոգւով աղքատ-  
ներն էք , ձեր հարստութեան ժառանգու-  
թիւնն և ձեր քաղաքականութիւնը երկինքն  
է : Սուրբն Պօղոս կ'երաշխաւորէ ձեր վար-  
ձուց և անճառ փառաց հատուցման համար :  
Ակնկալեցէք փրկչին , պահեցէք հաւատք , հա-  
յեցէք ի վեր , Յիսուս , զօրագլուխն հաւատոյ՝  
ձեզ խրախոյս կը կարգայ , զօրացէք և յաղ-  
թեցէք աշխարհի , նա խոստացեր է տալ ձեզ  
թագուցեալ մանանայէն , նոր արքայութիւն ,  
նոր կեանք , նոր գինի , նոր խրախճան և  
անճառ խնդութիւն :

Տէ՛ր անոխակալ , քո սիրտ մարդոց սիրտ  
չէ , դու երբ ասպնորհ ծառաներն էլ սի-  
րես , ո՛վ դատախազ կը լինի քեզ ամենիշ-  
խան ատենիդ առաջ : Տէ՛ր , դու մարդասէր  
ես , ստահակ և ստամբակ որդիքներն եւս  
քոյդ են , եկեղեցին կ'աղօթէ միշտ առ քեզ .  
չնորհ տուր նոցա , որ քո սէր , քո մարդե-  
ղութիւն , քո խոնարհութեան ճանապարհ ,  
քո Խաչի ճառի մեծ խորհուրդը , քո լուսով  
ճանչնան , ընդունին և հաւատան քեզ , Տէ՛ր :

ՄԱՄՈՆԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՄ

Աստուածորդի Յիսուս , քո տիրախօս վը-  
ճիւնն է այս , որով կ'սպառնաս դու քեզ հա-  
ւատացող հպատակներուն . « Ոչ կարէք Աս-  
տուծոյ ծառայել և մամոնայի » : Յիրաւունս  
քո արդար ես , Տէ՛ր , քանի որ աշխարհիս տի-  
րոջները թէև անիրաւ լինին , այդ ծառա-  
յութեան հաւատարմութիւն կը պահանջեն  
իրենց հպատակներէն . և ոչ ոք կարող է եր-  
կու դրօշակի տակ միանգամայն զինուորիլ .  
և եթէ նենգէ նա՝ պարտաւոր կը մնայ քա-  
ղաքային օրինաց ու դատաստանի առաջ :

Բայց ինչպէ՞ս վարի խեղճ վարանած մարդ ,  
որ պաշարուած կը մնայ երկու սպառնացող  
սուրբերուն մէջ . եթէ թողու զմամոնայն , մոռ-  
նայ զաշխարհ , երկնից հպատակի , զԱստ-  
ուած պաշտէ , անգուրթ աշխարհ , անկարե-  
կից մարդիկ զինքն սովատանջ կը չարչարեն .  
խիստ եթէ կորանալով գրկէ զաշխարհ , պաշտէ  
զմամոնայն , մոռնայ քո սէր , քո փրկութիւն ,  
քո խաչին մահ , քո արեան ուխտին յիշա-  
տակը և քո անհուն բարերարութեանց չը-  
նորհքը , դու զայն կը զրկես հանդերձեալ



արքայութենէդ . և կը դատապարտես իբրեւ  
ապստամբ և ապաշնորհ ծառայ :

Սակայն ո՛վ Տէր , մարդիկ պէտք է որ քո  
խօսք ուղղութեամբ հասկնան . դու չես բռն-  
նադատեր , որ նոքա աշխարհիս վերայ ան-  
աշխատ կեանք վարեն . անվաստակ , անհաց ,  
անհանդերձ , անտուն , հրեշտակաց պէս ան-  
կերակուր ապրին և կամ անասնաբար կեն-  
ցաղաւարին ընկերական ու բանաւոր մար-  
դիկ : Ո՛չ , դու այս աշխարհը իբրեւ ագարակ  
մարդոց տուիր , որ մշակեն ու արդիւնաբե-  
րելով վայելեն քո բարիքը և օրհնեն քո բա-  
րերար անունը : Մարդիկ աշխարհիս մշակ և  
տնտեսն են . ուստի կ'ուսուցանես որ քո հա-  
ւատացեալք հաւատարմութեամբ ծառայեն  
քեզ , արդարապէս տնտեսեն , ինչ որ Աստու-  
ծոյն կը պատկանի՝ Աստուծոյ տան . ինչ որ  
կայսերն՝ կայսերին , և ինչ որ իրենց այս  
կեանքին պարէնն է , զայն եւս վճարեն ար-  
դար չափով , առանց յափշտակելոյ յաւիտե-  
նական թողակէն :

Ահաւասիկ , Տէր , մարդիկ այս չափին մէջ  
կ'անիրաւին . մարդիկ ապաւինութեամբ կը մոռ-

նան հոգեկան ու մշտնջենաւոր բարւոյն շահը .  
զաշխարհ ամէն շահելով՝ զանձն բովանդակ  
կը տուժեն . մամոնայն՝ մամոնային տալէն յե-  
տոյ , սիրտ և ազնիւ ոգին երկնից ցանկու-  
թենէն հանելով , կը թողուն որ բողոքովին  
առ այն հակամիտի . և անիրաւ մամոնայն  
բռնանալով կը նուաճէ կրօն , հաւատք եւ  
մարդոյն առ քեզ եղած պարտիքները՝ իւր  
բաժին առնելէն զկնի , քո բաժին եւս կը յա-  
փշտակէ :

Նւ գիտե՞ս , Տէր , թէ մարդիկ ինչու հա-  
մար երկիւղ չունին քո ահաւոր տէրութենէն ,  
և կը զլանան քո արդար բաժին քեզ տալու .  
այս յայտնի է , զի քո հզօր տէրութիւնը՝ հայ-  
րական սէր է . աշխարհի իշխանութիւնը ոս-  
տիկանութեան սրով իւր բաժինն կ'առնէ . իսկ  
դու ո՞րչափ երկայնամիտ և ազատ ես , ոչ ոս-  
տիկան ունիս , ոչ սուր , և ոչ բանտ . քո ոս-  
տիկան մարդոյն սրտի խիղճն է . քո ազատ  
օրինադիրքը՝ Աւետարանն է . քո բանտ և  
չղթայն՝ եկեղեցւոյ դաւթին ազատավայրն է .  
ո՛վ , ո՞րչափ ընդարձակ է , լի և զեղուն են  
իւր մէջ քաղցրութիւն , գթութիւն և ան-  
չափ ներողութիւն :



Բայց, Տէր, դու ի՞նչ կը խնդրես քո հր-  
պատակ ծառայներէն. քո խնդրած տուրք  
կամ հարկ՝ աշխարհին պահանջած ոսկի ար-  
ծաթն չէ, ստրկական կեանք չէ, այլ ազատ  
կամաց գիտակցութիւնը. զոր քո Հօր ձեռք  
դէպ առ քեզ կը ձգէ և քո լոյս կառաջնորդէ.  
և ո՞ւր, Տէր, ճանաչել զքեզ, հաւատալ քեզ,  
յամենայն սրտէ սիրել զքեզ, սիրել զընկերն  
իբրեւ զանձն, պահել Աւետարանիդ սուրբ  
աւանդ, պահել այն ամէնը, ինչ որ դու պատ-  
ուիրեցիր. և ակնկալել քո հանդերձեալ  
փառաց:

Ահաւասիկ, Տէր, այսչափ են միայն քո  
քաղցր լուծեր և փոքրոգի բեռներ. աւա՛ղ,  
խստապարանոց մարդիկ, գէր ցուլերուն պէս  
գոռող եղջիւրներով զայն թօթափել կուզեն,  
և կամովին կը կրեն աշխարհին ու մամոնային  
տաժանակիր լուծն, որ կը ջախջախէ իրենց  
պարանոց, և որուն տակ ստրկացած կը հեծեն  
զօրհանապաղ և չեն զգար: Մարդիկ՝ մամո-  
նային ագահութեամբ կը ծծեն զարիւն իբրեւ  
անյագ տղրուկ, բնաւ ոչ շատ է, կ'ասեն, և  
ոչ գոհ կը լինին, թէ և բովանդակ երկրին

հող ոսկի դառնայ. բայց նոքա պիտի յագե-  
նան միայն գերեզմանի հողով:

Տէր, դու սպառուէր տուիր և քո Աւետա-  
րանի ձեռագրով երաշխաւորեցիր որ քեզ հա-  
ւատացող արքայութեան որդիքներդ, աշ-  
խարհայոյս հեթանոսաց պէս բազմահոգ չը  
լինին զեղիս ու անառակ կեանք վարելու հա-  
մար. այլ հաւատան սրտով քո նախախնա-  
մող Հօր, որ թռչնոց կերակուրն անգամ չի  
մոռնար. որք ոչ վարուցան ունին և ոչ վաս-  
տակ, և կ'ապրին բնութեան սեղանէն՝ որ լի  
է ամենունակ պարգեւներով:

Բայց մարդիկ, թերահաւատ մարդիկ որք  
առ ոչինչ կը համարին վերնախնամ Հօր տես-  
չութիւնը, անստոյգ ապագային և առօրեայ  
կենաց համար կը տքնին զօրհանապաղ չա-  
րաչար զբաղանօք. և երբ անդն ու անդաս-  
տանը բազմապատկեն, վաստակը ու շահա-  
վաճառութիւնք յաջողին, կը խորհին յայն-  
ժամ շտեմարան ընդարձակել, գանձատուն  
պատրաստել, հաւատալով թէ մարդոյն կեանք  
և վայելքն՝ ընչից մթերքներէն է. Այլ քո  
սրտմտութեան շանթ որչա՞փ արագ է այս



Թերահաւատներու համար, գիշերամիջ պահուն, հոգեպահանջ հրեշտակ մի կը համառօտէ քո դատաստանը և իբրեւ փոշի կը ցրուէ Թերահաւատին մթերած գանձը:

Ո՛չ, ո՛չ, մի՛ խարիք, մարդիկ, տեսէք աշխարհին կեանքը ու դատեցէք. մարդոց ուղիղ կեանք՝ գանձ չէ, ընչից մթերք չէ, մեծութիւն չէ, անկապուտ փառք չէ. թէ այդպէս լինէր, հարկ էր որ մեծագանձ մարդիկ դեռ եւս ասլէին: Սակայն ո՛ր է Սողոմոն, ո՛ր է Կրեսոս, և ո՛ր են աշխարհակալ հարըստութիւնք. որք առաւօտուն յաշխարհ եկին, միջօրէին պահ մի փայլեցան, իրիկուն գերեզման մտին: Հապա ստոյգ կեանք, ըստոյգ մեծութիւն և ստոյգ յաւերժական փառք՝ Յիսուսն է. «Ես եմ, ասէ, ճշմարտութիւն և կեանք. և թէ բանն, զոր խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք»:

Այդպէս է, ո՛վ Տէր, երանի՛ թէ մարդիկ հաւատային քեզ. երանի՛ թէ ընկեր զընկեր չը զրկէր մամոնային համար. հօրը՝ զանաւազն չը կռփէր մամոնային համար, մին յըդփացեալ առատ սեղանին վերայ, միւսն ա-

ւուր պարէնի կարօտ չմնար մամոնային համար, աշխարհ աշխարհի դէմ չի կռուէր մամոնային համար, բռնութիւն չտիրէր, ստըրկութիւն չլինէր մամոնային համար, և Յուդան զքեզ ճմատնէր երեսուն արծաթին համար: Երանի՛ թէ մարդ՝ ազահութիւնն հանէր իւր սրտէն. շոյլութիւնն մեռնէր, զեղխութիւնն պալատականաց կեանքէն բարձուէր, տեսնայիր դու յայնժամ թէ ի՞նչպէս չքաւոր ժողովուրդն եւս լիութեամբ և գոհութեամբ պիտի ապրէր:

Մամոնայ, մամոնայ. դու զմարդիկ իբրիտ ի վաստակ տանջելով կը տանջես, դու մարդոյ ոսկերաց ցեցն ես և զհոգին՝ հոգեծութեան մէջ խարտելով կը մաշես. կապարի նման ծանրանալով՝ հաւատք և կրօն կ'ընկճես քո ծանրաբեռնութեան տակ. մարդիկ տարակուսեալ են. քեզ ծառայելով ծունր դրնեն՝ թէ Աստուծոյ. դու միթէ այս աշխարհին Աստուած՝ իշխան և թագաւորն ես. երկրաւոր արքայութիւն, մարդոց կեանք և երջանկութիւնն ես. ո՛հ, հէք մարդիկ, արդեօք այսպէս հաւատալով քեզ կը հպատակին:

Բայց դու երբեմն ո՞րչափ ոչնչացար մար-



դոց աչքին առաջ, խաչին ոտքը դքեզ փըշ-  
րեց ու մոխիր դարձուց. խաչի թուականէն  
և Գողգոթայի գլխէն զինուորեալ՝ աշխար-  
հուրաց մարդիկ մրցեցան քո դէմ. բիւրաւոր  
հաղարաւոր մարդիկ մերժեցին քո փառք, քո  
անցաւոր վայելքը. վաղեցին գունդագունդ  
դէպ ի մահ. սոսկաց սուր դահճին երբ կը  
տեսնար որ Յիսուսի քաջ հովուին ոչխար-  
ները կամովին ի սպանդ կը վարին, կը մորթ-  
ուին, կը քերթուին, աշխարհ կը ծախեն,  
կեանք կուտան, երկինք կ'առնեն, մամո-  
նայն ամաչելով հրապարակէն ետ կը դառ-  
նար. խաչի մերկամարմին զինուորները զեն-  
ուելով կը յաղթանակեն:

Այլ աւա՛ղ, ով Տէր, մեք յետին ժամա-  
նակիս մէջ քո խաչին դասալիք ու վատա-  
սըրտեալ զինուորներն ենք. խաչէն փախանք՝  
մամոնայն գրկեցինք, քո սէր թողինք, աշ-  
խարհը սիրեցինք, և ասացինք թէ, այս է  
մեր կեանք, մեր արքայութիւն և հանգերձ-  
եալ փառք և կ'ապրինք այնպէս՝ ինչպէս  
կ'ապրէին մարդիկ քո յայտնութենէն յառաջ:  
Եթէ այսպէս, ուրեմն ի՞նչ զանազանութիւն  
կայ անհաւատին և քո հաւատացեալ ծառա-

յին մէջ, յորոց միոյն կորուստ կ'սպառնաս  
և. սակաւ դան, իսկ միւսին բազում դան  
ու հարուած, որ հաւատաց քեզ, ուսաւ և  
իմացաւ քո կամք ու պատուիրանը:

Արդար ես Տէր, քո այս դատաստանը ճըշ-  
մարիտ է. մարդ չի համարձակիր քեզ դէմ  
դատախազ կանգնել, երբ քո իրաւունքը  
վարձ ու հատուցումն ուղիղ կը կշռէ: Ո՛չ ա-  
պաքէն բիւրանգամ պատժապարտ են այն  
հեղզ ու ապիրատ ծառաները՝ որ քո սէր,  
քո խաչի յիշատակ, քո անկշիռ բարերարու-  
թիւնը՝ մամոնային հետը կը փոխանակեն, լոյս  
կը թողուն՝ և հող կը պաշտեն. որոց կրօնքն  
է ազահութիւն, զրկանք, յափշտակութիւն,  
մեծութիւն և գանձ, և այլ ամէն անկայուն  
վայելք, որք հող են, ու հող պէտք է լինին  
բոլոր աշխարհասիրաց յոյս:

Այլ դուք, ո՛վ Աւետարանի հոգւով աղ-  
քատները, խնդացէ՛ք, Յիսուսի երանին ձեզ  
համար է, ձեր յոյսը անմահութեամբ լի է.  
Թող աշխարհ և մամոնայն ձեր թշուառու-  
թեան վերայ խնդան ու սրտմոխին՝ երբ դուք  
ծուներ չէք դնէր սատան Մամոնային, թէեւ



խոստանայ զաշխարհ իւրայնովք պարգեւ տալ, մերժեցէ՛ք, մի հաւատաք այդ ստախօսութեան հօր, դուք այս աշխարհէն պիտի գնայք, ձեր սեպհական հայրենիքը հանդերձեալն է: Զօրացէ՛ք, ոտնհարեցէ՛ք աշխարհի մեծութեան դանձը, զոր թէ շուտ թէ անագան միշտ աշխարհ կը կողոպտէ: Դուք Քրիստոսի ընտրած փոքրիկ հօտն էք, յիշեցէք ձեր քաջ հովուին յորդորը, որ կտակ աւանդեց ձեզ. ձեր դանձը երկինք դնել, ուր աշխարհիս գողերուն և հարստահարիչ գրկողաց ձեռք չի հասնիր: Դուք յերկրի վերայ, յերկինս ապրեցէք. մի վարանիք, թէ հնար չէ հողէ մարմնով այնչափ վերանալ: Հոգին, սիրտ ու հաւատքը բարձրաթռիչ են, այնու վերաթեւեցէք և հաւատացէք յԱստուած. զի օր մի աշխարհին և Մամոնային պատերազմ կը վերջանայ, յաղթանակը ձերն է:



ՆԻԻԹԱՊԱՇՏԲ ՆԱԽԱԽԱՄՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Լո՛ւր երկին և ունկնդի՛ր, երկիր. Մարգարէին պէս ես էլ բողոք կը բառնամ, զձեզ

ի հանդէս կը կոչեմ. տեսէք ու դարմացէք. մարդիկ Աստուծոյ դէմ մարտ կը մղեն, մարդիկ երկնից դէմ նետ կ'արձակեն. այս մեր հողագնդի գաճաճներ, գերեզմանի որդերը, զլուխ ամրարձեալ կ'ապստամբին և կ'ապերախտին բարերար Արարչին դէմ, և չեն ամաչեր, երբ եզն իւր ստացիչը կը ճանչնայ և էչը իւր տիրոջ մաուր:

Ամենակալ հզօր Աստուած, դու կը հայիս ու կը տեսնա՞ս. ո՛վ են այդ ապիրատ անզգամներ, որ զքեզ եւ քո նախախնամութիւնը կ'ուրանան և կը խօսին և կը գրեն այսպէս. թէ «Այս աշխարհին վերայ քո աւրել չի ծագեր, քո անձրեւ չի ցողեր, քո աչքը չի հսկեր և ոչ քո այցելու ոտքը կը չըջի. մարդիկ առանց քեզ կ'ապրին. առանց երեսիդ՝ լոյս կը տեսնան, առանց անձրեւիդ՝ հաց կ'ուտեն, և առանց քո զօրութեան՝ կ'իշխեն. թագաւորները գահերուն վերայ կը բարձրանան և առանց քո ակնարկութեան կը յաղթեն կամ կ'ընկճին. չկայ գերագոյն աթոռ մի, որ կը վարէ զաշխարհ, այլ ամենայն ինչ բնութեան ինքնավար օրինաց դիպուած է. երջանկութիւն, թշուառութիւն,



իշխանութիւն , զօրութիւն , յաղթութիւն ,  
պարտութիւն , կեանք և մահ : »

Այսպէս է , բարձրեալ Տէր , ուրեմն , դու  
չե՞ս որ զբնութիւն և զօրէնս ի միասին կը  
վարես . միթէ առանց քո ձեռին բնութիւն  
իւր օրէնքով ինքնին կը վարի : Մեք կը տես-  
նամք , որ աշխարհիս կարգ և օրէնք առանց  
մարդոց չեն վարիր . և եթէ կայ մարդ , կան  
թագաւորք , կան իշխանք , կան օրէնսդիրք ,  
որ այս փոքրիկ աշխարհագունդ կը կառավա-  
րեն , դու չե՞ս ու չկա՞ն ամենիշխան Տէր ,  
որ տիեզերքին արարիչ և օրէնսդիրն էս . և  
զայն կը վարես քո անհուն իմաստութեամբդ :  
Մարդիկ զքեզ չեն տեսնար և կը կարծեն թէ  
դու չկաս . և միթէ իրաւո՞նք ունի ոտքիս  
տակի մըջիւն երբ չի տեսնար զիս . նա կարծէ  
թէ էս չկամ որ կը կոխեմ ու կձմկեմ զինքն :  
Մարդիկ , էս կը ճանաչեմ զձեզ , դուք չքոտի  
մըջիւն չէք . դուք հանճար ունիք , ձեր կոչումն  
բարձր է , բայց ի՞նչ էք դուք անհուն ան-  
սահման էութեան առաջ . դուք թողլով հա-  
ւատքը՝ աչքով տեսնել կ'ուզէք զայն :

Տէր , քո պետական ավոտը երկինքն է ,

ուր առաջի կայ դարանակալ իմաստութիւ-  
նդդ . Սողոմոն քեզ համար ասաց թէ , թա-  
գաւորք քեզմով կը թագաւորեն , և դու էս  
միայն ահաւոր Աստուած , որ կը քաղես զո-  
գիս բռնաւորաց , և քո փառաց վրէժիւն-  
դիր էս . զայն ոչ Աղեքսանդրին կուտաս ,  
ոչ կեսարին և ոչ Բաբելոնի հպարտին . որ  
արքայական տանեաց վերայ ճեմելով ոգին  
կը բարձրանար ու կը խօսէր՝ « Ես կանգնեցի  
Բաբելոն , էս աշխարհին տէրն եմ : »

Դու զայս տեսար ու լսեցիր , Տէ՛ր , և որ-  
չա՞ր չոտ և արագ վճռեցիր բարձրամտին  
դատաստանը , երկնից բարձրութենէն նայե-  
ցար նետահարեցիր Բաբելոնին հպարտացող  
գոռողը . հզօր դաւաղանէն , արքայական  
գահէն և ի պատուոյ մարդոյն զրկելով՝ հրա-  
մայեցեր որ երթայ արջառներուն հետ խոտ  
ճարակէ , մինչեւ ճանչնայ բարձրելոյն իշխա-  
նութիւնը . թէ դու էս միայն միահեծան  
Տէր , որ աշխարհիս գահերը ոտքիդ տակ  
դրած էս և երբ երկնից դէմ եղջիւր ածեն՝  
դու զայնս ոտնհարելով յանդու՛նդս կը գլորես :

Տէր , թող խօսին քեզ համար՝ թէ դու



չես, որ ամբարտաւանից հատուցումն կը վճարես քո արդար կռուով. եթէ դու չես, հապա ո՛վ էր այն, որ քո օծեալ Կիւրոսին աջ ձեռք բռնելով՝ առաջնորդեց տարաւ մինչեւ ի Բաբելոն. ուր ջախջախել տուաւ այն արբէլիւ բռնաւորին գլուխը, որ յանդգներ էր քո սուրբ տաճարին սպասները պղծել, և քո արդարութեան թաթը յանկարծ երեւելով դահլիճի պատին երեսն՝ երեք բառով միայն չափեց ու կնքեց անարժան թաղակըրին կեանքը, տեսաւ զայն և զարհուրեցաւ. իբրեւ հաւ մի սուրն ի վիզ թրթփաց ոտքիդ տակ ու ահաբեկ մեռաւ սեղանակապուտ ամբարիշտն:

Դու չէի՞ր դարձեալ, որ նոյն Բաբելոնին վերայ արծուապէս իջար բռնեցիր զաշարհաստան Աղէքսանդր, անդէն հանիր քաղեցիր նորա բռնաւոր շունչ և ոգին. որ Յունաստանէն մինչեւ ի Պարսս, ի Հնդկի, ի Բաբելոն աշխարհի պետութիւնները խորտակեց փշրեց երկաթի ժանիքներով. որուն ոտքը լայնածիր աշխարհս չափեւէն յետոյ, եթէ չը մնար այլ եւս տեղի իւր արշաւանաց՝ թերեւս ժպրհէր մտաբերել մինչեւ երկինք արշաւել և

որպէս զհին հպարտն այն ամպերուն վերայ դնել իւր աթոռը:

Թողունք հին աշխարհակալաց հաշիւը և հատուցումն. դու չէի՞ր, որ նոյն իսկ մեր օրերը Պրանսիոյ վերջի դիւցազնին յաղթական արշաւանաց քայլը յետս ընդդէմ մղելով տարիր փակեցիր սուրբ Հեղինէ անձուկ կղզւոյն մէջ. ուր նա եւս մեր յաղթող Արտաշիսին պէս հառաչեց, «Աւա՛ղ փառացս անցաւորի». և այն անպարտելի աննկուն ոգին լքաւ ու ճանչցաւ զինքն թէ յիրաւի՝ Պրանսիոյ բախտն էր երբեմն, պատերազմի փառք, այլ իբրեւ սոսկական զինուոր անմըխիթար մեռաւ իւր միայնութեան մէջ:

Վաթերլոյի դաշտին և սուրբ Հեղինէ կղզւոյն մէջ կալանաւոր Առիւծին դատաստանը վճարեւէն յետոյ՝ դարձար ի Սէտան տեսնալ նաեւ փոքր կորիւնին դատաստանը: Եւ ո՛վ էր այն, վերջի Նաբօլէօն, որ սուրն ի պարանոց ձգելով՝ ինքնին դնաց խոնարհեցաւ Գերմանիոյ յաղթականին առաջ. և դու արդար Աստուած, այսպէս չափեցիր ուխտադրուծ կայսեր հռչակեալ պանծացեալ քա-



ղաքականութիւն, աշխարհ տեսաւ այս և զարմացաւ, թէ քո դատաստանին կշիռը արդարաւոր է :

Աստուած ամենատես, մարդիկ այնպէս կը կարծեն թէ՝ աշխարհիս բան քեզմէ անտես է, և դու երկնից բարձրութենէն միայն իբրեւ զբօսանս կը հայիս երկրիս վերայ, պատերազմի դաշտաց վերայ. քեզ ոչ ինչ փոյթ չէ թէ մարդկութեան ծաղկահասակ նորատունկ աղնիւ սերունդ, անագորոյն հրադինաց բերան անխնայ կը մաշին, մարդիկ բանաւոր քո սպտկերակից՝ ափսոս իբրեւ անպիտան խոտ միահամուռ կը հնձուին, զորս դու մի մի կ'ստեղծես, շունչ և կեանք կը բաշխես. և քո բարեխնամ կամքն է, որ մարդիկ, ողջ մնան, մարդիկ բարգաւաճին, ո՛հ, մարդիկ զիրեար կ'սպառեն սրակոտոր մահով :

Իսկ դուք ո՛վ էք, որ այս ամեն, Աստուծոյ արդարութեան չափերը՝ դիպումաժ կը համարիք, և տիեզերաց գոյութեան համայն հրաշալիքները՝ բնութեան կը վերածէք. ես չգիտեմ թէ՛ ձեր այդ պաշտած բնութեան անունը ի՞նչ է, դուք զայն գերագոյն էակ

և ճարտարապետ կը ձանձնաք, արարուածն՝ Արարչին տեղը դնելով. և պատճառն ի՞նչ է, զի դուք արարուած բնութիւնը կը տեսնաք, որ ձեր ոտքի տակն է ու կը շօշափէք զայն, իսկ Արարիչը չէք տեսնար, արդեօք վասն ա՞յն կ'երկբայիք. և այս իսկ զարմանալի է, երբ դուք կը հաւատաք թէ Եգիպտոսի չորս հազար տարուան հնութեան բուրգերը մարհազար տարուան հնութեան բուրգեր են, ընդէ՞ր ապա կը դժուարիք հաւատալ թէ Մասիսի և Հիմալայի լեռանց բարձրութիւն յօրինող բնութեան ճարտարապետն է և մեք նորա անունն՝ Աստուած կը կոչեմք :

Ինչո՞ւ կը զարհուրիք և խոյս կ'ուտաք այս ահաւոր անունէն, որուն յիմար հեթանոսք յուսալով փրկուեցան և դուք կարծեցեալ իմաստունք, դեռ կը գեղեցիկ երկմոռութեան մէջ. դուք Սուրբ գիրքը Հրէից ազգին հնարած առասպել կը համարիք, և նորա Աստուածասլաշտ հաւատացեալները նախասլաշարուած տգէտ կը կոչէք և միթէ՛ ձեր այդ դատաստանը՝ հին և նոր պաշարուած մտօք չէ՞, Բայց թողէք որ շօշափեմ ձեր ոգին, ձեր միտքը ու նպատակը :



Տէր , դու կը տեսնաս և ես ականջովս լըսեցի այսպիսի մարդոց անուղղայ դատաստանը , որք կը խօսին և կը գրեն . թէ քանի որ մարդիկ զՍատուած կը կոչեն , քանի՛ որ մարդիկ զայն հոգւով կը պաշտեն , քանի որ կրօնք , հաւատք կայ , քանի որ մարդիկ կրօնից պաշտօնեայներուն կ'անսան , քանի որ հանդերձեալ անմահութեան յուսով կը խայտան , աշխարհիս ընկերհաշտական խաղաղութիւն և շինութիւն անհնարին է :

Ասացէ՛ք ուրեմն ի՞նչպէս պէտք է լինի , աշխարհ և մարդիկ անտերունջ անաստուածման , բարձուի՞ն իսպառ այդ յաւիտեանական գաղափարները և Աստուծոյ տիրող անունն՝ աշխարհէն . բարձուի՞ն կրօնք հաւատք մարդոց խղճէն ու սրտէն , բարձուի՞ն յոյս և ակընկալութիւն երկնից հանդերձեալ արքայութեան փառքէն . և մարդոց յոյս մինչեւ ի գերեզման տանել և անմահութիւն մեռուցանել մարդոյն հետ թաղել՞ :

Ահա ձեր միտք և խորհուրդը այս է , դուք այնպէս կը կարծէք , թէ երբ հաւատ-

քը կործանի , աշխարհ կը շինուի և յայնժամ միայն երջանկութիւն կը թափաւորէ :

Ես գիտեմ , և դուք եւս գիտէք , ձեր այս խորհուրդ սիրտ և նպատակ նոր չէ . շատ հին է , կը ճանաչեմ զձեզ , դուք այն երկրաքարչ մարդոց վերջին որդիքներն էք , որոց նկարագիրն ճշգրտապէս կը հանէ մեծն Սողոմոն . դուք եւս ձեր անհաւատ հարց նման դոմոն . դուք եւս ձեր անհաւատ հարց նման կը քարոզէք ու կ'ասէք . « Արդ եկա՛յք վայելեացուք ի բարութիւնս որ կան , և վարեսցուք արարածովքս զբաղեալք իբրեւ ի մանկութեան , պէս պէս գինեօք և անոյշ իւղովք լցցուք , բոլորիւք վարդից պսակեսցուք մինչեւ թառամեալ իցեն . . . զի անցք ստուերի են կեանք մեր և չիք խափան ի վախճանի մարդոյն և այլն » :

Ահաասիկ այս է , ձեր թիւր խորհուրդ և ապաշնորհ բան , արարածոց բարութիւնները վայելել ցյառ և Արարիչը չճանչնալ , գինին խմել առանց գոհութեան և այգւոյ տէր ու մատուռակն արհամարհել , անոյշ ծաղիկելողովք օժանիլ և ծաղիկանց զարդարիչը չփառաւորել . մարդոյն յոյս և բաժին



միայն աշխարհիս վայելք դնել և չհաւատալ թէ գո'յ անմահութիւն, գոյ այլ եւս բաժին մարդոյ յերկինս, մարդն անեղծ է. զի Աստուած զայն յանեղծութիւն հաստատեաց, մարդն Աստուծոյ պատկերակից է, պէտք է իւր սկզբնատպին պէս անմահ մնայ, դուք մի աշխատիք չբացնել զայն և մարդոց հոգեկան կեանքը՝ անասնոց հաւասարել:

Ուրեմն թողէք, որ նոյն Սողոմոնին պէս պարսաւանս դնեմ ձեր չարարուեստ գիտութեան. մոխիր է ձեր սիրտ, ընդունայն է ձեր վայելից յոյս, անարգ կաւ է ձեր կեանք, երբ անաստուած և առանց նախախնամութեան կ'ապրիք. և դուք իսկ էք երկնից Հօր այն չար ու ապաշնորհ զաւակներն, որոց վերայ նա իւր անհուն սիրով կ'ածէ իւր անձրեւ և կը ծագէ իւր համատարած արեւը:

Դաւիթ կը խրատէ, որ ձեզ չը նախանձխմ, զի դուք խոտի նման պիտի ցամբիք վաղվաղակի. այդպէս ձեր թերահաւատութեամբ ապրեցէք ու մեռէք, ձեր յոյս, ձեր կեանքը թող միայն գերեզմանին մէջ դարի. անդր մի՛ անցանէք, ձեզ համար


կեանք չիկայ, ձեր կարճատեւ հաւատք մինչեւ ի հողն է. և դուք պէտք է ծածկուիք գերեզմանական ստուերին տակ, լոյս և անմահութիւն չտեսնաք. ձեր զայթակղութիւն կը մնայ աշխարհիս վերայ, և դուք իշոյ երկայնաքարով մի կը խորասուզիք յանդունդս. այն իսկ է միայն ձեր բաժին ու վիճակ:

Այլ դու, ո'վ մարդասէր Հոգի Աստուած, դու հանձար և գիտութիւն տուիր մարդոյն, որ մարդիկ զքեզ գտնեն. մարդիկ ի խնդրելն զքեզ՝ կը կորուսանեն. և դու ո'ւր կը ծածկուիս, ամենուրեք զօրութիւն, երկնից աստեղատան և տիեզերքին մէջ չե՞ս. չէ տիեզերք քո մէջն է: Այո՛, անհուն ես, անպարունակ ես. նիւթն զքեզ կարող չէ բովանդակել, և տիեզերք քո անբաւութեան մէջ միայն մի նշանախեց կէտ մի է և դու մի շընչով կարող ես տապալել զայն. ինչպէս մի շնչով յոջնչէ ի գոյ ածեր:

Եւ դու, ո'վ երկնից Ամենահայեաց աչք, դու կը տեսնաս և կը գիտես մոլորամիտ մարդոց անել ճանապարհ, որ կը տքնին չարաչար զքեզ աշխարհի գիտութեան մէջ գտնել,



առ ոչինչ համարելով քո լոյս , քո յայտնութիւն , քո շնորհ : Տէր սգեսէր , խնայէ քո վաստակեալ ծառաներուն , քո վճիռ սուրբ լոյսը՝ ճառագայթէ նոցա փակեալ աչքերուն , ինչպէս կը պաղատէր Դաւիթ . որ միայն հաւատով զքեզ գտնեն և անհաւատութեամբ չը ննջեն ի մահ :



### ՅԱՂԹԱՆԱԿ ԶՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ յաւիտենական ճշմարտութիւն , Զօրաբարէլ քո ճշմարիտ վկայն է , որ համարձակեցաւ բարձրաբարառ քարոզել ինքնակալ Դարեհին աւագածողով ստեղծին մէջ . վկայեց քեզ համար թէ՛ յամենայնի յաղթող ես . և ստացաւ իւր մրցանակն :

Ո՛վ ճշմարտութիւն , ասաց Զօրաբարէլ . դու ամէն բանէն զօրաւոր ես , բովանդակ երկիր քեզ կ'ապաւինի . երկինք և երկիր միանգամայն կ'օրհնեն զճշմարտութիւն , մարդկային ամէն գործքեր քո առաջն են , թէ արդար թէ ապիրատ . դու անխառն լոյս և

արդարութիւն ես , անիրաւութիւնը բնաւ քեզ հետ մասնակցութիւն չունի :

Ո՛վ միակ ճշմարտութիւն , դու միայն ես արդար և սուրբ . մարդկան որդիքները սուտ և անիրաւ են , նոցա ճանապարհ ճշմարտութենէն խոտորած է , նոքա իրենց անիրաւութեան մէջ պիտի կորնչին . իսկ դու կաս ու կը մնաս յաւիտեան , քո իշխանութիւն մշտնջենաւոր է , քո դէմ ապստամբող և հպարտացող գոռող հոգիները զամէնն եւս ի հող կը դնես և քո հզօր յաղթանակ կը կանգնես նոցա գերեզմաններուն վերայ :

Ո՛վ անըմբռնելի ճշմարտութիւն , աշխարհիս խմաստութիւն զքեզ ըմբռնել կ'ուզէ և դու կը փախչիս . նա կը վազէ քու ետեւէդ և դու սրավար կը հեռանաս , նա երբ մտաքով կը վերանայ՝ դու առաւել եւս կը բարձրանաս . և մերթ եւս սյնչափ կը թագչիս և կը ծածկուիս պանծացող իմաստնոց տեսութենէն , մինչև կուրանան և կը մտաբերեն տարակուսելով թէ դու չը կաս : Նոքա կը հաւատան թէ աշխարհիս պալատներու մէջ թագաւորներ կան և կը գահակալեն . իսկ քո



անհուն տիեզերք թափուր է, ոչ գահ ունի, ոչ թագաւոր, ոչ կառավար:

Ո՛վ անյայտ և յայտնեալ ճշմարտութիւն, քո ծառայն, Մովսէս, Գորէբ լեռան գլուխ հըրավառ մորենույն մէջ տեսաւ. Բեթլէհէմի հովիւները զքեզ մարին մէջ տեսան, տեղ մի իբրեւ հուր և լոյս կը բոցավառէիր. տեղ մի իբրեւ նորածին մանուկ խանձարուրին մէջ զքեզ փաթթեց քո մայր, լոյս էիր և թանձրացար. որպէս զի մարդիկ տեսնան ու շօշափեն զքեզ, և ո՛վ կարաց նախ շօշափել զքեզ, միայն կոշտ հովիւներուն ձեռք. և ո՞ւր յայտնեցար դու նախ, դարձեալ պարզամիտ գեղջուկներուն:

Սորա համար ահա, դու ո՛վ յայտնեալ ճշմարտութիւն, շնորհակալութիւն կը մատուցանէիր երկնից. « Հայր, գոհանամ զքէն, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց և յայտնեցեր տղայոց: Այո՛, Հայր, այսպէ՛ս հաճոյ եղեւ առաջի քո: »

Ո՛վ անպարտ ճշմարտութիւն, իբրեւ պարտաւոր գնացիր կացիր, Պիղատոսին առաջ,

կոյր և ապուշ դատաւորն գիտես թէ ճշմարտութեան անունը երբէք լսած չէր, կը հարցանէր և իմանալ կ'ուզէր քեզմէ թէ ի՞նչ է ճշմարտութիւն: Ձգիտեմ, ո՛վ հեղաժառանգ ճշմարտութիւն, թէ ի՞նչ խորհրդով թագուցիր զքեզ և չը ճառեցիր քո ճշմարտութենէն. դու՝ որ Սեւտարանաւդ կը բարձրախօսէիր, « Թէ ոչ կարէ քաղաք թագչիւ, որ ի վերայ լերինն կայցէ: » Եւ դու լոյսդ աշխարհի, զքեզ մարմնոյդ գրուանին տակ դըրիր, որ Պիղատոս չի տեսնա՞յ:

Ո՛վ ճշմարտութիւն, դատաստանի համար եկիր այս աշխարհ, բայց աշխարհի դատաւորն զքեզ խաչել տուաւ. հզօր Արդարութիւն Հօր որ ընդ քեզ և քո աթոռակիցն էր, նա թոյլ տուաւ որ դատապարտուիս. որպէս զի քո իրաւունքը գերեզմանէն ի լոյս բերելով՝ քո յաղթանակն առաւել եւս փառաւոր կացուցանէ աշխարհին առաջ:

Ո՛վ ահաւոր ճշմարտութիւն, արդարութեան սուրը մէջքդ կապած շարունակ կը շրջիս աշխարհիս վերայ դատաստաններ կը տեսնաս. դու ճիշդ նոյն չափով կը չափես



զմարդիկ, ինչպէս նոքա իրենց եղբայրներ  
կը չափեն. զի քո օրինադիրքն Աւետարանն  
է, և դու կանխաւ վճռադրեր ես թէ՛ « Ո-  
րով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: »

Այլ ո՞վ կարէ չափել քո չափն ու կշիռը,  
դու մերթ ասկիւրտներն արագապէս կը չա-  
փես, մերթ եւս երկայնմտելով յապաշխա-  
րութիւն կը կոչես. մերթ զրկեալներուն ի-  
րաւունքը կը պաշտպանես և զրկիչներուն  
պատուհաս կուտաս, մերթ եւս այնչափ կը  
թողուս և կը մոռնաս, որ քո ծառայները  
մինչեւ ի գերեզման զրկուին. և ո՞վ կը հա-  
ւատայ քեզ թէ՛ անդր քան զգերեզմանն դու  
դարձեալ դատաստան ունիս և կը հատու-  
ցանես արդարոյն վարձք, և ամբարշտին՝  
պատիժը:

Ո՞վ ճշմարտութիւն, քո աչք ամենատես  
է, քո լոյս արեւու լուսէն եօթնպատիկ պայ-  
ծառ է. աշխարհիս խաւարագործ մարդիկ  
քո լոյս չեն սիրեր, միշտ մթան մէջ դործել  
կ'ուզեն և դու զամէն ի լոյս կը հանես. եթէ  
անիրաւ դատաւորները դուռը քո դէմ փա-  
կեն՝ հրապարակին մէջ կը բողոքես. կը ներ-

չնչես յանկարծ մանուկ Դանիէլի ոգւոյն, որ  
ի մահ դատապարտուած անմեղ Շուշանին  
փաստաբան կանգնի և զանպարտ ոգին ա-  
զատէ չարածեր մատնիչներէն:

Ո՞վ ազատարար ճշմարտութիւն, դու Դա-  
նիէլի պաշտած միակ Աստուածն ես. նա քեզ-  
մով սպառազինեցաւ և մերկապարանոց խայ-  
տառակեց Բարիլոնի քուրմերուն զաղտնա-  
ծածուկ հնարքները, քո զօրութեամբ պայ-  
թեցուց ահագին վիշապն: Քո հաւատարիմ  
ծառային դէմ քանիցս անգամ ոխացան օ-  
ձապաշտ Բարեւաքիք և բռնադատեցին թա-  
գաւորը, որ քո ճշմարտութեան Զինուորը  
առիւծուց դուրը ձգեն. և դու անդէն սաս-  
տեցիր քաղցած ու կատղած առիւծներուն.  
որ փոխանակ փողոտելու՝ ընտանեբար քրծ-  
նելով քո ծառային ոտքը լիզեն:

Ով ճշմարտութիւն, քանի հզօր պաշտպան  
ես քո արդար ծառայներուն, որ զքեզ ճշ-  
մարտութեամբ կը պաշտեն: Դու մերթ քո  
կտրիճ ըմբիշները ստութեան դէմ ի հանդէս  
կը հանես, ինչպէս հանիր քո արի նահատակն  
Յովբ. թոյլ տուիր որ նախանձոտ սատան չա-



բաշար հարուածներով խոշտանդէ քո առաքինի ծառայն և Օստերին թագաւորը իւր գահէն հանելով՝ ի փողոց աղբիւսին վերայ դնէ . ուր դու ամպերուն վերայ աթոռդ դրնելով հանդիսատես կը լինէիր . թէ ի՞նչպէս քո վիրալից նահատակն կը մրցէր , մի կողմէն փորձիչ բանասարկուն դէմ , և միւս կողմէն չարեաց մխիթարիչ բարեկամներուն դէմ . որք զարդար հոգին մեղապարտ կը կարծէին և դու ամպէն ի վերուստ որոտալով , իրաւունքը՝ ծառային տուիր և հրամայեցիր , որ դատիչ բարեկամները իրենց մեղքը՝ նորա միջնորդութեամբ և զոհով քաւեն :

Այսպէս տեսար դու քո արդար ծառային դատաստանը . որով տարաւ նա իւր յաղթանակը և ամօթահար կորացաւ նախանձոտ ախոյեանին սեւադրոշմ ճակատ :

Ո՛վ ճշմարտութիւն , քանի՞ անաչառ ես , զի դու քո ընտրեալ սիրելիներդ անգամ խըստութեամբ կը դատիս : Ինչպէ՞ս արդար և ուղիղ տեսար քո օծեալ Դաւիթին և Ուրիա Քետացւոյն դատաստանն . ապտամբ որդիին յարուցիր նորա դէմ և թոյլ տուիր որ ար-

քայական տանեաց վերայ կատարուի այն սոսկալի եղեւն , զոր քո արդարութիւնը հաւասար չափեց հօր ու որդւոյն մէջ . թոյլ տուաւ որ Արիստողոմ հալածէ իւր հայրը , Դաւիթ փախչի , Սեմէին անիծէ , բայց և անդէն թողիր Դաւիթը՝ դարձար ապիրատ որդւոյն դատաստանը տեսնալ . վարելով զհայրահալածիչն տարիր հասուցիր խիտ անտառին մէջ . ուր ոսկեթեւ վարսերէն կախելով թողիր այնպէս , որ օդին մէջ երեւայ , այն որ իւր հօր Դաւթի աթոռը նստիլ կը մտաբերէր :

Սոյն օրինակ դատեցիր և չարախորհուրդն Աքիթորէլ , որ չոգաւ և իւրովի խեղդեց զինքն չուանով , երբ իւր ամէն խորհուրդները վրիպելով ի դերեւ ելան . որպէս զի քո առաջ չալարծենայ խորհրդականն ի խորհուրդս իւր :

Ո՛վ ամենիշխան ճշմարտութիւն , դու ամենուրեք կը տիրես , ո՛վ կը ժպրհի փախչիլ քո երեսէն : Դաւիթ վարանելով կը գոչէր , թէ երկինքն ելնեմ՝ դու անդ ես , թէ ի դժոխս իջնամ՝ անդ աւելի մօտ ես : Սնդա-



դար կը շրջիս ընդ ծով ընդ ցամաք, և ուր հասնիս կը դնես քո դատաւական ակտը: Թէ աշխարհիս պալատները գլքեզ հալածեն, թէ բռնաւորներ քո դէմ սուր հանեն, թէ դատաւորներ քո ձայն չի լսեն, կ'երթաս գլքեզ ընդունող քո ծառայներուն տունը կ'օթեւանիս և քո հանգիստ կը գտնես: Սորա համար Խաչդ և Աւետարանդ գրկելով՝ անհանգիստ կը շրջիր Սաղիմայ երկրին մէջ և կը գանգատէիր թէ. Աղուէսներ և Թռչուններ դադար ունին և դու՝ գլուխ դնելու տեղ չունիս:

Ո՛վ հալածեալ ճշմարտութիւն, ստոյգ և ճշմարիտ է քո բան, մեր աշխարհ՝ սուտ և խաբեբայ աղուէսներով լի է. ամենուրեք որջացած են, դարանամուտ կը լինին՝ քո հաւեր և միամիտ աղաւնիներդ խեղդելու համար: Վասն այն իսկ քո ծառայն Դաւիթ, որ զարթ և զառիւծ կը պատառէր, տեսաւ օր մի՝ որ կեղծաւոր աղուէսներ զինքը շրջապատեր են՝ պաղատեց առ քեզ. «Ասրեցո՛ զիս, Տէր, զի նուաղեաց սուրբ. նուաղեցան ճշմարտութիւնք յորդեոց ի մարդկանէ. » և թէ՛ «Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. չրթամբք նենդաւորօք...:»

Ո՛վ անկեղծ և անպատրուակ ճշմարտութիւն, աշխարհիս կեղծաւորներ, դստաց ու փարիսեցւոց մնացորդ ժանտապտուղ զաւակներ, որք առ երեւոյթ արտաքուստ որպէս բռնալ գերեզման ցոյց կուտան. թէ իրենք ճշմարտութեան պաշտօնեայ են, ճշմարտութեանդ անունով կը պարծին, ճշմարտութեանդ անունով եկեղեցւոյ վերայ կը տիրապետեն, հովիւ կը կոչեն զիրենք և քո միամիտ գառները կը յախշտակեն. դու ճանչցար զիրենք և շօշափեցիր նոցա ոգին՝ տեսար, որ ի ներքուստ լի էին յախշտակութեամբ և նենդութեամբ:

Արդեօք սոքա՞ են այն անիրաւութեան մշակներն, որոց դէմ քո փառաց արքայու. թեան դուռը կը փակես, և ի ներքուստ պատասխան կուտաս, ի բա՛ց կացէք, ի բա՛ց, ո՛վ անիրաւութեան մշակներ, ես գձեզ չեմ ճանաչեր: Եւ նոքա կ'ասլին անդէն քո այս դատաստանին վերայ, յուշ կը բերեն քեզ, իրեւ թէ դու կը մոռանաս նոցա առաքելութեան ու մեծամեծ գործոց վարձատրութիւնը. և ակնկալեալ արքայութենէդ գրկելով՝ վարձահատ կ'առնես զիրենք:



Վանի<sup>օ</sup> անտառի<sup>օ</sup> Են կեղծաւորներ, ո՛վ ճշմարտութիւն, երկրիս մէջ կեղծաւորելով՝ երկնից մէջ Եւս կեղծաւորել կ'ուզեն քո անաչառ արթուն տառք. ուստի բողոք բռնաւով՝ կ'ասեն. «Տէ՛ր, դու զմեզ չե՞ս ճանաչեր, որ քո տառք կերանք ու խմեցինք, քո անուանով մարդարէացանք, քո անունով դեւեր հանինք. քո անունով առաքեալ եղանք. Աւետարանդ քարոզեցինք, քո անունով քո հաւատացեալ հօտին հովիւ եղանք, ոչխարներդ ու դառներդ արածեցինք, և քո անունով այլ բազմապատիկ հրաշքներ գործեցինք աշխարհին վերայ. ժողովուրդն զմեզ հայր կոչեց, սուրբ կոչեց, և քո հօգին ձեռնադրելով զմեզ՝ պաշտօնեայ կոչեց, եպիսկոպոս և տեսուչ կոչեց, վարդապետ կոչեց, քահանայ կոչեց, սարկաւազ կոչեց և տաճարիդ դռնապան կոչեց. և դու իսկ՝ լոյս և ա՛ղ անուանեցիր. ո՛հ, այժմիկ պիտի դատաւարտուինք քո արդար դատաստանին առաջ և ի դերե՞ւ պիտի երթան մեր խաչակրութեան այնչափ անձնանուիրութեան զոհերը:»

Ո՛վ իրաւադատ ճշմարտութիւն, երբ դու անիրաւ և կեղծաւոր մշակներուն դատաս-

տանն այսպէս կը տեսնաս և քո դուռը կը ժախես նոցա դէմը, անշուշտ հաւատարիմ մշակներուդ, աղնիւ ծառայներուդ վարձքը՝ բիւրապատիկ կը վճարես. նոքա՝ որ զքեզ սիրեցին և քո բանը պահեցին. նոքա, որ ամէն բան թողին և զքեզ պաշտեցին. նոքա, որ քո շնորհաց տաղանդներն՝ բազմապատիկ շահելով աճեցուցին. նոքա, որ սնախառութիւնը սանհարելով՝ Աւետարանիդ հեղու-թեան դասերը օրինակով ուսուցին. նոքա՝ որ ուղիղ հասկցան քո գերագոյն պատուէրը՝ թէ «Դուք ամենեքին հաւատար եղբայր եք.» և երբէք չմտաբերեցին խաղաղ ու միամիտ որդիքներդ վրդովել, մի հօտիդ ու վարա-որդիքներդ իրարմէ բաժանել, հերետի-խիդ գառները իրարմէ բաժանել, կոչելով: Եւ կոս, հերձուածող և չարախառ կոչելով: Եւ մարիտ Վարդապետ Յիսուս, քանի՞ ցասամբ ու խօտութեամբ պիտի դատես այն տիրաւեւող վարձկան հովիւները, որ քո հօտը՝ բաժին բաժին երկպառակեցին:

Ո՛վ ճշմարտութիւն, թող մարդիկ և սրտութեան պաշտօնեայներն այնպէս կարծեն թէ զքեզ կը հալածեն, և կամ քո ծառայ-



ները կը չարչարեն. որոց պատուէր տուիր, որ չարին դէմը չհակառակին. եթէ մի քաղաքէն հալածեն՝ ի միւս քաղաք փախչին. և միթէ աշխարհ զքեզ յաւիտեան պիտի վանէ՞, դու, ո՛վ խաչեալ ճմարտութիւն, ո՞չ ապաքէն խրախոյս տուիր խաչիդ դրօշակին տակ զինւորող ծառայներուդ. « Գաջալերացարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի: » Ի՞նչ է յաղթութիւն և ի՞նչ է քո փախուստ, չգիտեմք:

Ո՛վ անընկճելի ճմարտութիւն, գիտեմք և կը խոստովանիմք. դու անյաղթ ես. այնպէս կը թուիս թէ նիւոն կը լինիս և աշխարհ հետ քեզ կը խաղայ. ինչպէս խաղաց քո մարտիրոս նահատակներուն հետ. սրով ու հրով զրաւեց նոցա կեանքը. աշխարհ իւր անըզգամներով այնպէս համարեց թէ՝ առ յիմարութեան մեռան ու կորեան. սակայն երկնից մէջ նոցա յոյսը լի է անմահութեամբ, և երկրիս վերայ նոցա յիշատակ օրհնեալ և փառաւորեալ է: Եւ ո՞րործեց այս մեծ հրաշք, դու միայն, ո՛վ յաղթական ճմարտութիւն:

Ո՛վ արդար և ազատ ճմարտութիւն, գիտե՞ս, խեղակորոյս մարդիկ մեռուցանելն յաղ-

թութիւն կը համարին, բռնանալ տիրապետել՝ բաղդի տուրք կը համարին. մարդոյն ազատ պարանոցը ստրկութեան լծով կորացուցանել՝ իրաւունք կը համարին. զաղքատն ու զանաւազ կռիւհարել՝ զօրութիւն կը համարին. բազմաց վերայ բարձրանալ պերճանալ՝ թագաւորութիւն կը համարին. միով բանիւ միշտ դուն գործելով ճմարտութիւնդ նուաճել՝ փառք և յաղթութիւն կը համարին:

Այլ դու, ո՛վ անմահ ճմարտութիւն, քո հաշիւդ այսպէս չէ. ով որ ճմարտութեանդ համար մեռնի՝ դու զայն Աստուծոյ պաշտօն կը համարիս. ով որ աշխարհիս ստրկութեան կը լուծը կը կրէ՝ դու զայն Աւետարանովդ ազատորդի կը համարիս. ով որ կռիւի կը զատորդի կը համարիս. ով որ կռիւի հարստահարիչներուն ձեռքէն. դու ձուլուի հարստահարիչներուն ձեռքէն. հոգւայն ազատ ու երջանիկ կը համարիս. հոգւով աղքատներ, սղաւորները, հալածեալներն առ հասարակ կ'երանես. ոչինչ փոյթներն առ հասարհ՝ այս քո հաշուիդ վեջէ քեզ թէ աշխարհ՝ այս քո հաշուիդ մարդ կը խնդայ, երբ դու՝ հակառակ մարդոյն կրից ու ցանկութեան, մարդոց երանութիւնը՝ զրկման, թշուառութեան և մահուան մէջ կը դնես:




Ահաւասիկ այս է, ո՛վ անքնին ճշմարտութիւն. որ աշխարհ զքեզ կ'ատէ, քո միտք և քո լեզուն չի հասկնար: Այլ զքեզ սիրող և պաշտող ծառայներն շատ են, թող աշխարհ իւր թերահաւատներով՝ փրկստօյն իւր քրջով՝ բնագէտն իւր փորձով տքնի ու ճգնի չքացուցանել քո զօրութիւն. քո զինուորեալ ծառայերդ մինչեւ ցմահ կը մրցին, և քո Աւետարանդ բաւական է այն ամէն յամառ փրկստօյնից կարծիքները նուաճել ու ցրել. մանաւանդ այն վերջի պահուն, մինչ կը ցնդի նոցա գլխոյն ուղեղը, դրող մատուռները կը չորնան, աստեղագէտ աչկունք դէպի հող կը յառին, կորովի մտաց լոյսը՝ մահուան ստուերին տակ կը նսեմանայ. և դու յայնժամ կուգաս ու կը քաղես նորա ոգին, կը փշրի հողակերտ անօթն. փրկստօյն հող կը դառնայ, դու լոյս կը մնաս. փրկստօյն կը մեռնի, իսկ դու անմահ և անմահութիւն ես, փրկստօյն ամի մի հողին մէջ յաւիտեան կը լռէ, կը դադարի և կը խոնարհի իւր հսկարտ գիտութեան. այլ դու կենդանի և յաւիտենական իմաստութիւն ես. քո գիտութիւն անչափ անսահման ուղիւսնոս է և երբէք չես սպառիր:

Այլ եւս բաւ է: Աւարտեմ քո յաղթական ճառը, ո՛վ յաւիտենական ճշմարտութիւն, ես որ Աւետարանիդ ճշմարտութեան մի հէք պաշտօնեայն եմ՝ կը պաղատիմ քեզ, քո սիրով և լուսով զինուորէ հոգիս, ես մանուկ էի դեռ՝ ճշմարտութեանդ յուսացայ. և արդ նոյն յուսով ճշմարտութեանդ կ'ապաւնիմ. և երբ ճշմարտութիւնդ ինձ օգնական կանչեմ, ես էլ Ղաւթին պէս վստահաբար կը գոչեմ. «Յոյց ինձ ճանապարհ, յոր և դնացից. զի առ քեզ տէր համարձիգանձն իմ»: Յոյց ինձ նաեւ որ քո ճշմարտութեան ճանապարհն ընտրեմ և քո իրաւունքը յաւիտեան չմոռնամ:

Ա. Ի Ա Ր Տ

Արարչի Աստուծոյ  
Հոգւոյ ար Գլխով  
25 յուշ. Կարի 1927  
Ա. Ի Ա Ր Տ





ԴՆԵՄԲ աստ իբրեւ կնիք եւ պսակ ԽԱԶԻ  
ՃԱՌԻՍ , ՇՆՈՐՀԱԼԻՈՅՏ մի տաղերգ որ  
երգի վերջի Աւագ Ուրբաթուն :

ԱՆԵՂ Որդին Հօր Միածին բազկատարած  
Այսօր եկաց 'ի յատենին մեղաւորաց :  
Բարձեալ մարմնով 'ի խաչն անճառ խո-  
նարհութեամբ ,  
Բերեալ բազկաւ զհեռացեալ ազգս որդւոց  
մարդկան :  
Գառն անարատ 'ի սպանդ ածեալ պա-  
տարադի ,  
Գայ հաշտութեամբ Հօր 'ի բառնալ զմեզս  
աշխարհի :  
Դասապետ եղեն դրախտքն առ Պիղատոս ,  
Դատատանաւ բառնալ 'ի խաչ բողոքէին :  
Եկըն եհաս վախճան մահու նախաս-  
տեղծին ,  
Եւ ցուրտ և սարդ օր մի յայտնի տեառն  
Աստուծոյ :  
Զէլի էլին Հօր գլխութեանց տայր 'ի  
խաչին ,  
Զհաշտութիւն Հօր խաչահանուացն աղօ-  
թելով :



Էնն էից անպարագիրն յաւիտենից  
 Երեւեցաւ մեզ 'ի վախճան ժամանակիս :  
 Ընդ մեզ Աստուած յայտնեալ՝ բարձեալ  
 մարմնով 'ի խաչ ,  
 Ընդդէմ լուսոյ արեգականնն կնքելով :  
 Թողեալ լըբաւ լոյսն 'ի ծոցոյ արեգականնն ,  
 Թագոյց յինքեան ըզճառագայթս 'ի մէ-  
 ջօրեայն :  
 Ժամն ոչ տիւ էր և ոչ գիշեր 'ստ մար-  
 գարէին .  
 Ժամանեալ գայ տէր զօրութեանց 'ի պա-  
 տերապմ :  
 Իշխանութեամբ զհոգին առ Հայր ա-  
 ւանդեւով ,  
 Ինքն 'ի հանդէս մարտի իջեալ ընդդէմ  
 մահու :  
 Լըւան իշխանք շարին , պակեան ահիւ  
 մեծաւ .  
 Լըւեալ մահու և դըժոխոց սասանեցան :  
 Խոր խաւարին սաստէր Յիսուս լուսով  
 խաչին ,  
 Խընդիր առնէր իւր ծառայիցն անդ դե-  
 րեւոյ .  
 Մանեաւ Ագամ զնըչան գալոյն տեառն  
 'ի դըժոխս ,  
 Մանր ամօթով կայր հիացեալ երկիւղագին :

Կարկառ նմա Յիսուս ըզճեռս իւր բե-  
 ւեռեալ .  
 Կոչէ ձեռամբ , քաջալերէր . մի՛ երկընչի :  
 Հայեաց 'ի ձեռս յոտս և 'ի կողս՝ որ վա-  
 սըն քո ,  
 Հայեաց 'ի գլուխս բարձեալ զանէծս 'ի  
 փշոց երկրէ :  
 Չաղկ եղեգան հարին 'ի գլուխ իմ մեղաւորք :  
 Չաղեալ ապտակ և թուք 'ի ծնօտս ինձ  
 մատուցին :  
 Ղեղի ետուն ինձ կերակուր ընդ քացախոյ ,  
 Ղեղւոյ մեղաց քոց փոխանակ որ 'ի դը-  
 րախտին :  
 Ճանապարհաւ մահու ընդ քեզ հետեւեցի ,  
 Ճանապարհիս կենաց ընդ իս եկ յարու-  
 թեամբ :  
 Մաքուր հոգիք սըրբոց , և ձեզ մեծ ա-  
 ւետիս .  
 Մատիք տեսէք մարմնով եկեալ ում ցան-  
 կայիք .  
 Յառաջագոյն գուշակելով զիմ ըզգալուստ .  
 Յայս ահագին խոր խաւարին՝ ուր էք  
 կապեալ :  
 Նովին մարմնով , զոր 'ի Առսէն եմ ըզ-  
 գեցեալ :  
 Նախ 'ի դժոխս իջի փըրկեւ ըզկորուսեալսդ :



ՇՆՈՐՀՕՐ Սըրբոյ Հոգւոյն լըցեալ եղեն  
 սուրբ մարգարէքն ,  
 Շարժեալ 'ի նմին ժամու մեծ գոհութիւն  
 մատուցանեն .  
 Որ ընդ Հօր ես յէութեան և 'ի յաթոռ  
 փառաց նըստիս ,  
 Որ իջեր զմեզ փըրկեցեր արարչական քո  
 գըթութեամբդ .  
 Ձիւթին հայել 'ի քեզ հոյլք երամիցըն  
 Սրովբէից ,  
 Չարաչար նախատանօք լցեալ եղեր 'ի  
 յատենի :  
 Պարակից եղեալ վերնոցըն , գոչեացուք  
 արտասուելով .  
 Պատուական արեամբըդ քոյ փրկեա ըզ-  
 գերեալքս 'ի թընամւոյն .  
 Ձրոյդ կենաց փափագեցաք , ըզմեզ արքո  
 ըզճարաւեալքս .  
 Ձրով 'ւարեամբդ , որ 'ի կողէդ , ըզմեզ  
 լըւա 'ի հնութենէ :

\* \* \* \* \*



|                                                      |      |
|------------------------------------------------------|------|
| Գլխ-                                                 | Երեւ |
| Ա . Սիօնի վերնատուն և Զատկական<br>Գառն . . . . .     | 1    |
| Բ . Յիսուս ի Գեթսեմանի Ձորն . . .                    | 21   |
| Գ . Յիսուս առաջի Դատաւորաց . . .                     | 27   |
| Դ . Յիսուս ի Ճանապարհս խաչակրու-<br>թեան . . . . .   | 34   |
| Ե . Յիսուս ի Բեթեղայ Սար . . . . .                   | 36   |
| Զ . Յիսուս անօգնական թողեալ . . .                    | 46   |
| Է . Յիսուս ի Գերեզման Մահու . . .                    | 50   |
| Ը . Յիսուս ի ներքին Բանտն Սանդա-<br>րամտին . . . . . | 60   |
| Թ . Յիսուսի Յարութիւն և Յաղթանակ<br>Խաչին . . . . .  | 64   |
| Ժ . Յիսուս ի Լեառն Ձիթենեաց . . .                    | 76   |



|                                     |     |
|-------------------------------------|-----|
| ԺԱ. Հանդէս Աշխարհամարտ . - Աշխարհ   |     |
| Յիսուսին դէմ . . . . .              | 87  |
| ԺԲ. Մամոնայն Աստուծոյ դէմ . . . . . | 101 |
| ԺԳ. Նիւթաղաչոք Նախախնամութեան       |     |
| դէմ. . . . .                        | 110 |
| ԺԴ. Յաղթանակ Ճշմարտութեան . . . . . | 122 |





50

ՀՀ Ազգային գրադարան



NL0685784

49

ՀՀ Ազգային գրադարան



NL0685783



